CITY CLERK
CITY OF LOS ANGELES
FOUNDED 1781
ELECTION DIVISION

# ՔՎԵԱՐԿՈՂԻ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Կազմող՝ HOLLY L. WOLCOTT, Քաղաքի գործավար

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## ԵՐԵՔՇԱԲԹԻ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2024

clerk.lacity.gov/elections

ARMENIAN

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵՔ 1-888-873-1000 ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՈՎ:

**Los Angeles-ի Քաղաքապետարանը տրամադրում է քվեարկողի տեղեկություններ անգլերեն, ինչպես նաև հետևյալ լեզուներով՝**

**Այս բրոշյուրի հայերեն օրինակն ստանալու համար զանգահարեք 1-800-994-VOTE (8683) հեռախոսահամարով:**

---

要索取本手冊的中文版，
請致電 **1-800-994-VOTE (8683)**

---

برای تهیه‌ی نسخه‌ای از این جزوه به زبان فارسی، با شماره تلفن
تماس بگیرید **1-800-994-VOTE (8683)**

---

हिन्दी में इस पैम्फलेट की प्रति प्राप्त करने के लिए,
**1-800-994-VOTE (8683)** पर फोन करें

---

このパンフレットの日本語版をご希望の方は、
**1-800-994-VOTE (8683)**までお電話ください。

---

ដើម្បីទទួលបានឯកសារថតចម្លងមួយច្បាប់ពីកូនសៀវភៅនេះជាភាសាខ្មែរ
សូមហៅទូរស័ព្ទលេខ **1-800-994-VOTE (8683)**

---

이 팸플릿을 한국어로 원하시면 다음 전화번호로
연락하십시오. **1-800-994-VOTE (8683)**

---

**Для получения копии данной брошюры на русском языке позвоните по номеру 1-800-994-VOTE (8683).**

---

**Para obtener una copia de este folleto en español,**
**llame al 1-800-994-VOTE (8683)**

---

**Para makakuha ng kopya ng pamplet na ito sa Tagalog,**
**tumawag sa 1-800-994-VOTE (8683)**

---

**เพื่อขอสำเนาจุลสารนี้ในภาษาไทย โปรดโทรศัพท์ติดต่อที่หมายเลข**
**1-800-994-VOTE (8683)**

---

**Muốn có một tập sách này bằng tiếng Việt, hãy gọi số**
**1-800-994-VOTE (8683)**

# Բովանդակություն


Էջ

**Քվեաթերթիկի ամփոփում. . . . . 3-8**

**Քվեաթերթիկի օրինագիծ, պնդումներ և տեքստ**

Կանոնադրության փոփոխություն DD . . . . . **9**

Կանոնադրության փոփոխություն LL . . . . . **27**

Կանոնադրության փոփոխություն HH . . . . . **44**

Կանոնադրության փոփոխություն II . . . . . **53**

Կանոնադրության փոփոխություն ER . . . . . **66**

Կանոնադրության փոփոխություն FF . . . . . **76**


## ՔՎԵԱՐԿՈՂԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Los Angeles վարչաշրջանի Գրանցող-Արձանագրություն պահող/ վարչաշրջանի քարտուղարը հանդիսանում է Los Angeles քաղաքի քաղաքային ընտրությունների ադմինիստրատորը։

Այս գրքույկը միայն պարունակում է 2024 թ. նոյեմբերի 5-ին կայանալիք Ընդհանուր քաղաքային ընտրությունների՝ քաղաքի վերաբերյալ քվեաթերթիկում առաջադրված օրենսդրական նախագծերը։

Ընտրությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար, ինչպես օրինակ քվեարկության կենտրոնների տեղակայումը, խնդրում ենք կապվել LA վարչաշրջանի հետ՝ (800) 815-2666 հեռախոսահամարով կամ այցելել www.lavote.gov կայքէջը։

Հաջորդ 6 էջերը պարունակում են Քաղաքի՝ քվեարկման ենթակա օրենսդրական նախագծերի պարզեցված տարբերակը: Յուրաքանչյուր օրենսդրական նախագծի լրիվ տեքստն, այլ տեղեկությունների հետ մեկտեղ, տպված է Քվեաթերթիկի ամփոփումից հետո (Տե՛ս Բովանդակություն էջը):

**ԱՆՎԱՆՈՒՄԸ.**
ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ LOS ANGELES ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ:

**ԽՆԴԻՐԸ.**
Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ հիմնելու համար շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ Los Angeles քաղաքում վերստին գծելու խորհրդի շրջանի սահմանները:

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.**
Քաղաքի Կանոնադրությունը ներկայումս պահանջում է, որ խորհրդի շրջանի սահմանները վերանայվեն յուրաքանչյուր տասը տարին մեկ խորհրդատվական հանձնաժողովի կողմից, որը Քաղաքի խորհրդին խորհուրդ է տալիս փոխել շրջանի սահմանները: Շրջանի սահմանների մասին վերջնական որոշումը կայացնում են խորհուրդը և Քաղաքապետը: Քաղաքը առաջարկել է ստեղծել շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով, որը կքննարկի փոփոխությունները և վերջնական որոշում կայացնի շրջանի սահմանների վերաբերյալ:

**ԱՌԱՋԱՐԿԸ.**
Այս օրենսդրական նախագիծը կփոխի Քաղաքի կանոնադրությունը՝ ստեղծելու Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով հետևյալ նպատակով.

- Վերջնական որոշումներ կայացնելու Քաղաքային խորհրդի շրջանի սահմանների վերաբերյալ յուրաքանչյուր տասնամյա դաշնային մարդահամարից հետո՝ առանց խորհրդի կամ Քաղաքապետի ներգրավման,
- Համապատասխանելու Կանոնադրությամբ և Քաղաքի այլ օրենքով սահմանված շրջանների սահմանների վերանայման չափանիշներին և գործընթացին,
- Գործելու անաչառ կերպով, որն ապահովում է շրջանների սահմանների վերանայման գործընթացի ամբողջականությունն ու արդարությունը,
- Կրթելու և տեղեկացնելու հանրությանը շրջանների սահմանների վերանայման մասին,
- Ստանալու և քննարկելու հանրության կարծիքը,
- Առաջարկներ ներկայացնելու Քաղաքի ղեկավարությանը շրջանների սահմանների վերանայման գործընթացի վերաբերյալ, և
- Կատարելու շրջանների սահմանների վերանայման այլ գործառույթներ, ինչպես սահմանված է Քաղաքի օրենքով:

Հանձնաժողովը բաղկացած կլինի 16 անդամից և չորս փոխարինող անդամից:

Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովի անդամները կընտրվեն առանց ընտրված պաշտոնյաների ներգրավման:

Քաղաքի ոչ մի պաշտոնյա, աշխատող, հանձնակատար, լոբբիստ կամ որևէ անձ, ով նպաստել է ընտրված քաղաքային պաշտոնյայի քաղաքական արշավին, ինչպես սահմանված է Քաղաքի օրենսդրությամբ, իրավասու չի լինի աշխատել Հանձնաժողովում:

**«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք ցանկանում եք պահանջել Քաղաքից հիմնել շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ Los Angeles քաղաքում վերստին գծելու խորհրդի շրջանի սահմանները:

**«ՈՉ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք չեք ցանկանում պահանջել Քաղաքից հիմնել շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ Los Angeles քաղաքում վերստին գծելու խորհրդի շրջանի սահմանները:

**ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԷՋ 14-ԻՑ:**

**ԱՆՎԱՆՈՒՄԸ.**
ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ LOS ANGELES-Ի ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ:

**ԽՆԴԻՐԸ.**
Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ հիմնելու համար շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ Los Angeles Միասնական դպրոցական շրջանում վերստին գծելու Կրթության խորհրդի շրջանի սահմանները:

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.**
Քաղաքի կանոնադրությունը ներկայումս պահանջում է, որ Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի (LAUSD) Կրթության խորհրդի (Խորհուրդ) շրջանի սահմանները վերանայվեն յուրաքանչյուր տասը տարին մեկ խորհրդատվական հանձնաժողովի կողմից, որը Քաղաքի խորհրդին խորհուրդ է տալիս փոխել շրջանի սահմանները: Շրջանի սահմանների մասին վերջնական որոշումը կայացնում են Խորհուրդը և Քաղաքապետը: Քաղաքը առաջարկել է ստեղծել շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով, որը կքննարկի փոփոխությունները և վերջնական որոշում կայացնի շրջանի սահմանների վերաբերյալ:

**ԱՌԱՋԱՐԿԸ.**
Այս օրենսդրական նախագիծը կփոխի Քաղաքի կանոնադրությունը՝ ստեղծելու համար Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով հետևյալ նպատակով.

- Վերջնական որոշումներ կայացնելու LAUSD Խորհրդի շրջանի սահմանների վերաբերյալ յուրաքանչյուր տասնամյա դաշնային մարդահամարից հետո՝ առանց Խորհրդի կամ Քաղաքապետի ներգրավման,
- Համապատասխանելու Կանոնադրությամբ և Քաղաքի այլ օրենքով սահմանված շրջանների սահմանների վերանայման չափանիշներին և գործընթացին,
- Գործելու անաչառ կերպով, որն ապահովում է շրջանների սահմանների վերանայման գործընթացի ամբողջականությունն ու արդարությունը,
- Կրթելու և տեղեկացնելու հանրությանը շրջանների սահմանների վերանայման մասին,
- Ստանալու և քննարկելու հանրության կարծիքը,
- Առաջարկներ ներկայացնելու Քաղաքի ղեկավարությանը շրջանների սահմանների վերանայման գործընթացի վերաբերյալ, և
- Կատարելու շրջանների սահմանների վերանայման այլ գործառույթներ, ինչպես սահմանված է Քաղաքի օրենքով:

Հանձնաժողովը բաղկացած կլինի 14 անդամից և չորս փոխարինող անդամից:

Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովի անդամները կընտրվեն առանց ընտրված պաշտոնյաների ներգրավման:

LAUSD-ի ոչ մի պաշտոնյա, աշխատող, հանձնակատար, լոբբիստ կամ որևէ անձ, ով նպաստել է ընտրված քաղաքային պաշտոնյայի քաղաքական արշավին, ինչպես սահմանված է LAUSD-ի օրենսդրությամբ, իրավասու չի լինի աշխատել Հանձնաժողովում:

**«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք ցանկանում եք պահանջել Քաղաքից հիմնել շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ վերստին գծելու LAUSD Խորհրդի շրջանի սահմանները:

**«ՈՉ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք չեք ցանկանում պահանջել Քաղաքից հիմնել շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ վերստին գծելու LAUSD Խորհրդի շրջանի սահմանները:

**ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԷՋ 32-ԻՑ:**

**ԱՆՎԱՆՈՒՄԸ.**
ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

**ԽՆԴԻՐԸ.**
Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ պահանջելու, որ հանձնաժողովների կողմից նշանակված անձինք ներկայացնեն ֆինանսական հայտարարագրեր՝ նախքան նրանց պաշտոնի հաստատելը, պարզաբանելու Վերահսկիչի վերստուգիչ իրավասությունը Քաղաքի կապալառուների վերաբերյալ, ընդլայնելու Քաղաքի գլխավոր դատախազի՝ պարտադիր կատարման համար պահանջ ներկայացնելու լիազորությունները, լիազորելու ժամանակավոր նշանակումներ որոշակի գլխավոր մենեջերի պաշտոններում, հիմնելու նախաձեռնությամբ կամ հանրաքվեով առաջարկվող օրենքների ազդեցությունը գնահատելու գործընթաց և կատարելու այլ փոփոխություններ և պարզաբանումներ՝ Քաղաքի կառավարման, պաշտոնների նշանակումների և ընտրությունների հետ կապված:

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.**
Քաղաքի կանոնադրությունը սահմանում է Քաղաքի կառավարության կառուցվածքը, պարտականությունները, գործառույթները, գործընթացները և լիազորությունները: Քաղաքը տարբեր փոփոխություններ և պարզաբանումներ է առաջարկում Քաղաքի կանոնադրությանը՝ կապված քաղաքապետարանի կառավարման, նշանակումների և ընտրությունների հետ:

**ԱՌԱՋԱՐԿԸ.**
Օրենսդրական նախագիծը փոփոխություններ և պարզաբանումներ է կատարելու Քաղաքի կանոնադրության մեջ՝ կապված քաղաքապետարանի կառավարման, նշանակումների և ընտրությունների հետ, ներառյալ.

- Պահանջում է, որ Հանձնաժողովի անդամ նշանակված անձինք ներկայացնեն ֆինանսական հայտարարագրեր, նախքան նրանք կհաստատվեն Քաղաքի խորհրդի կողմից,
- Հստակեցնում է Վերահսկիչի վերստուգիչ լիազորությունները Քաղաքի կապալառուների և ենթակապալառուների նկատմամբ, որոնք ծախսում կամ ստանում են Քաղաքի միջոցները,
- Ընդլայնում է Քաղաքի դատախազի՝ պարտադիր կատարման համար պահանջ ներկայացնելու լիազորությունները,
- Լիազորում է ժամանակավոր նշանակումներ որոշակի գլխավոր մենեջերի պաշտոններում,
- Ստեղծում է գործընթաց՝ գնահատելու նախաձեռնությամբ կամ հանրաքվեի միջնորդությամբ առաջարկվող օրենքների հարկաբյուջետային և այլ ազդեցությունները, և
- Պահանջում է, որ Նավահանգստի հանձնակատարների խորհրդի առնվազն երկու անդամ բնակվի Նավահանգստի տարածքում:

**«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք ցանկանում եք, որ Քաղաքի կանոնադրությունը փոփոխվի, որպեսզի վերը նկարագրված փոփոխություններն ու պարզաբանումները կատարվեն Քաղաքի կառավարման, նշանակումների և ընտրությունների վերաբերյալ:

**«ՈՉ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք չեք ցանկանում, որ Քաղաքի կանոնադրությունը փոփոխվի, որպեսզի վերը նկարագրված փոփոխություններն ու պարզաբանումները կատարվեն Քաղաքի կառավարման, նշանակումների և ընտրությունների վերաբերյալ:

**ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԷՋ 49-ԻՑ:**

**ԱՆՎԱՆՈՒՄԸ.**
ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

**ԽՆԴԻՐԸ.**
Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ պարզաբանելու, որ El Pueblo հուշարձանը և Կենդանաբանական այգին հանդիսանում են զբոսայգիների սեփականությունը, պարզաբանելու, որ բաժանմունքները կարող են վաճառել ապրանքներ՝ Քաղաքի գործունեությանն աջակցելու համար, ներառելու գենդերային ինքնությունը Քաղաքի կողմից զբաղվածության համար կիրառելի խտրականության դեմ կանոններում, պարզաբանելու Օդանավակայանի հանձնակատարների խորհրդի լիազորությունները՝ սահմանելու վճարներ և կանոնակարգեր և կատարելու այլ փոփոխություններ Քաղաքի կառավարման և գործառնությունների հետ կապված:

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.**
Քաղաքի կանոնադրությունը սահմանում է Քաղաքի կառավարության կառուցվածքը, պարտականությունները, գործառույթները, գործընթացները և լիազորությունները: Քաղաքը տարբեր փոփոխություններ և պարզաբանումներ է առաջարկում Քաղաքի կանոնադրությանը՝ կապված Քաղաքի կառավարման և գործառնությունների հետ:

**ԱՌԱՋԱՐԿԸ.**
Օրենսդրական նախագիծը փոփոխություններ և պարզաբանումներ է կատարելու Քաղաքի կանոնադրության մեջ՝ կապված քաղաքապետարանի կառավարման և գործառնությունների հետ, ներառյալ.

- Հստակեցնելու, որ El Pueblo հուշարձանը և Կենդանաբանական այգին զբոսայգու սեփականությունն են,
- Հստակեցնելու, որ բաժանմունքները կարող են վաճառել սննդամթերք և ապրանքներ՝ Քաղաքի գործունեությանն աջակցելու համար,
- Ներառելու գենդերային ինքնությունը Քաղաքի կողմից աշխատանքի ընդունման հետ կապված խտրականության դեմ կանոններում,
- Հստակեցնելու Օդանավակայանի հանձնակատարների խորհրդի լիազորությունները՝ սահմանելու վճարներ, կանոններ և կանոնակարգեր՝ կապված օդանավակայաններում վերգետնյա փոխադրումների հետ,
- Թույլատրելու էլեկտրոնային ստորագրություններ Քաղաքի որոշ փաստաթղթերի վրա,
- Թույլատրելու Քաղաքին հանրային զբոսայգիների տարածքները վարձակալել Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանին՝ հանրային այգու նպատակներին համահունչ օգտագործման համար, և
- «Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրեն» անվանումը փոխելու «Քաղաքի վարչական պաշտոնյա»:

**«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք ցանկանում եք, որ Քաղաքի կանոնադրությունը փոփոխվի, որպեսզի կատարվեն վերը նկարագրված փոփոխությունները՝ կապված քաղաքի վարչակազմի և գործունեության հետ:

**«ՈՉ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք չեք ցանկանում, որ Քաղաքի կանոնադրությունը փոփոխվի, որպեսզի կատարվեն վերը նկարագրված փոփոխությունները՝ կապված քաղաքի վարչակազմի և գործունեության հետ:

**ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԷՋ 58-ԻՑ:**

**ԱՆՎԱՆՈՒՄԸ.**
ՔԱՂԱՔԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ:

**ԽՆԴԻՐԸ.**
Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ Քաղաքի Էթիկայի հանձնաժողովի համար նվազագույն տարեկան բյուջե սահմանելու, բարձրացնելու Հանձնաժողովի իրավասությունը՝ ծախսերի վերաբերյալ որոշումների և աշխատանքի ընդունման հարցերում, թույլ տալու Հանձնաժողովին սահմանափակ հանգամանքներում դրսից վարձել փաստաբան, սահմանելու Հանձնաժողովի անդամների համար լրացուցիչ որակավորման պահանջներ, պահանջելու, որ Քաղաքի խորհուրդը հանրային լսումներ անցկացնի Հանձնաժողովի առաջարկների վերաբերյալ, և բարձրացնելու պատիժները Քաղաքի օրենքների խախտման համար:

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.**
Էթիկայի հանձնաժողովը կառավարում է Քաղաքային և նահանգային օրենքները՝ կապված քարոզարշավի ֆինանսավորման, կառավարական էթիկայի և լոբբինգի հետ: Քաղաքի խորհուրդն առաջարկել է փոփոխել Քաղաքի կանոնադրությունը՝ ընդլայնելու հանձնաժողովի լիազորությունները և գործառնական անկախությունը:

**ԱՌԱՋԱՐԿԸ.**
Այս օրենսդրական նախագիծը կփոփոխի Քաղաքի կանոնադրությունը՝

- Հանձնաժողովի համար սահմանելու նվազագույն տարեկան բյուջե,
- Հանձնաժողովին տրամադրելու ավելի մեծ լիազորություններ ունենալ ծախսերի վերաբերյալ որոշումների, աշխատանքի ընդունման և կադրային հարցերի վերաբերյալ,
- Հանձնաժողովին թույլատրելու սահմանափակ հանգամանքներում, ներառյալ կոնկրետ հետաքննության կամ կատարողական գործի համար, ունենալ իր փաստաբանին,
- Հավելյալ որակավորումներ սահմանելու Հանձնաժողովի անդամների և Գործադիր տնօրենի հանդեպ, այդ թվում՝ արգելելու Հանձնաժողովի անդամներին և Գործադիր տնօրենին սեփականության իրավունք ունենալ մի բիզնեսում, որը պայմանագիր է կնքում կամ պահանջում է թույլտվություն Քաղաքի հետ, նպաստելով որպես հիմնական դոնոր կամ վճարողի ծառայություններ մատուցելով քաղաքական արշավներին,
- Արգելելու Քաղաքի ընտրված պաշտոնյայի, քարոզարշավի վճարողի խորհրդատուի կամ քարոզարշավի խոշոր նվիրատուի նշանակումը Հանձնաժողովում,
- Քաղաքային խորհրդից պահանջելու հանրային լսումներ անցկացնել Հանձնաժողովի քաղաքականության առաջարկների վերաբերյալ, և
- Բարձրացնելու առավելագույն տույժերը, որոնք Հանձնաժողովը կարող է սահմանել՝ յուրաքանչյուր խախտման համար $5,000 ներկայիս մակարդակից մինչև $15,000՝ տարեկան ճշգրտված յուրաքանչյուր խախտման համար:

**«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք ցանկանում եք ընդլայնել Էթիկայի հանձնաժողովի իրավասությունը և գործառնական անկախությունը:

**«ՈՉ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք չեք ցանկանում ընդլայնել Էթիկայի հանձնաժողովի իրավասությունը և գործառնական անկախությունը:

**ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԷՋ 71-ԻՑ:**

**ԱՆՎԱՆՈՒՄԸ.**
LOS ANGELES-Ի ՀՐՇԵՋ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ:

**ԽՆԴԻՐԸ.**
Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ թույլ տալով Ոստիկանության, Օդանավակայանների, Նավահանգստի և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքներում աշխատող իրավապահ մարմինների աշխատակիցներին անդամակցությունն ու ծառայությունը փոխանցել Los Angeles քաղաքի աշխատակիցների կենսաթոշակային համակարգից (LACERS) Los Angeles-ի հրշեջ ծառայության և ոստիկանության կենսաթոշակային ծրագրին (LAFPP), և պահանջելու քաղաքից վճարել հարակից ծախսերը, ներառյալ Օդանավակայանների և Ոստիկանության բաժնի որոշ անդամներին փոխհատուցել նախկինում կատարած փոխանցումները:

**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.**
Կանոնադրությունը նախատեսում է, որ որոշ իրավապահ մարմինների երդվյալ սպաներ, որոնք աշխատում են Քաղաքի Ոստիկանության, Օդանավակայանների, Նավահանգստի և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքներում, հանդիսանան LACERS (LACERS իրավապահ մարմինների սպաներ) անդամներ: Կանոնադրության նախորդ փոփոխությունները թույլ են տվել իրավապահ մարմինների սպաների իրավասու խմբերին LACERS-ից տեղափոխվել LAFPP-ի 6-րդ մակարդակ: Մակարդակ 6-ը LAFPP անդամների կենսաթոշակային ծրագիրն է:

**ԱՌԱՋԱՐԿԸ.**
Օրենսդրական նախագիծը կփոփոխի Քաղաքի կանոնադրությունը՝

- Լիազորելու Քաղաքային խորհրդին՝ 2025 թ. հունվարի 12-ին ակտիվորեն աշխատող LACERS-ի իրավապահ մարմինների սպաների համար միանգամյա որոշում կայացնել՝ իրենց անդամությունը, ծառայության տարիները և կենսաթոշակային վճարումները LACERS-ից LAFPP-ի 6-րդ մակարդակ տեղափոխելու վերաբերյալ:
- Լիազորելու LAFPP-ի 6-րդ մակարդակի որոշ անդամներին LACERS-ում մնացած ծառայության տարիները և կենսաթոշակային վճարումները փոխանցել LAFPP 6-րդ մակարդակ:
- Պահանջելու LAFPP-ին վերադարձնել 6-րդ մակարդակի որոշ Անդամների կողմից վճարված ծախսերը, որոնք նախկինում LACERS-ից տեղափոխվել են LAFPP-ի 6-րդ մակարդակ:
- Պահանջելու Քաղաքից վճարել բոլոր ծախսերը և ընթացիկ ծախսերը՝ կապված LACERS-ի իրավապահ մարմինների սպաների տեղափոխման հետ, ներառյալ վերը նկարագրված գումարները, որպեսզի LAFPP-ի համար լրացուցիչ ծախսեր չգոյանան:

**«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք ցանկանում եք թույլ տալ LACERS-ի իրավապահ մարմինների սպաներին իրենց անդամությունը, ծառայության տարիները և կենսաթոշակային վճարումները LACERS-ից տեղափոխել LAFPP-ի 6-րդ մակարդակ:

**«ՈՉ» ՔՎԵԱՐԿԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է.**
Դուք չեք ցանկանում թույլ տալ LACERS-ի իրավապահ մարմինների սպաներին իրենց անդամությունը, ծառայության տարիները և կենսաթոշակային վճարումները LACERS-ից տեղափոխել LAFPP-ի 6-րդ մակարդակ:

**ԱՅՍ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԷՋ 80-ԻՑ:**

## DD ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ LOS ANGELES ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD:

Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ հիմնելու համար շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ Los Angeles քաղաքում վերստին գծելու Խորհրդի շրջանի սահմանները:

### ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ
### SHARON M. TSO, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

Los Angeles Քաղաքի (Քաղաք) կանոնադրությունը (Կանոնադրություն) սահմանում է այն գործընթացը, որով Քաղաքի Խորհրդի շրջանի սահմանները գծվում են տասը տարին մեկ և ընդունվում համաձայն հրամանագրի՝ դաշնային մարդահամարից հետո: Հետագայում, Խորհրդի շրջանի այդ սահմաններն օգտագործվում են Խորհրդի անդամների ընտրությունների, հետկանչի և Խորհրդի թափուր պաշտոնները լրացնելու համար: Ներկայումս նշանակված խորհրդատվական հանձնաժողովը խորհուրդ է տալիս Խորհրդին փոխել այդ սահմանների վերանայման գործընթացում: Շրջանի սահմանների վերջնական որոշումները կայացնում են Խորհուրդը և Քաղաքապետը:

Այս միջոցառումը կփոփոխի Կանոնադրությունը՝ պահանջելով ստեղծել Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով (Հանձնաժողով), որն իրավասություններ, պարտավորություններ և պարտականություններ կունենա՝ յուրաքանչյուր դաշնային մարդահամարից հետո տասը տարին մեկ ընդունելու Խորհրդի շրջանի սահմանները: Հանձնաժողովից կպահանջվի գծել Խորհրդի շրջանի սահմանները Միացյալ Նահանգների Սահմանադրությանը, California-ի Սահմանադրությանը և քվեարկության իրավունքի դաշնային օրենքին համապատասխան, ինչպես նաև հետևել Կանոնադրության և Քաղաքի այլ օրենքներով սահմանված շրջանների սահմանների վերանայման չափանիշներին և գործընթացին:

Հանձնաժողովից կպահանջվի անաչառ կերպով գործել Խորհրդի շրջանների սահմանների մշակման գործում՝ առանց ընտրված պաշտոնյաների ներգրավման: Խորհրդի շրջանի վերջնական սահմանները կհաստատվեն բացառապես Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը նաև կիրազեկի և կտեղեկացնի հանրությանը շրջանների սահմանների վերանայման մասին, կանցկացնի հանրային հանդիպումներ և լսումներ, կընդունի և կքննարկի հանրային կարծիքը, առաջարկություններ կանի Քաղաքապետին, Խորհրդին և Էթիկայի հանձնաժողովին շրջանների սահմանների վերանայման գործընթացի վերաբերյալ և կկատարի շրջանների սահմանների վերանայման այլ գործառույթներ, ինչպես սահմանված է Քաղաքի օրենքով: Հանձնաժողովի անդամին կարգելվի շփվել անհատի կամ կազմակերպության հետ՝ կապված հանրային ժողովից դուրս շրջանների սահմանների վերանայման հարցերի հետ:

Հանձնաժողովը կընտրվի առանց ընտրված պաշտոնյաների ներգրավման և բաղկացած կլինի 16 անդամից և չորս փոխարինողներից: Հանձնաժողովը ստեղծվելու է յուրաքանչյուր դաշնային մարդահամարից հետո տասը տարին մեկ և ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը, որն ավարտվում է զրոյական թվով: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի լիազորությունների ժամկետը սկսվում է ընտրության օրվանից և ավարտվում Հանձնաժողովի հաջորդ առաջին անդամի ընտրության օրը: Հանձնաժողովի անդամների որակավորումներն ու սահմանափակումները ներառում են հետևյալը.

- Ընտրության պահին լինել առնվազն 18 տարեկան և Քաղաքի բնակիչ,
- Դիմումը ներկայացնելուց անմիջապես առաջ Քաղաքում ապրել առնվազն հինգ տարի,
- Ցույց տալ համագործակցային հմտություններ, քաղաքացիական ներգրավվածության փորձ և բարդ տվյալներ վերլուծելու կարողություն,
- Անձը պարտավոր չէ լինել գրանցված ընտրող կամ Միացյալ Նահանգների քաղաքացի,
- Անձը չի կարող լինել Քաղաքի աշխատակից կամ քաղաքի հանձնակատար դիմում ներկայացնելուց առնվազն երկու տարի առաջ,
- Անձը, կամ անձի ամուսինը, կամ ընտանիքը չի կարող զբաղվել նախկինում քաղաքական լոբբիստական գործունեությամբ, որը նկարագրված է California-ի Ընտրական օրենսգրքի դրույթներում կապված շրջանների սահմանների վերաբաշխման անկախ հանձնաժողովների իրավասության պահանջների հետ,
- Հանձնաժողովի անդամները պարտավոր են ներկայացնել տնտեսական շահերի և ֆինանսական այլ բացահայտումներ,
- Հանձնաժողովում ծառայելու ընթացքում անձը չի կարող հավանություն տալ, աշխատել, կամավոր լինել կամ քարոզարշավի նվիրատվություն կատարել ընտրված քաղաքային պաշտոնյայի կամ ընտրովի քաղաքային պաշտոնի թեկնածուի համար, կամ ծառայել որևէ այլ ղեկավար մարմնի շրջանների սահմանների վերաբաշխող հանձնաժողովում,
- Հանձնակատարը կարող է պաշտոնանկ արվել պարտականությունների էական անփութության կամ պաշտոնում այլ սխալ վարքագծի համար Հանձնաժողովի ձայների երկու երրորդով, որը կարող է բողոքարկվել Քաղաքի էթիկայի հանձնաժողովին,
- Կստեղծվի Քաղաքի տվյալների բյուրո՝ ժողովրդագրական և աշխարհագրական տվյալներ պատրաստելու և կառավարելու համար Հանձնաժողովի և Քաղաքի այլ բաժանմունքների համար, և
- Քաղաքի գործավարը կղեկավարի Հանձնաժողովի դիմումի գործընթացը, իսկ Էթիկայի հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում:

Այս Կանոնադրության փոփոխությունն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## MATTHEW W. SZABO, ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՅԱ

Այս օրենսդրական նախագիծը յուրաքանչյուր տասը տարին մեկ ստեղծում է Los Angeles քաղաքի 16 հոգուց բաղկացած Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով: Հանձնակատարի փոխհատուցումը կսահմանվի այս պահին անհայտ գումարներով համաձայն Հրամանագրի: Այս օրենսդրական նախագիծը պահանջում է, որ Քաղաքի գործավարի գրասենյակը և Էթիկայի հանձնաժողովն աջակցեն հանձնակատարի ընտրությանը և պահանջում է, որ Քաղաքի գործավարն աջակցի հանձնաժողովի բնականոն գործառույթների հետ կապված վարչական խնդիրներին: Թեև հանձնակատարի փոխհատուցումը կսահմանվի Հրամանագրի միջոցով, և Քաղաքի բաժանմունքի վարչական ծախսերը կլուծվեն որպես Քաղաքի տարեկան բյուջեի գործընթացի մաս, երբ մշակվեն վարչական ընթացակարգերը, իրական ծախսերը տարեցտարի կտարբերվեն՝ ելնելով հանձնաժողովի ծանրաբեռնվածությունից: Մասնակի տարվա ծախսերը նախատեսվում է սկսել 2028-29 թթ.: Քաղաքի գլխավոր հիմնադրամի վրա ազդեցությունը գնահատվում է $1,163,746 2028-2029 թվականներին: 2029-30 թվականների ամբողջ տարվա ծախսերը գնահատվում են $2,405,256: Ակնկալվում է, որ հանձնաժողովի ողջ կյանքի ընթացքում կուտակային ծախսերը կկազմեն մոտավորապես $6,154,130:

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-Ի

100 տարի շարունակ Los Angeles-ի Քաղաքի Խորհրդի անդամները վերջին խոսքն էին ասում սեփական շրջանների սահմանները որոշելու հարցում: Շատ հաճախ նրանք օգտագործում էին տրված իշխանությունը՝ ներգրավելու շրջաններ, որոնք մեծացնում են վերընտրվելու իրենց հնարավորությունները՝ անկախ մեր թաղամասերի և համայնքների վրա հետևանքներից: Մեր քաղաքի պատմության մեջ առաջին անգամ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-ն կվերցնի այդ իրավասությունն ընտրված պաշտոնյաներից և փոխարենը կստեղծի Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով Քաղաքի համար:

Երկու տարի առաջ այս քաղաքը ցնցվեց սկանդալից, երբ արձանագրվեցին Խորհրդի մի քանի անդամների կողմից շրջանի վերաբաշխման գործընթացն իրենց օգտին օգտագործելու փորձեր՝ միաժամանակ թուլացնելով ամբողջ համայնքների իշխանությունը:

ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-ը վերջ կդնի այսպիսի կուլիսային գործարքներին:

Յուրաքանչյուր տասը տարին մեկ կընտրվի նոր հանձնաժողով՝ Խորհրդի շրջանի սահմանները վերագծելու համար: Թեկնածուները մանրակրկիտ ստուգվելու են հնարավոր շահերի բախման համար: Չեն լինելու ընտրված պաշտոնյաներ, նրանց աշխատակիցներ կամ ընտանիքի անդամներ: Ոչ մի թեկնածու, լոբբիստ կամ քաղաքական խորհրդատու: Հանձնաժողովի անդամների կեսն ընտրված թեկնածուներից կընտրվի պատահականության սկզբունքով, ինչպես վիճակախաղում: Այնուհետև նրանք կընտրեն մյուսներին նույն ընտրացուցակից՝ համոզվելու համար, որ Հանձնաժողովն արտացոլում է մեր քաղաքի բազմազանությունը՝ հաշվի առնելով ռասան, սեռը, տարիքը, եկամուտը և այլ գործոններ: Ամբողջ գործընթացը ղեկավարելու է Քաղաքի գործավարը՝ առանց Խորհրդի անդամների որևէ մասնակցության:

Անկախ հանձնակատարները կսահմանեն Խորհրդի շրջանները, որոնք բնակչության առումով մոտավորապես հավասար կլինեն և կապահովեն, որ ոչ մի ռասայական կամ էթնիկ համայնք կամայականորեն բաժանված չլինի մի քանի շրջանների՝ սահմանափակելու նրանց ներկայացուցչության հնարավորությունները:

Արդար ընտրություններ ձայների արդար բաշվածությամբ շրջաններում անհրաժեշտ են ժողովրդավարության և քաղաքային արդյունավետ կառավարման համար: ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-ը մեկընդմիշտ թույլ կտա քվեարկողներին ընտրել իրենց Խորհրդի անդամներին, այլ ոչ թե Խորհրդի անդամներն ընտրեն իրենց քվեարկողներին:

Եկեք բացառենք քաղաքականությունը շրջանի վերաբաշխման գործընթացից:

«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵՔ ԿԱՆՈՆԱԴՐՈԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-Ի ՀԱՄԱՐ

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-Ի ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, շրջան 2
City of Los Angeles

NITHYA RAMAN
Խորհրդի անդամ, շրջան 4
City of Los Angeles

CALIFORNIA COMMON CAUSE

**ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՄ ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:**

## ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-Ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-ն կստեղծի առաջին իսկապես Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով, որը Los Angeles-ի պատմության մեջ կգծի Խորհրդի շրջանների սահմանները: Սա կենսականորեն կարևոր քայլ է Քաղաքապետարանը մեկընդմիշտ բարեփոխելու համար:

Այս առաջարկը մշակվել է կառավարության բարեփոխումների ջատագովների, ակադեմիական փորձագետների և համայնքի ներկայացուցիչների կողմից ամիսներ շարունակ երկարատև ներգրավվածության արդյունքում: Որոշ փորձագետներ Կանոնադրության փոփոխություն DD-ն անվանել են շրջանների սահմանների վերանայման բարեփոխումների «ոսկե ստանդարտ»: Դրան հակադրվող որևէ փաստարկ չկա:

Խորհրդի շրջանները, որոնք նախագծված են անկախ քաղաքացի հանձնաժողովականների կողմից, որոնք կազմված են քաղաքի բոլոր տարածքներից և արտացոլում են Los Angeles-ի ողջ բազմազանությունը, ավելի լավ կծառայեն հանրությանը, քան քաղաքական գործիչների կողմից նախագծվածներն՝ ծառայելու իրենց անձնական հավակնություններին:

Վերջ դնենք սկանդալային աուդիո ձայնագրության միջոցով բացահայտված գաղտնի գործարքին:

Քվեարկեք «ԱՅՈ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-ին Los Angeles-ի քաղաքային կառավարությունում արդար ներկայացուցչության և ավելի ուժեղ ժողովրդավարության համար:

### ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD-Ի ՕԳՏԻՆ ՀԵՐՔՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, Շրջան 2
City of Los Angeles

NITHYA RAMAN
Խորհրդի անդամ, Շրջան 4
City of Los Angeles

CALIFORNIA COMMON CAUSE

FERNANDO GUERRA, PH.D.
Խորհրդի անդամ
L.A. Governance Reform Project

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

Նոր դրույթները կամ լեզուն, որն ավելացվել է կանոնադրությանը կամ գոյություն ունեցող կանոնադրության բաժիններին, ցույց են տրված ընդգծված տառատեսակով. կանոնադրությունից կամ կանոնադրության գոյություն ունեցող բաժիններից ջնջված բառերը ցույց են տրվում ~~վրագծված~~ տառատեսակով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ DD

Բաժին 1. Los Angeles քաղաքի Կանոնադրությանն ավելացվում են Բաժիններ 480-ից 490-ը՝ հետևյալ խմբագրությամբ.

### *Los Angeles քաղաքի Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով*

**Բաժ. 480: Հանձնաժողովի հիմնում և նպատակ:**

(a) Los Angeles քաղաքում պետք է գործի Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով («Հանձնաժողով»), որը պետք է ունենա Քաղաքի կանոնադրությամբ և որոշմամբ սահմանված լիազորությունները, պարտավորությունները և պարտականությունները:

(b) Հանձնաժողովի նպատակն է ուժեղացնել Los Angeles քաղաքի կառավարումը՝ զարգացնելով Խորհրդի շրջանի սահմաններն արդար, թափանցիկ, ներառական և անկախ շրջանի վերաբաշխման գործընթացի միջոցով, որը խթանում է հանրության մասնակցությանը և հանրության հասանելիությունը դեպի ընթացակարգեր:

**Բաժ. 481: Հանձնաժողովի կազմակերպումը, լիազորությունները և պարտականությունները:**

(a) Հանձնաժողովը բաղկացած կլինի 16 անդամից և չորս փոխարինող անդամից:

(b) Յուրաքանչյուր տասը տարին մեկ դաշնային մարդահամարից հետո ստեղծվում է նոր Հանձնաժողով: Հանձնաժողովի անդամներն ընտրվում են զրո թվով ավարտվող յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ:

(c) Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի լիազորությունների ժամկետը սկսվում է այդ հանձնակատարի համապատասխան ընտրության օրվանից և ավարտվում է Հանձնաժողովի հաջորդ անդամի ընտրությունից հետո:

(d) Հանձնաժողովն իրավասու է և պարտավոր է՝

(1) ընդունել Los Angeles քաղաքի Խորհրդի շրջանների սահմանները յուրաքանչյուր տասը տարին մեկ անցկացվող դաշնային մարդահամարից հետո,

(2) համապատասխանել Կանոնադրությամբ և որոշմամբ սահմանված շրջանի վերաբաշխման չափանիշներին և գործընթացին,

(3) գործել անաչառ կերպով, որն ապահովում է շրջանի վերաբաշխման գործընթացի ամբողջականությունն ու արդարությունը,

(4) կրթել և տեղեկացնել հանրությանը շրջանի վերաբաշխման մասին, պահանջել և խրախուսել հանրության մասնակցությունը շրջանի վերաբաշխման գործընթացին, ինչպես նաև անցկացնել հանրային հանդիպումներ և լսումներ, որոնք հասանելի են և հանրությանը հնարավորություն են տալիս մասնակցելու և մեկնաբանություններ տալու գործընթացին,

(5) ներկայացնել առաջարկություններ Քաղաքապետին, Քաղաքային խորհրդին և Քաղաքի էթիկայի հանձնաժողովին շրջանի վերաբաշխման հարցերի վերաբերյալ, և

(6) կատարել շրջանի վերաբաշխման այլ գործառույթներ ըստ հրամանագրի:

**Բաժ. 482: Հանձնակատարի որակավորումները և սահմանափակումները:**

(a) Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ընտրվելու պահին պետք է լինի առնվազն 18 տարեկան և քաղաքի բնակիչ, և պետք է բնակվի քաղաքում առնվազն հինգ տարի՝ անձի դիմումը ներկայացնելուց անմիջապես առաջ: Հանձնակատարից չի պահանջվում լինել գրանցված ընտրող կամ Միացյալ Նահանգների քաղաքացի:

(b) Անձն իրավասու չէ դիմել կամ աշխատել Հանձնաժողովում, եթե անձը եղել է քաղաքային աշխատող կամ քաղաքային հանձնաժողովի անդամ՝ անձի կողմից դիմումը ներկայացնելուն անմիջապես նախորդող երկու տարվա ընթացքում:

(c) Անձն իրավասու չէ դիմելու Հանձնաժողովին կամ ծառայելու այնտեղ, եթե անձը կամ անձի ամուսինը/կինը կամ ընտանիքի անդամը նախկինում մասնակցել է California-ի ընտրական օրենսգրքի դրույթներում նկարագրված քաղաքական և լոբբիստական գործունեությանը՝ կապված շրջանի վերաբաշխման անկախ հանձնաժողովների իրավասության պահանջների հետ: Իրավասության լրացուցիչ պահանջներ կարող են տրվել համաձայն հրամանագրի:

(d) Հանձնաժողովի դիմորդները պետք է դրսևորեն համագործակցության հմտություններ, քաղաքացիական ներգրավվածության փորձ և բարդ տվյալներ վերլուծելու կարողություն:

(e) Հանձնաժողովում ծառայելու ընթացքում Հանձնաժողովի անդամը չպետք է աջակցություն հայտնի, աշխատի, կամավորական սկզբունքներով աշխատի կամ քարոզարշավի համար ներդրում կատարի ընտրված Քաղաքային պաշտոնյայի կամ ընտրովի Քաղաքային պաշտոնի թեկնածուի համար, կամ ծառայի որևէ այլ պետական մարմնի շրջանի վերաբաշխող հանձնաժողովում:

(f) Հանձնաժողովի անդամը կամ նախկին անդամը չպետք է անի հետևյալներից որևէ մեկը.

(1) Լինել ընտրովի Քաղաքային պաշտոնի թեկնածու, եթե չի անցել ավելի քան հինգ տարի Հանձնաժողովում անդամի վերջին ծառայության օրվանից կամ տասը տարի չի անցել Հանձնաժողովում անդամի ընտրվելու օրվանից, որն ավելի քիչ է:

(2) Լինել Քաղաքային խորհրդի թեկնածու ցանկացած շրջանի համար, որի համար ընտրությունները կանցկացվեն՝ օգտագործելով շրջանային սահմանները, որոնք ընդունվել են Հանձնաժողովի կողմից, որին անդամը ծառայել է:

(g) Հանձնաժողովում ծառայության վերջին օրվանից չորս տարվա ընթացքում կամ Հանձնաժողովում ընտրվելու օրվանից հետո տասը տարվա ընթացքում, որը որ ավելի պակաս է, Հանձնաժողովի անդամը կամ նախկին անդամը չպետք է անի հետևյալներից որևէ մեկը.

(1) Ընդունի նշանակում մեկ այլ Քաղաքային հանձնաժողովում:

(2) Ընդունվի աշխատանքի որպես անձնակազմի վարձատրվող անդամ կամ ստանա փոխհատուցում որպես խորհրդատու ընտրված Քաղաքային պաշտոնյայի կամ ընտրովի Քաղաքային պաշտոնի թեկնածուի համար:

(3) Ստանա ոչ մրցակցային հայտի պայմանագիր Քաղաքի հետ:

(4) Գործի որպես Քաղաքի գրանցված լոբբիստ:

(5) Ընդունի նշանակում Քաղաքային պաշտոնի:

(h) Հանձնաժողովի այլընտրանքային անդամները ենթակա են նույն իրավասության պահանջներին, վարքագծի չափանիշներին և սահմանափակումներին, ինչ Հանձնաժողովի մյուս անդամները:

**Բաժ. 483: Հանձնակատարի ընտրությունը և հեռացումը.**

(a) Ապագա հանձնաժողովականներին բացահայտելու համար դիմումների գործընթացը պետք է սկսվի ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը, որն ավարտվում է ինը թվով:

(b) Քաղաքի գործավարը ղեկավարում է Հանձնաժողովի դիմումի գործընթացը, իսկ Քաղաքի էթիկայի հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում: Քաղաքի գործավարը և Քաղաքի էթիկայի հանձնաժողովը կարող են այդ պարտականությունները փոխանցել իրենց աշխատակազմին կամ խորհրդատուներին:

(c) Քաղաքի գործավարը պետք է իրականացնի իրազեկման և կրթական ծրագիր՝ ապահովելու Հանձնաժողովի դիմումի գործընթացի հրապարակման և իրազեկման առկայությունը՝ անապահով համայնքներին հասնելու ջանքերով և բազմաթիվ լեզուներով, համաձայն հրամանագրի: Քաղաքի գործավարը պետք է մոնիտորինգի ենթարկի և հրապարակի հայտերի ներկայացման ժողովրդագրական տվյալները և ողջամտորեն անհրաժեշտության դեպքում ընդլայնի իրազեկումը, որպեսզի համոզվի, որ հայտատուների խումբն ունի բավարար թվով որակավորված դիմորդներ և ողջամտորեն արտացոլում է Քաղաքի բազմազանությունը:

(d) Հանձնաժողովում ծառայության իրավասության պահանջները բավարարող շահագրգիռ անձը կարող է դիմում ներկայացնել Քաղաքի գործավարին: Քաղաքի գործավարը պետք է ուսումնասիրի հայտերը և ստեղծի հայտատուների խումբ, որը բաղկացած է այն անձանցից, ովքեր բավարարում են Բաժին 482-ի (a)-ից (c) ենթաբաժիններում նշված օբյեկտիվ իրավասության պահանջները:

(e) Քաղաքի գործավարը հրապարակում է անձանց անունները հայտատուի խմբում հանրային վերանայման համար և սահմանում է գործընթաց, որով հանրությունը կարող է տեղեկատվություն տրամադրել հայտատուի խմբում անհատի իրավասության վերաբերյալ: Քաղաքի էթիկայի հանձնաժողովը պետք է վերանայի հանրության կողմից տրամադրված տեղեկատվությունը և որոշի, թե արդյոք որևէ անձ պետք է հեռացվի հայտատուների ցանկից:

(f) Հանրային վերանայման ժամանակաշրջանից հետո Քաղաքի էթիկայի հանձնաժողովը գնահատում է հայտատուների խմբի անհատների դիմումները՝ բացահայտելու այն անձանց, ովքեր բավարարում են Բաժին 482-ի (a)-ից (d) ենթաբաժիններով սահմանված իրավասության պահանջները և որոնք պետք է ընդգրկվեն Հանձնաժողովի Ընտրության ցանկում: Հանձնաժողովի Ընտրության ցուցակի ստեղծումից հետո Քաղաքի էթիկայի հանձնաժողովն իրավասու է տեղեկատվություն ստանալու հանրությունից և որոշումներ կայացնելու Հանձնաժողովի ընտրության ցուցակում գտնվող անձանց շարունակական իրավասության վերաբերյալ:

(g) Քաղաքի գործավարը և Քաղաքի էթիկայի հանձնաժողովը, Քաղաքի տվյալների բյուրոյի աջակցությամբ և հանրային կարծիքը թույլ տվող գործընթացի միջոցով, կնշանակեն Քաղաքի ութ աշխարհագրական շրջաններ՝ ընդհանուր առմամբ հավասար բնակչությամբ: Քաղաքի գործավարը հանրային հանդիպման ժամանակ պատահական վիճակահանություն է անցկացնում՝ ութ աշխարհագրական շրջաններից յուրաքանչյուրից մեկ անձի ընտրելու համար: Ընտրության այս գործընթացի արդյունքը կլինի Հանձնաժողովի ութ անդամի ընտրությունը՝ մեկական անդամ ութ աշխարհագրական շրջաններից յուրաքանչյուրից:

(h) Ընտրված ութ հանձնաժողովականները պետք է վերանայեն Հանձնաժողովի ընտրության խմբի մնացած բոլոր դիմորդների դիմումները՝ Հանձնաժողովի լրացուցիչ ութ անդամների ընտրելու համար: Այս ընտրությունները պետք է կատարվեն հանրային հանդիպման ժամանակ նախնական ութ հանձնաժողովականների ձայների երկու երրորդով՝ ելնելով դիմողի համապատասխան փորձից և փորձառությունից, Քաղաքի թաղամասերին ծանոթ լինելուց, անաչառ լինելու կարողությունից և ապահովելու, որ Հանձնաժողովն արտացոլի քաղաքի բազմազանությունը, ներառյալ ռասայական, էթնիկական, սեռի, գենդերային, սեռական կողմնորոշման, տարիքային, եկամտային, մասնագիտական և աշխարհագրական բազմազանությունը: Այնուամենայնիվ, այդ նպատակով բանաձևեր կամ գործակիցներ չեն կիրառվում:

(i) 16 հանձնաժողովականների ընտրվելուց հետո Հանձնաժողովը Հանձնաժողովի ընտրության ցուցակից մնացած դիմորդներից ընտրում է չորս անձի՝ որպես փոխարինող հանձնաժողովականներ: Փոխկատարող հանձնաժողովականների ընտրությունը կատարվում է այնպես, որ ապահովի փոխարինող հանձնաժողովականների աշխարհագրական բազմազանությունը:

(j) Հանձնաժողովը կարող է հեռացնել հանձնակատարին պարտականությունների էական չկատարման, պաշտոնում կոպիտ սխալ վարքագծի, պաշտոնի պարտականությունները կատարելու անկարողության, Բաժին 482-ում նկարագրված հանձնակատարի իրավասության պահանջներին և սահմանափակումներին չհամապատասխանելու, չհիմնավորված բացակայությունների կամ թափանցիկության պահանջները չկատարելու համար: Սույն դրույթի համաձայն հեռացնելու համար անհրաժեշտ է Հանձնաժողովի ձայների երկու երրորդը՝ անդամին հանրային լսումների մասին ծանուցում տրամադրելուց և գրավոր և հանրային լսումներին պատասխանելու հնարավորություն տրամադրելուց հետո: Հեռացված անդամը կարող է բողոքարկել Հանձնաժողովի որոշումը Քաղաքի էթիկայի հանձնաժողովին:

(k) Հանձնաժողովը կարող է անհապաղ հեռացնել այն հանձնակատարին, ով մեղադրվել է հանցագործության մեջ, կամ ում մեղադրանք է առաջադրվել Բաժին 207(c)-ում նկարագրված ծառայողական պարտականությունների խախտման հետ կապված քրեական հանցագործության համար: Այս դրույթի համաձայն հեռացնելու համար անհրաժեշտ է Հանձնաժողովի ձայների երկու երրորդը: Հեռացված անդամը կարող է բողոքարկել Հանձնաժողովի որոշումը Քաղաքի էթիկայի հանձնաժողովին:

(l) Հանձնաժողովի անդամի պաշտոնը թափուր է դառնում, եթե անդամն իրեն մեղավոր է ճանաչում հանցանքի համար կամ չի վիճարկում կամ դատապարտվել է հանցանքի համար:

(m) Եթե Հանձնաժողովում թափուր պաշտոն է առաջանում, Հանձնաժողովի նախագահը հրապարակային ժողովի ժամանակ անցկացնում է պատահական վիճակահանություն՝ հանձնաժողովի փոխարինող հանձնաժողովի անդամներից մեկին ընտրելու համար:

**Բաժ. 484: Շրջանի վերաբաշխման չափանիշներ:**

(a) Հանձնաժողովը պետք է ընդունի Խորհրդի շրջանների սահմանները, որոնք համապատասխանում են Միացյալ Նահանգների Սահմանադրությանը, California-ի Սահմանադրությանը և 1965 թվականի Քվեարկության իրավունքների դաշնային օրենքին: Յուրաքանչյուր շրջան պետք է ունենա ողջամտորեն հավասար բնակչություն այլ շրջանների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ շեղումը պահանջվում է Քվեարկության իրավունքի մասին դաշնային օրենքին կամ օրենքով թույլատրելի լինելու համար:

(b) Ի հավելումն (a) ենթաբաժնի պահանջներին հետևելուն, Հանձնաժողովը ընդունում է Խորհրդի շրջանների սահմաններն՝ օգտագործելով հետևյալ չափանիշները, որոնք սահմանված են հետևյալ առաջնահերթության կարգով.

(1) Առավելագույն իրագործելի չափով շրջանները պետք է լինեն աշխարհագրորեն հարակից: Տարածքները, որոնք հանդիպում են միայն հարակից անկյունների կետերում, հարակից չեն: Տարածքները, որոնք բաժանված են ջրով և կապված չեն կամրջով, թունելով կամ լաստանավի կանոնավոր երթևեկությամբ, հարակից չեն:

(2) Գործնականում կիրառվող առավելագույն չափով, և եթե դա չի հակասում սույն ենթաբաժնի նախորդ չափանիշին, ցանկացած տեղական թաղամասի կամ տեղական հետաքրքրություն ներկայացնող համայնքի աշխարհագրական ամբողջականությունը պետք է հարգվի այնպես, որ նվազագույնի հասցվի դրա բաժանումը: «Ընդհանուր շահերով համայնքը» այն բնակչությունն է, որը կիսում է ընդհանուր սոցիալական կամ տնտեսական շահերը, որոնք պետք է ներառվեն մեկ ընտրատարածքում՝ դրա արդյունավետ և արդար ներկայացվածության նպատակով: Ընդհանուր շահերով համայնքների բնութագրերը կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում ընդհանուր հանրային քաղաքականության մտահոգություններով, ինչպիսիք են կրթությունը, հանրային անվտանգությունը, հանրային առողջությունը, շրջակա միջավայրը, բնակարանը, տրանսպորտը և սոցիալական ծառայությունների հասանելիությունը: Ընդհանուր շահերով համայնքների բնութագրերը կարող են ներառել նաև, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ մշակութային շրջանները, ընդհանուր սոցիալ-տնտեսական բնութագրերը, ընտրողների գրանցման և մասնակցության համանման ցուցանիշները և ընդհանուր պատմությունները: Ընդհանուր շահերով համայնքները չեն ներառում հարաբերությունները քաղաքական կուսակցությունների, գործող նախագահների կամ քաղաքական թեկնածուների հետ:

(3) Առավելագույն հնարավոր չափով, և եթե դա չի հակասում սույն ենթաբաժնի նախորդ չափանիշներին, շրջանները պետք է սահմանափակվեն բնական և արհեստական պատնեշներով, փողոցներով կամ Քաղաքի սահմաններով: Շրջանի սահմանները պետք է հեշտությամբ ճանաչելի և հասկանալի լինեն բնակիչների համար:

(4) Առավելագույն հնարավոր չափով, և եթե դա չի հակասում սույն ենթաբաժնի նախորդ չափանիշներին, շրջանները պետք է գծվեն՝ խրախուսելու աշխարհագրական կոմպակտությունն այնպես, որ բնակչության մոտակա տարածքները չշրջանցվեն հօգուտ ավելի հեռավոր բնակչության:

(c) Հանձնաժողովը չպետք է ընդունի շրջանների սահմանները գործող պաշտոնյային, քաղաքական թեկնածուին կամ քաղաքական կուսակցությանը նպաստելու կամ խտրականության ենթարկելու նպատակով, և գործող պաշտոնյայի կամ թեկնածուի բնակության վայրը շրջանների սահմանները մշակելիս չի դիտարկվի:

(d) Այլ լրացուցիչ չափանիշներ Հանձնաժողովը պետք է հաշվի առնի շրջանների սահմաններն ընդունելիս, այդ թվում՝ հաշվի առնելով համայնքը և մշակութային միավորումը տնտեսական և մշակութային տեսարժան վայրերով և ռեսուրսներով: Լրացուցիչ չափանիշների վերաբերյալ բոլոր որոշումները քննարկվում և հաստատվում են հանրային ժողովներում: Հանձնաժողովի կողմից լրացուցիչ չափորոշիչների դիտարկումը պետք է դիտարկվի՝ համապատասխանեցնելով (a)-ից (c) ենթաբաժինների կիրառելի պահանջներին:

(e) Հանձնաժողովի կողմից շրջանների սահմաններն ընդունելուց հետո Հանձնաժողովը պետք է համարակալի Խորհրդի յուրաքանչյուր շրջան, որպեսզի հնարավորինս շատ բնակիչների համար Խորհրդի շրջանի թիվը, որտեղ նրանք բնակվում են, մնա նույնը:

**Բաժ. 485: Հանրային հանդիպումներ, իրազեկում և մատչելիություն:**

(a) Հանձնաժողովը պետք է համապատասխանի Ralph M. Brown-ի օրենքին և բաց ժողովների այլ գործող օրենքներին:

(b) Հանձնաժողովը քայլեր կձեռնարկի՝ խրախուսելու բնակիչներին՝ մասնակցելու շրջանի վերաբաշխման գործընթացին, ներառյալ՝ թերներկայացված և ոչ անգլախոս համայնքների բնակիչներին:

(c) Հանձնաժողովը պետք է անցկացնի հանրային լսումներ և աշխատաժողովներ այնպես, որ հանրությունը հնարավորություն ունենա մասնակցելու և մեկնաբանելու շրջանի վերաբաշխման գործընթացի յուրաքանչյուր փուլում:

(d) Հանձնաժողովը տրամադրում է Հանձնաժողովի նիստերի ուղիղ թարգմանություն անգլերեն և իսպաներեն լեզուներով և ինչպես հետագայում նախատեսված է համաձայն հրամանագրի: Հանձնաժողովը նյութեր է տրամադրում դաշնային և նահանգային օրենսդրությամբ պահանջվող լեզուներով և ինչպես նախատեսված է համաձայն հրամանագրի:

(e) Հանձնաժողովը պետք է մշակի և կիրառի Մատչելիության ծրագիր՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները կարողանան մուտք գործել և լիարժեք մասնակցել Հանձնաժողովի նիստերին և լսումներին: Հանձնաժողովը պետք է մշակի այս պլանը մինչև հանրային լսումների մեկնարկը:

(f) Վկայություն տալու նպատակով ընտրված Քաղաքային պաշտոնյաները պետք է ենթարկվեն հանրային մեկնաբանությունների նույն ընթացակարգերին, ինչ հանրության անդամները:

(g) Մեկ կողմի հետ հաղորդակցություններ:

(1) Հանձնաժողովի անդամը չպետք է շփվի որևէ անհատի կամ կազմակերպության հետ հանրային ժողովից դուրս շրջանի վերաբաշխման հարցերի վերաբերյալ: Այս դրույթը չի արգելում հաղորդակցությունն այլ հանձնակատարի, Հանձնաժողովի աշխատակազմի, իրավախորհրդատուի կամ Հանձնաժողովի կողմից պահպանվող խորհրդատուների հետ: Այս դրույթը չի արգելում Քաղաքի աշխատակիցների հետ շփումներն այնքանով, որքանով այդ շփումները կապված են վարչական հարցերի կամ հանրությանը արված կրթական ներկայացումների հետ:

(2) Հանձնաժողովի Գործադիր տնօրենը, Հանձնաժողովի քարտեզագրող անձնակազմի ցանկացած անդամ կամ քարտեզագրման խորհրդատու և Հանձնաժողովի կողմից նշանակված այլ աշխատակիցներ չպետք է շփվեն ընտրված Քաղաքային պաշտոնյայի, ընտրողի Քաղաքային պաշտոնի թեկնածուի կամ նման պաշտոնյայի կամ թեկնածուի անձնակազմի հետ, ուղղակիորեն կամ գործակալի միջոցով՝ հանրային ժողովից դուրս շրջանի վերաբաշխման հարցերի վերաբերյալ: Այս դրույթը չի արգելում Քաղաքի աշխատակիցների հետ շփումներն այնքանով, որքանով այդ շփումները կապված են վարչական հարցերի կամ հանրությանը արված կրթական ներկայացումների հետ:

(3) Քաղաքի էթիկայի հանձնաժողովի, Քաղաքի քարտուղարի կամ այլ Քաղաքի վարչության անդամը կամ աշխատակիցը, որը ներգրավված է Հանձնաժողովի անդամների ընտրության գործընթացում, չպետք է շփվի ընտրված Քաղաքային պաշտոնյայի, ընտրողի Քաղաքային պաշտոնի թեկնածուի կամ նման պաշտոնյայի կամ թեկնածուի անձնակազմի հետ ուղղակիորեն կամ գործակալի միջոցով, մինչև այդ գործընթացի ավարտը հանրային ժողովից դուրս ընտրության գործընթացին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ: Այս դրույթը չի արգելում հաղորդակցությունն այնքանով, որքանով այդ հաղորդակցություններն առնչվում են վարչական հարցերի, իրավաբանական խորհրդատվության կամ հանրությանը արված կրթական ներկայացումների հետ:

(4) Հանձնաժողովը կարող է ընդունել հաղորդակցությունների վերաբերյալ այլ կանոններ, պայմանով, որ կանոնները համապատասխանում

են Brown օրենքին, չեն հակասում սույն ենթաբաժնի դրույթներին և ընդունվում են Հանձնաժողովի հանրային նիստում:

**Բաժ. 486: Հանձնաժողովի կողմից բիզնեսի, կառավարման և անձնակազմի կազմակերպման ձևը:**

(a) Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը և փոխարինող անդամը պետք է նշանակված աշխատող լինի Հանձնաժողովի շահերի բախման օրենսգրքում, որը ընդունվել է California-ի Քաղաքական բարեփոխումների մասին օրենքի համաձայն և Քաղաքի էթիկայի հանձնաժողովին կներկայացնի տնտեսական շահերի մասին հայտարարություն և ֆինանսական բացահայտման այլ հայտարարություններ, ինչպես պահանջվում է օրենքով:

(b) Ցանկացած պաշտոնական գործողության համար պահանջվում են Հանձնաժողովի մեծամասնության դրական ձայները, բացառությամբ հետևյալ գործողությունների, որոնք պահանջում են Հանձնաժողովի երկու երրորդի հաստատումը.

(1) քվեարկություն շրջանի վերջնական վերաբաշխման պլանի համար,

(2) հանձնակատարներին հեռացնելու քվեարկություն,

(3) քվեարկություն 483(h) Բաժնում նկարագրված ութ հանձնակատարների ընտրության համար,

(4) Գործադիր տնօրենի, քարտեզագրման խորհրդատուի կամ քարտեզագրման անձնակազմի անդամի և Հանձնաժողովի կողմից նշանակված ցանկացած այլ պաշտոնի աշխատանքի ընդունման քվեարկություն, և

(5) աշխատանքի ընդունող կամ պատվիրատու մարմնի պատվիրակությանը լիազորելու քվեարկություն, այնքանով, որքանով այդ լիազորությունը փոխանցելի է նահանգային և Քաղաքային օրենսդրության համաձայն:

(c) Հանձնաժողովի փոխարինող անդամները կարող են ամբողջությամբ մասնակցել Հանձնաժողովի քննարկումներին, սակայն չեն կարող քվեարկել և չեն կարող հաշվառվել քվորումի հաստատման համար:

(d) Հանձնաժողովն ընտրում է մեկ հանձնակատար Հանձնաժողովի նախագահի պաշտոնում: Հանձնաժողովն իր կազմից կարող է նշանակել այլ պաշտոնյաներ:

(e) Շրջանի վերաբաշխման նախագծերի և վերջնական վերաբաշխման պլանների համար շրջանների սահմանների մշակման սկզբունքների քննարկումն իրականացվում է հանրային ժողովում և հաստատվում Հանձնաժողովի քվեարկությամբ:

(f) Հանձնաժողովը պետք է տեղադրի առաջարկված քարտեզի սկզբունքները և ցանկացած առաջարկվող վերջնական քարտեզ Հանձնաժողովի կայքում առնվազն յոթ օր առաջ՝ Հանձնաժողովի լսումների կամ նիստի քննարկումից առաջ:

(g) Հանձնաժողովը աշխատանքի է ընդունում Գործադիր տնօրենի և շրջանի վերաբաշխման, տեխնոլոգիաների և իրազեկման անձնակազմ, որոնց պաշտոնները կազատվեն Կանոնադրության քաղաքացիական ծառայության դրույթներից:

(h) Հանձնաժողովն իրավասու է վարձել խորհրդատուներ մրցութային գործընթացի միջոցով, որը համահունչ է Կանոնադրության պայմանագրային դրույթներին և ինչպես նախատեսված է համաձայն հրամանագրի:

(i) Քաղաքի գործավարը Հանձնաժողովին աջակցություն կցուցաբերի Քաղաքի ռեսուրսների հասանելիության, քաղաքային վարչությունների և անձնակազմի հետ համակարգելու և անհրաժեշտության դեպքում վարչական այլ հարցերում:

(j) Հանձնաժողովը կարող է օգտագործել Քաղաքի դատախազին որպես իրավախորհրդատու կամ կարող է խնդրել Քաղաքի դատախազին Հանձնաժողովի իրավախորհրդատու պահել:

**Բաժ. 487: Շրջանի վերաբաշխման վերջնական պլանի ընդունում:**

(a) Հանձնաժողովն ընդունում է իր շրջանի վերաբաշխման վերջնական պլանը՝ սահմանելով Խորհրդի նոր շրջանների սահմանները ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 30-ը, որն ավարտվում է թիվ մեկով:

(b) Եթե Հանձնաժողովը (a) ենթաբաժնի վերջնաժամկետին չի ընդունում շրջանի վերաբաշխման վերջնական պլանը, ապա Քաղաքի դատախազը պետք է անհապաղ միջնորդություն ներկայացնի Գերագույն դատարան՝ Բաժին 484-ում նկարագրված շրջանի վերաբաշխման չափանիշներին համապատասխան Խորհրդի նոր շրջանների սահմանները սահմանելու մասին որոշում կայացնելու համար, և այդ սահմանները կկիրառվեն Քաղաքի ընտրությունների համար, քանի դեռ Հանձնաժողովը կկարողանա ընդունել շրջանի վերաբաշխման վերջնական պլանը:

(c) Հանձնաժողովը վերջնական պլանի հետ միասին թողարկում է հաշվետվություն, որը բացատրում է, թե ինչ հիմքով է Հանձնաժողովը կայացրել իր որոշումները՝ Բաժին 484-ում նկարագրված շրջանի վերաբաշխման չափանիշներին համապատասխանեցնելու համար:

(d) Շրջանի վերաբաշխման վերջնական պլանի ընդունումից հետո Հանձնաժողովը պլանը, վերջնական հաշվետվությունը և ցանկացած այլ ուղեկցող նյութեր է ներկայացնում Քաղաքի գործավարին և հրապարակում այդ նյութը Հանձնաժողովի՝ շրջանի վերաբաշխման կայքում:

(e) Քաղաքի գործավարը պետք է տեղադրի Հանձնաժողովի շրջանի վերաբաշխման վերջնական պլանը և հաշվետվությունը Քաղաքի կայքում: Քաղաքի գործավարը հրապարակում է Խորհրդի նոր շրջանների սահմանների վերջնական հատակագիծը և նկարագրությունը նույն ձևով, ինչ Քաղաքի հրամանագիրն է:

(f) Խորհրդի նոր շրջաններ ստեղծող շրջանի վերաբաշխման վերջնական պլանն ուժի մեջ է մտնում դրա հրապարակումից 31 օր հետո, ինչպես նախատեսված է Կանոնադրության մեջ:

(g) Շրջանի վերաբաշխման վերջնական պլանը ենթակա է հանրաքվեի նույն կարգով, ինչ Քաղաքի հրամանագիրը:

(h) Որևէ շրջանի սահմանի կամ գտնվելու վայրի փոփոխություն՝ շրջանի վերաբաշխման միջոցով, չի կարող վերացնել կամ դադարեցնել Խորհրդի որևէ անդամի լիազորությունների ժամկետը մինչև այն պաշտոնավարման ժամկետի ավարտը, որի համար ընտրվել է անդամը:

(i) Հանձնաժողովի կողմից ընդունված շրջանների սահմանները չեն կարող փոփոխվել մինչև հաջորդ դաշնային տասնամյա մարդահամարի անցկացումը, բացառությամբ իրավական պահանջի լուծման կամ դատարանի որոշման:

(j) Քաղաքին կցված կամ համախմբված ցանկացած տարածք Հանձնաժողովի կողմից ավելացվում է հարակից շրջանին կամ շրջաններին: Հավելումն ուժի մեջ է մտնում միացման կամ համախմբման վարույթի ավարտից հետո:

**Բաժ. 488: Հանձնաժողովի ֆինանսավորում:**

(a) Քաղաքային խորհուրդը և Քաղաքապետը պետք է բավարար միջոցներ տրամադրեն Հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարիքները հոգալու համար, այդ թվում՝ Հանձնաժողովի անձնակազմին, խորհրդատուներին և իրավախորհրդատուներին փոխհատուցելու, շրջանի վերաբաշխման գործընթացում հանրության լայն մասնակցություն պահանջելու համար, և, անհրաժեշտության

դեպքում, պաշտպանել Հանձնաժողովի գործողությունները ցանկացած իրավական գործընթացում:

(b) Քաղաքային խորհուրդը և Քաղաքապետը միջոցներ են տրամադրում բոլոր քաղաքային ստորաբաժանումներին, որոնք ներգրավված են Հանձնաժողովի ձևավորման, հանձնաժողովին աջակցելու և Հանձնաժողովի հաշվառման վարման գործում:

(c) Հանձնաժողովի անդամները փոխհատուցվում են օրենքով նախատեսված կարգով:

**Բաժ. 489: Հանձնաժողովի առաջարկությունները:**

(a) Հանձնաժողովը կարող է առաջարկել փոփոխություններ կատարել Քաղաքի կանոնադրության և Վարչական օրենսգրքում նկարագրված անկախ շրջանի վերաբաշխման գործընթացում՝ Քաղաքի էթիկայի հանձնաժողովին ներկայացնելով հաշվետվություն՝ Հանձնաժողովի առաջարկություններին աջակցող բացահայտումներով, վերլուծություններով և տվյալներով:

(b) Քաղաքի էթիկայի հանձնաժողովը վերանայում է Հանձնաժողովի առաջարկությունները և կարող է հաշվետվություն փոխանցել Քաղաքային խորհրդին՝ շրջանի վերաբաշխման վերաբերյալ Քաղաքի կանոնադրության և Վարչական օրենսգրքում փոփոխություններ կատարելու առաջարկություններով: Այն չափով, որքանով առաջարկությունները ներառում են փոփոխություններ Վարչական օրենսգրքում, էթիկայի հանձնաժողովը նույնպես պետք է նախապատրաստի և փոխանցի Քաղաքի դատախազի աջակցությամբ ցանկացած առաջարկվող որոշում, որը կպահանջվի առաջարկվող փոփոխություններն իրականացնելու համար:

(c) Վարչական օրենսգրքի փոփոխություններ: Էթիկայի հանձնաժողովի հաշվետվությունը և դրան կից առաջարկվող որոշման ներկայացումից հետո՝ 60 օրվա ընթացքում, որով առաջարկվում են փոփոխություններ կատարել Վարչական օրենսգրքում՝ շրջանի վերաբաշխման վերաբերյալ, Քաղաքային խորհուրդն այդ հարցի առնչությամբ անցկացնում է հանրային լսումներ և որոշում կայացնում՝ առանց փոփոխության կամ չհաստատելու առաջարկվող հրամանագիրը: Եթե 60-օրյա ժամկետում խորհուրդը ձախողի չհաստատելը, ապա առաջարկվող հրամանագիրը ներկայացվում է Քաղաքապետին՝ հաստատման կամ վետոյի, և խորհրդին՝ Քաղաքապետի վետոն վերացնելու համար: Եթե այն հաստատվել է Քաղաքապետի կողմից կամ Քաղաքապետը գործողություն չի ձեռնարկել կամ խորհուրդը հաղթահարել է Քաղաքապետի վետոն, առաջարկված հրամանագիրը համարվում է հաստատված:

(d) Կանոնադրության փոփոխություններ: Էթիկայի հանձնաժողովի զեկույցը, որով առաջարկվում է փոփոխություն կատարել Քաղաքի կանոնադրության մեջ՝ շրջանի վերաբաշխման վերաբերյալ, պետք է ընկալվի Քաղաքային խորհրդի կողմից ժամանակին, որպեսզի թույլ տա կանոնադրության փոփոխությունն ընտրողներին ներկայացնել հաջորդ հասանելի ընտրությունների ժամանակ: Քաղաքի կանոնադրության փոփոխությունը պահանջում է Քաղաքի ընտրողների հավանությունը:

**Բաժ. 490: Քաղաքի տվյալների բյուրո:**

Քաղաքում պետք է ստեղծվի Տվյալների բյուրո՝ ժողովրդագրական և աշխարհագրական տվյալներ պատրաստելու և կառավարելու համար Հանձնաժողովի և քաղաքային այլ ստորաբաժանումների համար, ինչպես հետագայում նախատեսված է համաձայն հրամանագրի: Այս բաժնում ոչինչ չպետք է արգելի Տվյալների բյուրոյին տեղակայվել Քաղաքային վարչությունում կամ գրասենյակում:

Բաժ. 2. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 204-ն ուժը կորցրած է ճանաչվել հետևյալ կերպ.

**~~Բաժ. 204: Քաղաքային խորհրդի անդամների ընտրություն, Շրջանի վերաբաշխում:~~**

~~(a) **Շրջանի վերաբաշխում համաձայն հրամանագրի:** Յուրաքանչյուր տասը տարին մեկ խորհուրդը համաձայն հրամանագրի վերագծում է շրջանային~~

սահմանագծերը, որոնք պետք է օգտագործվեն Խորհրդի անդամների բոլոր ընտրությունների, ներառյալ նրանց հետկանչման, ինչպես նաև Խորհրդի անդամի ցանկացած թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝ շրջանի վերաբաշխման հրամանագրի ուժի մեջ մտնելուց հետո: Այսպես ձևավորված շրջաններից յուրաքանչյուրը պետք է պարունակի, որքան հնարավոր է, քաղաքի ընդհանուր բնակչության հավասար բաժիններ, ինչպես ցույց է տալիս դաշնային մարդահամարը, որն անմիջապես նախորդում է շրջանների ձևավորմանը:

(b) **Շրջանի վերաբաշխման հանձնաժողով:** Շրջանի վերաբաշխման հանձնաժողովը խորհուրդ է տալիս Խորհրդին՝ Խորհրդի շրջանային սահմանագծերը գծելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամները նշանակվում են հետևյալ կարգով՝ Խորհրդի յուրաքանչյուր անդամի կողմից, բացառությամբ այն, որ Խորհրդի նախագահը նշանակում է երկու անդամ, Քաղաքապետը՝ երեք, Քաղաքի դատախազը՝ մեկ և Վերահսկիչը՝ մեկ անդամ: Քաղաքի ոչ մի պաշտոնյա կամ աշխատակից իրավասու չէ աշխատել Հանձնաժողովում: Շրջանի վերաբաշխման հանձնաժողովը բյուջեի հաստատմանը համապատասխան նշանակում է տնօրեն և այլ անձնակազմ, որոնց պաշտոնները կազատվեն կանոնադրության քաղաքացիական ծառայության դրույթներից:

(c) **Շրջանի վերաբաշխման գործընթաց:** Շրջանի վերաբաշխման հանձնաժողովը նշանակվում է ոչ ուշ, քան մարդահամարի բյուրոն կիրապարակի տասնամյա մարդահամարի տվյալները: Նախքան յուրաքանչյուր հաջորդ շրջանի վերաբաշխումը Խորհրդին խորհուրդներ տալու համար կնշանակվի նոր Հանձնաժողով: Հանձնաժողովը սկսում է շրջանի վերաբաշխման գործընթացը նշանակվելուց հետո ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան 2021 թ. հունիսի 1-ը և այդ օրվանից յուրաքանչյուր հաջորդ տասնամյակը: Հանձնաժողովը պետք է փնտրի հանրային կարծիքը շրջանի վերաբաշխման գործընթացի ընթացքում: Հանձնաժողովը շրջանի վերաբաշխման իր առաջարկը ներկայացնում է Խորհրդին ոչ ուշ, քան որոշմամբ սահմանված ժամկետը:

Խորհուրդը շրջանի վերաբաշխման մասին որոշում է ընդունում ոչ ուշ, քան 2021 թ. դեկտեմբերի 31-ը և այդ օրվանից յուրաքանչյուր հաջորդ տասնամյակը: Այս բաժնում ոչինչ չպետք է արգելի Խորհրդին ավելի հաճախակի շրջանի վերաբաշխում կատարել, պայմանով, որ այդպիսով ձևավորված յուրաքանչյուր շրջան պարունակում է քաղաքի ընդհանուր բնակչության հավասար բաժիններ, ինչպես ցույց է տրված դաշնային մարդահամարը, որը անմիջապես նախորդում է շրջանների ձևավորմանը կամ հիմնված Բնակչության այլ հաշվետվություններ կամ գնահատականներ, որոնք Խորհրդի կողմից որոշվել են էապես վստահելի:

(d) **Շրջանի վերաբաշխման չափանիշները:** Բոլոր շրջանները պետք է գծվեն նահանգային և դաշնային օրենսդրության պահանջներին համապատասխան և, որքանով որ դա հնարավոր է, պետք է անձեռնմխելի պահեն թաղամասերն ու համայնքները, օգտագործեն բնական սահմանները կամ փողոցային գծերը և լինեն աշխարհագրորեն կոմպակտ:

(e) **Շրջանի վերաբաշխման ազդեցությունը գործող պաշտոնյաների վրա:** Որևէ շրջանի սահմանի կամ գտնվելու վայրի փոփոխություն՝ շրջանի վերաբաշխման միջոցով, չի կարող վերացնել կամ դադարեցնել Խորհրդի որևէ անդամի լիազորությունների ժամկետը մինչև այն պաշտոնավարման ժամկետի ավարտը, որի համար ընտրվել է անդամը:

(f) **Ներառում կամ համախմբում:** Քաղաքին կցված կամ համախմբված ցանկացած տարածք, նախքան դրա վարույթի ավարտը կամ դրա հետ կապված, Խորհրդի որոշմամբ կավելացվի հարակից շրջանին կամ շրջաններին, որի լրացումն ուժի մեջ է մտնում ներառման կամ համախմբման գործընթացի ավարտից հետո՝ անկախ Կանոնադրության այլ դրույթներից, որոնք հակասում են դրան:

(g) **Ժամկետներ:** Կենտ համարով շրջաններից ընտրված Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սկսվում է 1997 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից, իսկ զույգ համարով ընտրված անդամների համար՝ 1999 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից, բացառությամբ Բաժին 205(b)-

~~ով նախատեսված դեպքերի և մինչև 2020թ. 2020 թվականից սկսած՝ Խորհրդի այն անդամների լիազորությունները, որոնք ընտրվել են զույգ թվով շրջաններից, սկսվում են 2020 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից, իսկ կենտ համարով ընտրված անդամների համար՝ 2022 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից.~~

Բաժ. 3. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 205-ը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 205: Պաշտոնավարության ժամկետը:**

(a) Քաղաքապետը, Քաղաքի դատախազը, Վերահսկողը և Խորհրդի անդամները պաշտոնավարում են չորս տարի ժամկետով, բացառությամբ ենթաբաժին (b)-ում նախատեսված դեպքերի:

(b) Անկախ Կանոնադրության որևէ այլ դրույթից, 2020 թվականից սկսած ընտրությունների նոր ամսաթվերին անցնելու համար 2015 թվականին ընտրված Խորհրդի անդամները կընտրվեն 2020 թվականի դեկտեմբերին ավարտվող ժամկետով, իսկ 2017 թվականին ընտրված Քաղաքապետը, Քաղաքի դատախազը, Վերահսկողը և Խորհրդի անդամները կընտրվեն 2022 թվականի դեկտեմբերին ավարտվող ժամկետով:

(c) ~~Քաղաքային պաշտոնի ընտրված պաշտոնատար անձի լիազորությունները սկսվում են ընտրվելուց հաջորդող հուլիսի առաջին օրվանից մինչև 2020 թվականը: 2020 թվականից սկսած՝~~ Խորհրդի այն անդամների լիազորությունները, որոնք ընտրվել են զույգ թվով շրջաններից, սկսվում են 2020 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից: Քաղաքապետի, Քաղաքի դատախազի, Վերահսկողի և Խորհրդի այն անդամների պաշտոնավարման ժամկետները, որոնք ընտրվել են կենտ թվով ընտրատարածքներից, սկսվում են 2022 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից: Քաղաքային պաշտոնի ընտրված պաշտոնատար անձի ժամկետը սկսվում է ընտրվելուց հաջորդող դեկտեմբերի երկրորդ երկուշաբթի օրը:

(d) Բացառությամբ այն դեպքերի, երբ պաշտոնի համար թափուր տեղ է ստեղծվում Բաժին 207-ի համաձայն, ընտրված և նշանակված պաշտոնների գործող անձինք պաշտոնավարում են այնքան ժամանակ, քանի դեռ նրանց իրավահաջորդները չեն որակավորվել:

Բաժ. 4. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 245-ի (d) ենթաբաժնում ավելացվել է նոր ենթաբաժին (9), որը ազատում է Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովի գործողությունները Քաղաքային խորհրդի վերանայումից, հետևյալ շարադրությամբ.

(9) Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովի գործողությունները:

Բաժ. 5. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 252-ի Ենթաբաժին (h) ուժը կորցրած է ճանաչվել, և (i), (j) և (k) ենթաբաժինները վերահամարակալվել են (h), (i) և (j) ենթաբաժիններով, համապատասխանաբար կարդալ հետևյալ շարադրությամբ.

**Բաժ. 252: Հրամանագրերի, հրահանգների և որոշումների ուժի մեջ մտնելու ամսաթիվը:**

Հրահանգներն ու որոշումներն ուժի մեջ են մտնում դրանց ընդունման պահից, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք չեն պահանջում Քաղաքապետի հավանությունը, որի դեպքում դրանք ուժի մեջ են մտնում Քաղաքապետի հաստատումից կամ Քաղաքապետի վետոյի հաղթահարման պահից: Հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակումից 31 օր հետո, բացառությամբ Բաժին 253-ի համաձայն ընդունված հրատապ որոշումների, և բացառությամբ հետևյալ որոշումների, որոնք ուժի մեջ են մտնում հրապարակման պահից.

(a) հրամանագիր, որը պատվիրում է կամ այլ կերպ կապված է ընտրությունների հետ,

(b) հրամանագիր, որը պատվիրում է կամ այլ կերպ կապված է Քաղաքային տարեկան հարկերի գանձման կամ հավաքագրման հետ,

(c) հրամանագիր, որը նախատեսում կամ փոփոխում է հետևյալներից որևէ մեկը՝ կապված փողոցների, բուլվարների, պուրակների, դատարանների կամ այլ հասարակական վայրերի հետ,

(d) կոյուղու կամ անձրևաջրերի կառուցման վերաբերյալ հրամանագիր,

(e) (c) և (d) ենթաբաժիններում նշված նպատակներից որևէ մեկի համար մասնավոր սեփականության նկատմամբ հայցեր կամ գործողություններ հարուցելու կամ վարելու կամ մասնավոր սեփականության վրա տեղական գնահատականներ գանձելու կամ հավաքելու վերաբերյալ հրամանագիր,

(f) հրամանագիր, որը վերաբերում է զբոսայգիների, բուլվարների կամ խաղահրապարակների համար հողատարածքների դատապարտմանն այն օրենքներով կամ որոշումներով, որոնք նախատեսում են դրանց ծախսերի վճարումը տեղական գնահատմամբ մասնավոր սեփականության վրա,

(g) հրամանագիր՝ կապված պաշտոնների դասերի ստեղծման, աշխատավարձերի սահմանման, անձնակազմի աշխատանքի ընդունման թույլտվության կամ աշխատանքի պայմանների սահմանման հետ,

~~(h) հրամանագիր, որով հիմնվում է խորհուրդ կամ Կրթական խորհրդի շրջաններ,~~

~~(i)~~(h) Կանոնադրության Հոդված XI համապատասխան կենսաթոշակ կամ կենսաթոշակային նպաստներ սահմանող հրամանագիր,

~~(j)~~(i) որևէ պայմանագիր կնքող կամ թույլատրող հրամանագիր, բացառությամբ որևէ արտոնություն, իրավունք կամ արտոնություն տրամադրող հրամանագրի, և

~~(k)~~(j) Քաղաքի կամ Քաղաքի ներսում գտնվող որևէ շրջանի պարտատոմսերի վաճառքը կամ թողարկումը թույլատրող ցանկացած հրամանագիր:

Բաժ. 6. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 272-ի Ենթաբաժին (c) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(c) **Խորհուրդներ:** Գույքային բաժինների խորհուրդները, Էթիկայի հանձնաժողովը, Հրշեջների և ոստիկանության կենսաթոշակային հանձնակատարների խորհուրդը, Los Angeles քաղաքի աշխատողների կենսաթոշակային համակարգի կառավարման խորհուրդը,~~և~~ Ջրային ռեսուրսների և էլեկտրաէներգիայի աշխատողների կենսաթոշակային համակարգի կառավարման խորհուրդը, և Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովը պետք է հաճախորդի որոշումներ կայացնի դատական գործընթացներում, որոնք վերաբերում են բացառապես այն քաղաքականություններին և ֆինանսական միջոցներին, որոնց նկատմամբ Կանոնադրությունը վերահսկում է այդ խորհուրդներին:

Բաժ. 7. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 273-ի Ենթաբաժին (a) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(a) **Խորհուրդներ:** Գույքային բաժինների խորհուրդները, Էթիկայի հանձնաժողովը, Հրշեջների և ոստիկանության կենսաթոշակային հանձնակատարների խորհուրդը, Los Angeles քաղաքի աշխատողների կենսաթոշակային համակարգի կառավարման խորհուրդը, ~~և~~ Ջրային ռեսուրսների և էլեկտրաէներգիայի աշխատողների կենսաթոշակային համակարգի կառավարման խորհուրդը, և Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովը իրավասու է հաստատել կամ մերժել դատական վեճերի կարգավորումը, որը վերաբերում է բացառապես այն քաղաքականությանը և ֆինանսական միջոցներին, որոնց նկատմամբ Կանոնադրությունը վերահսկում է այդ խորհուրդներին: Բոլոր մյուս

դատական վեճերի լուծումը պետք է իրականացվի սույն բաժնի (b) և (c) ենթակետերին համապատասխան:

Բաժ. 8. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 281-ին ավելացվել է նոր Ենթաբաժին (h), որը վերաբերում է Քաղաքի գործավարի լիազորություններին և պարտականություններին՝ հետևյալ խմբագրությամբ.

(h) Քաղաքի գործավարը պետք է կատարի Կանոնադրությամբ և համաձայն հրամանագրի նախատեսված Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովի հետ կապված պարտականությունները:

Բաժ. 9. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 502-ի Ենթաբաժին (d)-ում հանձնակատարների հեռացման մասին փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(d) Հեռացում: Քաղաքի էթիկայի հանձնաժողովից և Ոստիկանության հանձնաժողովից բացի խորհրդի կամ հանձնաժողովի անդամները, որոնք նշանակվում են Քաղաքապետի կողմից՝ խորհրդի հաստատմամբ, կարող են պաշտոնանկ արվել Քաղաքապետի կողմից առանց խորհրդի հաստատման: Ոստիկանության հանձնաժողովի անդամներին կարող է պաշտոնանկ արվել Քաղաքապետի կողմից, իսկ պաշտոնանկ արված անդամը պաշտոնանկ անելուց հետո տասն օրացուցային օրվա ընթացքում կարող է բողոքարկել որոշումը Խորհրդում: Բողոքն ստանալուց հետո Խորհրդի նիստի տասը օրվա ընթացքում Խորհուրդը կարող է Խորհրդի ձայների երկու երրորդով վերականգնել հանձնաժողովի անդամին: Խորհրդի կողմից հանձնակատարին այս ժամանակահատվածում չվերականգնելը համարվում է բողոքի մերժում: Բողոքարկման վերաբերյալ հայցը պետք է իրականացվի պաշտոնանկ արված անդամի իրավահաջորդի նշանակման հաստատումից առանձին գործողությամբ: Քաղաքի էթիկայի հանձնաժողովի անդամները կարող են հեռացվել Բաժին 700-ի համաձայն: Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովի անդամները կարող են հեռացվել Բաժին 483-ի համաձայն:

Բաժ. 10. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 514-ի Ենթաբաժին (b)-ում ավելացվել է նոր ենթաբաժին (8)՝ Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովին ազատելու Քաղաքապետի և Քաղաքային խորհրդի լիազորություններից՝ փոխանցելու քաղաքային վարչությունների, գրասենյակների և խորհուրդների լիազորությունները, պարտականություններն ու գործառույթները՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

(8) Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով:

Բաժ. 11. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 702-ին ավելացվել է նոր Ենթաբաժին (m)՝ կապված Էթիկայի հանձնաժողովի պարտավորությունների և պարտականությունների հետ՝ հետևյալ խմբագրությամբ.

(m) կատարել Կանոնադրությամբ և համաձայն հրամանագրի նախատեսված Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովի հետ կապված պարտականությունները:

Բաժ. 12. Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները միակողմանի են համարվում: Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները բաժանելի են:

## LL ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՆԿԱԽ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ LOS ANGELES-Ի ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ LL:

Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ հիմնելու համար շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով՝ յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ Los Angeles Միասնական դպրոցական շրջանում վերստին գծելու Կրթության խորհրդի շրջանի սահմանները:

### ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ
### SHARON M. TSO, ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

Los Angeles Քաղաքի (Քաղաք) կանոնադրությունը (Կանոնադրություն) սահմանում է այն գործընթացը, որով Los Angeles-ի Միասնական դպրոցական շրջանի (LAUSD) Կրթական խորհրդի (Խորհուրդ) շրջանի սահմանները գծվում են յուրաքանչյուր տասը տարին մեկ և ընդունվում համաձայն հրամանագրի՝ դաշնային մարդահամարից հետո: Հետագայում, Վարչության շրջանի այդ սահմաններն օգտագործվում են Վարչության անդամների ընտրությունների, հետկանչի և Վարչության թափուր պաշտոնները լրացնելու համար: Ներկայումս նշանակված խորհրդատվական հանձնաժողովը խորհուրդ է տալիս Խորհրդին փոխել այդ սահմանների վերանայման գործընթացում: Շրջանի սահմանների վերջնական որոշումները կայացնում են Խորհուրդը և Քաղաքապետը:

Այս միջոցառումը կփոփոխի Կանոնադրությունը՝ պահանջելով ստեղծել Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով (Հանձնաժողով), որն իրավասություններ, պարտավորություններ և պարտականություններ կունենա՝ յուրաքանչյուր դաշնային մարդահամարից հետո տասը տարին մեկ ընդունելու Վարչության շրջանի սահմանները: Հանձնաժողովից կպահանջվի գծել Խորհրդի շրջանների սահմանները Միացյալ Նահանգների Սահմանադրությանը, California-ի Սահմանադրությանը և քվեարկության իրավունքի դաշնային օրենքին համապատասխան, ինչպես նաև հետևել Կանոնադրության և Քաղաքի այլ օրենքներով սահմանված շրջանների սահմանների վերանայման չափանիշներին և գործընթացին:

Հանձնաժողովից կպահանջվի անաչառ կերպով գործել Վարչության շրջանի սահմանների մշակման հարցում՝ առանց ընտրված պաշտոնյաների ներգրավման: Խորհրդի շրջանի վերջնական սահմանները կհաստատվեն բացառապես Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը նաև կիրազեկի և կտեղեկացնի հանրությանը շրջանների սահմանների վերանայման մասին, կանցկացնի հանրային հանդիպումներ և լսումներ, կընդունի և կքննարկի հանրային կարծիքը, առաջարկություններ կանի Քաղաքին շրջանների սահմանների վերանայման գործընթացի վերաբերյալ և կկատարի շրջանների սահմանների վերանայման այլ գործառույթներ, ինչպես սահմանված է քաղաքի օրենքով: Հանձնաժողովի անդամին կարգելվի շփվել անհատի կամ կազմակերպության հետ՝ կապված հանրային ժողովից դուրս շրջանների սահմանների վերանայման հարցերի հետ: Հանձնաժողովը կարող է թույլատրել մինչև 18 տարեկան անձանց մասնակցել Հանձնաժողովին, ինչպես լիազորված է Քաղաքի օրենքով:

Հանձնաժողովը կընտրվի առանց ընտրված պաշտոնյաների ներգրավման և բաղկացած կլինի 14 անդամից և չորս փոխարինողներից: Հանձնաժողովը ստեղծվելու է յուրաքանչյուր դաշնային մարդահամարից հետո տասը տարին մեկ և ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը, որն ավարտվում է զրոյական թվով: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի լիազորությունների ժամկետը

սկսվում է ընտրության օրվանից և ավարտվում Հանձնաժողովի հաջորդ առաջին անդամի ընտրության օրը: Հանձնաժողովի անդամների որակավորումներն ու սահմանափակումները ներառում են հետևյալը.

- Ընտրության պահին լինել առնվազն 18 տարեկան և LAUSD-ի բնակիչ,
- Բնակվել են LAUSD-ում առնվազն երեք տարի՝ անձի կողմից դիմում ներկայացնելուց անմիջապես առաջ,
- Ցույց տալ համագործակցային հմտություններ, քաղաքացիական ներգրավվածության փորձ և բարդ տվյալներ վերլուծելու կարողություն,
- Անձը պարտավոր չէ լինել գրանցված ընտրող կամ Միացյալ Նահանգների քաղաքացի,
- Անձը չի կարող LAUSD-ի աշխատակից կամ LAUSD-ի հանձնակատար լինել դիմումի ներկայացմանը նախորդող առնվազն չորս տարի,
- Անձի կամ անձի ամուսինը/կինը կամ ընտանիքի անդամը չի կարող զբաղվել նախկինում քաղաքական լոբբիստական գործունեությամբ, որը նկարագրված է California-ի Ընտրական օրենսգրքի դրույթներում՝ կապված շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովների իրավասության պահանջների հետ,
- Հանձնաժողովի անդամները պարտավոր են ներկայացնել տնտեսական շահերի և ֆինանսական այլ բացահայտումներ,
- Հանձնաժողովում ծառայելու ընթացքում անձը չի կարող հավանություն տալ, աշխատել, կամավոր կամ քարոզարշավի նվիրատվություն կատարել Կրթական խորհրդի որևէ ընտրված անդամի կամ Կրթական խորհրդի ընտրովի գրասենյակի թեկնածուի համար, կամ ծառայել ցանկացած այլ ղեկավար մարմնի շրջանների սահմանների վերաբաշխող հանձնաժողովում,
- Հանձնակատարը կարող է պաշտոնանկ արվել պարտականությունների էական անփութության կամ պաշտոնում այլ սխալ վարքագծի համար Հանձնաժողովի ձայների երկու երրորդով, որը կարող է բողոքարկվել Քաղաքի Էթիկայի հանձնաժողովին, և
- Քաղաքի գործավարը կղեկավարի Հանձնաժողովի դիմումի գործընթացը, իսկ Էթիկայի հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում:

Այս Կանոնադրության փոփոխությունն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## MATTHEW W. SZABO, ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՅԱ

Այս օրենսդրական նախագիծը յուրաքանչյուր տասը տարին մեկ ստեղծում է Los Angeles քաղաքի Միասնական դպրոցական շրջանի (LAUSD) 14 անդամից Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով: Հանձնակատարի փոխհատուցումը կսահմանվի այս պահին անհայտ գումարներով համաձայն հրամանագրի: Այս օրենսդրական նախագիծը պահանջում է, որ Քաղաքի գործավարը և Էթիկայի հանձնաժողովն աջակցեն հանձնակատարի ընտրությանը և պահանջում է, որ քաղաքի գործավարը աջակցի հանձնաժողովի բնականոն գործառույթների հետ կապված վարչական խնդիրներին: Թեև հանձնակատարի փոխհատուցումը կսահմանվի հրամանագրի միջոցով, և Քաղաքի վարչական ծախսերը կլուծվեն որպես քաղաքի տարեկան բյուջեի գործընթացի մաս, երբ մշակվեն վարչական ընթացակարգերը, իրական ծախսերը տարեցտարի կտարբերվեն՝ ելնելով հանձնաժողովի ծանրաբեռնվածությունից: Մասնակի տարվա ծախսերը ակնկալվում են սկսած 2028-29 թթ.-ին, որի գնահատված ազդեցությունը կկազմի $1,163,746 Քաղաքի գլխավոր հիմնադրամին: 2029-30 թվականների ամբողջ տարվա ծախսերը գնահատվում են $2,485,756: Ակնկալվում է, որ հանձնաժողովի ողջ կյանքի ընթացքում կուտակային ծախսերը կկազմեն մոտավորապես $6,161,630: Ծախսերը պետք է փոխհատուցվեն LAUSD-ի կողմից:

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ LL-Ի

**«ԱՅՈ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ LL** – Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով

Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի (LAUSD) ընտանիքներն ու աշակերտներն արժանի են շրջանի վերաբաշխման գործընթացի, որն առաջնահերթություն է տալիս համայնքի ներկայացուցչությանը, այլ ՈՉ ԹԵ քաղաքական ինսայդերներին: Յուրաքանչյուր տասը տարին մեկ դաշնային օրենքը պահանջում է, որ Վարչության շրջանների սահմանները վերագծվեն բնակչության փոփոխության պատճառով: Շրջանի վերաբաշխման այս գործընթացը որոշում է, թե որտեղ են սահմանվելու Վարչության շրջանի սահմանները և որ համայնքներն են ներկայացվում LAUSD Վարչությունում, և որոնք են ձայնը կորցնում:

Ներկայումս գործող քաղաքական գործիչները որոշում են Վարչության շրջանները: Այս գործընթացը խարխլվում է քաղաքականության կողմից՝ փոխանակ ուսանողների, ընտանիքների և համայնքների վրա կենտրոնանալու, որոնց ծառայում է LAUSD-ը: Մեզ պետք է այնպիսի համակարգ, որը շրջանի վերաբաշխման իրավասությունը կտա մարդկանց, այլ ոչ թե քաղաքական գործիչներին:

**Կանոնադրության փոփոխություն LL-ը որոշումներ կայացնելու կարևոր լիազորություններ կտա LAUSD-ի համայնքի անդամներին և ամբողջությամբ կվերցնի այդ իշխանությունը քաղաքական գործիչների ձեռքից:** Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովը փորձված, վստահելի, անկուսակցական բարեփոխում է, որը լավ է աշխատել California-ի բազմաթիվ այլ իրավասություններում: Սա թույլ է տալիս LAUSD-ի անաչառ և անկողմնակալ բնակիչներին որոշել Վարչության շրջանների սահմանները՝ հիմնվելով հասարակության ներգրավման վրա:

Կանոնադրության փոփոխություն LL-ը.

- Շրջանի վերաբաշխման անկախ հանձնակատարներին կտա բոլոր լիազորությունները՝ հաստատելու շրջանի վերաբաշխման նոր ծրագրեր՝ LAUSD-ը վերաբաշխելու առանց քաղաքական գործիչների ազդեցության, միաժամանակ պահանջելով թափանցիկություն և հասարակության մասնակցություն ողջ գործընթացում

- Կապահովի LAUSD-ի բոլոր համայնքների ներկայացուցչությունը, ներառյալ Շրջանի քաղաքները և քաղաքային ներգրավված համայնքները

- Կպաշտպանի համայնքներն ըստ շահերի, որպեսզի նրանք իսկապես ներկայացված լինեն Վարչության շրջաններում

- Կարգելի ընտրակեղծիքը և շրջանների մանիպուլյացիան՝ ի շահ թեկնածուի կամ կուսակցության

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում քաղաքային որևէ գործակալության կողմից:**

- Կապահովի, որ LAUSD-ի ներկայիս սովորողների ծնողներն ու խնամակալները ներկայացուցչություն ունեն հանձնաժողովում
- Կապահովի, որ LAUSD-ի շահագրգիռ կողմերը, ներառյալ երիտասարդները և աշակերտները, շրջանի անձնակազմը և ուսուցիչները, ի թիվս այլոց, կարողան մասնակցություն ունենալ

Նոր հանձնաժողովն իր կարևոր աշխատանքը կսկսի 2030 թվականին և այդ գործընթացը կազատի քաղաքական ազդեցությունից:

**Խնդրում ենք միանալ մեզ և քվեարկել «ԱՅՈ» Կանոնադրական փոփոխություն ԼԼ-ի օգտին:**

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԼԼ-Ի ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

COMMON CAUSE
Dan Vicuna
Շրջանի վերաբաշխման և ներկայացուցչության տնօրեն

TANYA ORTIZ FRANKLIN
Վարչության անդամ
Los Angeles Unified School District

JOHN KIM
Նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն
Catalyst California

VANESSA ARAMAYO
Գլխավոր գործադիր տնօրեն և նախագահ
Alliance for a Better Community

JACKIE GOLDBERG
Վարչության նախագահ
Los Angeles Unified School District

HECTOR SANCHEZ
Քաղաքական տնօրենի տեղակալ
Community Coalition

DAVID LEVITUS
Գործադիր տնօրեն
LA Forward Institute

**ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՄ ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:**

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

## ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ LL-Ի

«ԱՅՈ» քվեարկությունը Կանոնադրության փոփոխություն LL-ի համար երաշխավորում է, որ ծնողները, ընտանիքները և սովորական մարդիկ վերահսկում են Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի (LAUSD) սահմանների վերանայումը:

Ընտրողները պետք է ընտրեն իրենց քաղաքական գործիչներին, քաղաքական գործիչները չպետք է ընտրեն իրենց ընտրողներին: Կանոնադրության փոփոխություն LL-ը **կարևորում է LAUSD-ի ուսանողներին և ընտանիքներին շրջանների սահմանների վերանայման գործընթացում** և թույլ չի տալիս քաղաքական գործիչներին խախտել դպրոցական խորհրդի շրջանի սահմանները: «ԱՅՈ» քվեարկությունը նշանակում է, որ սահմանների վերանայման անկախ հանձնաժողովը, որը կազմված է համայնքի որակավորված և անաչառ անդամներից, կղեկավարի գործընթացը: Համայնքի անդամները կարտացոլեն LAUSD համայնքների բազմազանությունը՝ վերացնելով շահերի բախումը, որը բնորոշ է քաղաքական գործիչներին, ովքեր գծում են իրենց շրջանները:

«Իրավասությունները, որոնք ստեղծել են իսկապես շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողովներ, ունեն հանրային մասնակցության բարձր մակարդակ, ավելի քիչ ջերրիմանդերինգ և շրջաններ, որոնք ներկայացնում են համայնքները, այլ ոչ թե առանձին քաղաքական գործիչների շահերը»: - The Los Angeles Times

Շրջանի սահմանների վերանայման անկախ հանձնաժողովներն աշխատում են ժողովրդի շահերը կարևորելու համար: Միացե՛ք մեզ և քվեարկե՛ք **ԱՅՈ** Կանոնադրության փոփոխություն LL-ի համար:

### ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ LL-Ի ՕԳՏԻՆ ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

CALIFORNIA COMMON CAUSE
Russia Chavis Cardenas
Քվեարկության իրավունքի և շրջանների սահմանների վերանայման ծրագրի ղեկավար

REVEREND EDDIE ANDERSON
LA քաղաքի շրջանների սահմանների վերանայման հանձնակատար 2020

HENRY PEREZ
Գործադիր տնօրեն
InnerCity Struggle

DR. LORAINE LUNDQUIST
Նախկին անդամ
2021 LAUSD Redistricting Commission

KRISTINE WILLIAMS
Փոխնախագահ - Strategic Initiatives
Community Development Technologies Center

LAURICE SOMMERS ԵՎ MARY DICKSON
Համանախագահ
League of Women Voters Greater Los Angeles

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

Նոր դրույթները կամ լեզուն, որն ավելացվել է կանոնադրությանը կամ գոյություն ունեցող կանոնադրության բաժիններին, ցույց են տրված ընդգծված տառատեսակով. կանոնադրությունից կամ կանոնադրության գոյություն ունեցող բաժիններից ջնջված բառերը ցույց են տրվում ~~վրացծված~~ տառատեսակով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ LL

Բաժին 1. Los Angeles քաղաքի Կանոնադրությանն ավելացվում են Բաժիններ 810-ից 819-ը՝ հետևյալ խմբագրությամբ.

***Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով***

**Բաժ. 810: Հանձնաժողովի հիմնում և նպատակ:**

(a) Պետք է հիմնվի Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի Շրջանների սահմանների վերանայման անկախ հանձնաժողով («Հանձնաժողով»), որը պետք է ունենա Քաղաքի կանոնադրությամբ և որոշմամբ սահմանված լիազորությունները, պարտավորությունները և պարտականությունները:

(b) Հանձնաժողովի նպատակն է ուժեղացնել Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի կառավարումը՝ զարգացնելով Կրթական խորհրդի շրջանների սահմաններն արդար, թափանցիկ, ներառական և անկախ շրջանի վերաբաշխման գործընթացի միջոցով, որը խթանում է հանրության մասնակցությանը և հանրության հասանելիությունը դեպի ընթացակարգեր:

**Բաժ. 811: Հանձնաժողովի կազմակերպումը, լիազորությունները և պարտականությունները:**

(a) Հանձնաժողովը բաղկացած կլինի 14 անդամից և չորս փոխարինող անդամից:

(b) Յուրաքանչյուր տասը տարին մեկ դաշնային մարդահամարից հետո ստեղծվում է նոր Հանձնաժողով: Հանձնաժողովի անդամներն ընտրվում են զրո թվով ավարտվող յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ից ոչ ուշ:

(c) Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի լիազորությունների ժամկետը սկսվում է այդ հանձնակատարի համապատասխան ընտրության օրվանից և ավարտվում է Հանձնաժողովի հաջորդ անդամի ընտրությունից հետո:

(d) Հանձնաժողովն իրավասու է և պարտավոր է՝

(1) ընդունել Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի Կրթական խորհրդի շրջանների սահմանները յուրաքանչյուր տասը տարին մեկ անցկացվող դաշնային մարդահամարից հետո,

(2) համապատասխանել Կանոնադրությամբ և որոշմամբ սահմանված շրջանի վերաբաշխման չափանիշներին և գործընթացին,

(3) գործել անաչառ կերպով, որն ապահովում է շրջանի վերաբաշխման գործընթացի ամբողջականությունն ու արդարությունը,

(4) կրթել և տեղեկացնել հանրությանը շրջանի վերաբաշխման մասին, պահանջել և խրախուսել հանրության մասնակցությունը շրջանի վերաբաշխման գործընթացին, ինչպես նաև անցկացնել հանրային հանդիպումներ և լսումներ, որոնք հասանելի են և հանրությանը հնարավորություն են տալիս մասնակցելու և մեկնաբանություններ տալու գործընթացին,

(5) ներկայացնել առաջարկություններ Քաղաքապետին, Քաղաքային խորհրդին և Քաղաքի էթիկայի հանձնաժողովին շրջանի վերաբաշխման հարցերի վերաբերյալ, և

(6) կատարել շրջանի վերաբաշխման այլ գործառույթներ ըստ հրամանագրի:

(e) Հանձնաժողովը կարող է ապահովել Հանձնաժողովում երիտասարդների մասնակցությունն ընթացակարգով ընտրված և որոշմամբ նախատեսված լիազորություններն ու պարտականությունները կրող մասնակիցներով:

**Բաժ. 812: Հանձնակատարի որակավորումները և սահմանափակումները:**

(a) Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է լինի առնվազն 18 տարեկան, բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայն հրամանագրի սահմանված է նվազագույն տարիքային պահանջ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ընտրվելու պահին պետք է լինի Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի բնակիչ և պետք է բնակվի Los Angeles-ի միացյալ դպրոցական շրջանում առնվազն երեք տարի՝ անձի դիմումը ներկայացնելուց անմիջապես առաջ: Հանձնակատարից չի պահանջվում լինել գրանցված ընտրող կամ Միացյալ Նահանգների քաղաքացի:

(b) Անձն իրավասու չէ դիմել կամ աշխատել Հանձնաժողովում, եթե անձը եղել է Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի աշխատող կամ Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի հանձնաժողովի անդամ՝ անձի կողմից դիմումը ներկայացնելուն անմիջապես նախորդող չորս տարվա ընթացքում:

(c) Անձն իրավասու չէ դիմելու Հանձնաժողովին կամ ծառայելու այնտեղ, եթե անձը կամ անձի ամուսինը/կինը կամ ընտանիքի անդամը նախկինում մասնակցել է California-ի ընտրական օրենսգրքի դրույթներում նկարագրված քաղաքական և լոբբիստական գործունեությանը՝ կապված շրջանի վերաբաշխման անկախ հանձնաժողովների իրավասության պահանջների հետ: Իրավասության լրացուցիչ պահանջներ կարող են տրվել համաձայն հրամանագրի:

(d) Հանձնաժողովի դիմորդները պետք է դրսևորեն համագործակցության հմտություններ, քաղաքացիական ներգրավվածության փորձ և բարդ տվյալներ վերլուծելու կարողություն:

(e) Հանձնաժողովում ծառայելու ընթացքում Հանձնաժողովի անդամը չպետք է աջակցություն հայտնի, աշխատի, կամավորական սկզբունքներով աշխատի կամ քարոզարշավի համար ներդրում կատարի Կրթական խորհրդի անդամի կամ Կրթական խորհրդի ընտրովի պաշտոնի թեկնածուի համար, կամ ծառայի որևէ այլ պետական մարմնի շրջանի վերաբաշխող հանձնաժողովում:

(f) Հանձնաժողովի անդամը կամ նախկին անդամը չպետք է անի հետևյալներից որևէ մեկը.

(1) Լինել Կրթական խորհրդի ընտրովի պաշտոնի թեկնածու, եթե չի անցել ավելի քան հինգ տարի Հանձնաժողովում անդամի վերջին ծառայության օրվանից կամ տասը տարի չի անցել Հանձնաժողովում անդամի ընտրվելու օրվանից, որն ավելի քիչ է:

(2) Լինել Կրթական խորհրդի ընտրովի պաշտոնի թեկնածու ցանկացած շրջանի համար, որի համար ընտրությունները կանցկացվեն՝ օգտագործելով շրջանային սահմանները, որոնք ընդունվել են Հանձնաժողովի կողմից, որին անդամը ծառայել է:

(g) Հանձնաժողովում ծառայության վերջին օրվանից չորս տարվա ընթացքում կամ Հանձնաժողովում ընտրվելու օրվանից հետո տասը տարվա ընթացքում, որը որ ավելի պակաս է, Հանձնաժողովի անդամը կամ նախկին անդամը չպետք է անի

հետևյալներից որևէ մեկը.

(1) Ընդունի պաշտոնի նշանակում Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի մեկ այլ հանձնաժողովում:

(2) Ընդունվի աշխատանքի որպես անձնակազմի վարձատրվող անդամ կամ ստանա փոխհատուցում որպես խորհրդատու, Կրթական խորհրդի անդամ կամ Կրթական խորհուրդի ընտրովի պաշտոնի թեկնածուի համար:

(3) Ստանա ոչ մրցակցային հայտի պայմանագիր Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանից:

(4) Գործի որպես գրանցված լոբբիստ Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանում:

(5) Ընդունի նշանակում Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի պաշտոնի:

(h) Հանձնաժողովի այլընտրանքային անդամները ենթակա են նույն իրավասության պահանջներին, վարքագծի չափանիշներին և սահմանափակումներին, ինչ Հանձնաժողովի մյուս անդամները:

**Բաժ. 813: Հանձնակատարի ընտրությունը և հեռացումը:**

(a) Ապագա հանձնաժողովականներին բացահայտելու համար դիմումների գործընթացը պետք է սկսվի ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը, որն ավարտվում է ինը թվով:

(b) Քաղաքի գործավարը ղեկավարում է Հանձնաժողովի դիմումի գործընթացը, իսկ Քաղաքի էթիկայի հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում: Քաղաքի գործավարը և Քաղաքի էթիկայի հանձնաժողովը կարող են այդ պարտականությունները փոխանցել իրենց աշխատակազմին կամ խորհրդատուներին:

(c) Քաղաքի գործավարը պետք է իրականացնի իրազեկման և կրթական ծրագիր՝ ապահովելու Հանձնաժողովի դիմումի գործընթացի հրապարակման և իրազեկման առկայությունը՝ անապահով համայնքներին հասնելու ջանքերով և բազմաթիվ լեզուներով, համաձայն հրամանագրի: Քաղաքի գործավարը պետք է մոնիտորինգի ենթարկի և հրապարակի հայտերի ներկայացման ժողովրդագրական տվյալները և ողջամտորեն անհրաժեշտության դեպքում ընդլայնի իրազեկումը, որպեսզի համոզվի, որ հայտատուների խումբն ունի բավարար թվով որակավորված դիմորդներ և ողջամտորեն արտացոլում է Los Angeles Միասնական դպրոցական շրջանի բազմազանությունը:

(d) Հանձնաժողովում ծառայության իրավասության պահանջները բավարարող շահագրգիռ անձը կարող է դիմում ներկայացնել Քաղաքի գործավարին: Քաղաքի գործավարը պետք է ուսումնասիրի հայտերը և ստեղծի հայտատուների խումբ, որը բաղկացած է այն անձանցից, ովքեր բավարարում են Բաժին 812-ի (a)-ից (c) ենթաբաժիններում նշված օբյեկտիվ իրավասության պահանջները:

(e) Քաղաքի գործավարը հրապարակում է անձանց անունները հայտատուի խմբում հանրային վերանայման համար և սահմանում է գործընթաց, որով հանրությունը կարող է տեղեկատվություն տրամադրել հայտատուի խմբում անհատի իրավասության վերաբերյալ: Քաղաքի էթիկայի հանձնաժողովը պետք է վերանայի հանրության կողմից տրամադրված տեղեկատվությունը և որոշի, թե արդյոք որևէ անձ պետք է հեռացվի հայտատուների ցանկից:

(f) Հանրային վերանայման ժամանակաշրջանից հետո Քաղաքի էթիկայի հանձնաժողովը գնահատում է հայտատուների խմբի անհատների դիմումները՝

բացահայտելու այն անձանց, ովքեր բավարարում են Բաժին 812-ի (a)-ից (d) ենթաբաժիններով սահմանված իրավասության պահանջները և որոնք պետք է ընդգրկվեն Հանձնաժողովի ընտրության ցուցակում: Հանձնաժողովի Ընտրության ցուցակի ստեղծումից հետո Քաղաքի էթիկայի հանձնաժողովն իրավասու է տեղեկատվություն ստանալու հանրությունից և որոշումներ կայացնելու Հանձնաժողովի ընտրության ցուցակում գտնվող անձանց շարունակական իրավասության վերաբերյալ:

(g) Քաղաքի գործավարը պետք է անցկացնի պատահական վիճակահանություն հանրային հանդիպման ժամանակ՝ Կրթական խորհրդի յոթ շրջաններից յուրաքանչյուրի աշխարհագրական տարածաշրջանում բնակվող մեկ անձի ընտրելու համար: Ընտրության այս գործընթացի արդյունքը կլինի Հանձնաժողովի յոթ անդամի ընտրությունը՝ մեկական անդամ Կրթական խորհրդի յոթ շրջանների աշխարհագրական տարացքներից յուրաքանչյուրից:

(h) Ընտրված յոթ հանձնաժողովականները պետք է վերանայեն Հանձնաժողովի ընտրության ցուցակի մնացած բոլոր դիմորդների դիմումները՝ Հանձնաժողովի լրացուցիչ յոթ անդամների ընտրելու համար: Այս ընտրությունները պետք է կատարվեն հանրային հանդիպման ժամանակ նախնական յոթ հանձնաժողովականների ձայների երկու երրորդով՝ ելնելով դիմողի համապատասխան փորձից և փորձառությունից, Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի թաղամասերին ծանոթ լինելուց, անաչառ լինելու կարողությունից և ապահովելու, որ Հանձնաժողովն արտացոլի քաղաքի բազմազանությունը, ներառյալ ռասայական, էթնիկական, սեռի, գենդերային, սեռական կողմնորոշման, տարիքային, եկամտային, մասնագիտական և աշխարհագրական բազմազանությունը: Այնուամենայնիվ, այդ նպատակով բանաձևեր կամ գործակիցներ չեն կիրառվում: Այս ընտրությունները նույնպես պետք է կատարվեն այնպես, որ ապահովվի, որ Հանձնաժողովի 14 անդամներից առնվազն չորսը լինեն այն աշակերտների ծնողները կամ խնամակալները, ովքեր ընտրության պահին հաճախում են Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի դպրոց:

(i) 14 հանձնաժողովականների ընտրվելուց հետո Հանձնաժողովը Հանձնաժողովի ընտրության ցուցակից մնացած դիմորդներից ընտրում է չորս անձի՝ որպես փոխարինող հանձնաժողովականներ: Փոխկատարող հանձնաժողովականների ընտրությունը կատարվում է այնպես, որ ապահովի փոխարինող հանձնաժողովականների աշխարհագրական բազմազանությունը:

(j) Հանձնաժողովը կարող է հեռացնել հանձնակատարին պարտականությունների էական չկատարման, պաշտոնում կոպիտ սխալ վարքագծի, պաշտոնի պարտականությունները կատարելու անկարողության, Բաժին 812-ում նկարագրված հանձնակատարի իրավասության պահանջներին և սահմանափակումներին չհամապատասխանելու, չհիմնավորված բացակայությունների կամ թափանցիկության պահանջները չկատարելու համար: Սույն դրույթի համաձայն հեռացնելու համար անհրաժեշտ է Հանձնաժողովի ձայների երկու երրորդը՝ անդամին հանրային լսումների մասին ծանուցում տրամադրելուց և գրավոր և հանրային լսումներին պատասխանելու հնարավորություն տրամադրելուց հետո: Հեռացված անդամը կարող է բողոքարկել Հանձնաժողովի որոշումը Քաղաքի էթիկայի հանձնաժողովին:

(k) Հանձնաժողովը կարող է անհապաղ հեռացնել հանձնակատարին, ով մեղադրվել է հանցագործության մեջ, կամ ում մեղադրանք է առաջադրվել Բաժին 207(c)-ում նկարագրված ծառայողական պարտականությունների խախտման հետ կապված քրեական հանցագործության համար: Այս դրույթի համաձայն հեռացնելու համար անհրաժեշտ է Հանձնաժողովի ձայների երկու երրորդը: Հեռացված անդամը կարող է բողոքարկել Հանձնաժողովի որոշումը Քաղաքի էթիկայի հանձնաժողովին:

(l) Հանձնաժողովի անդամի պաշտոնը թափուր է դառնում, եթե անդամն իրեն մեղավոր է ճանաչում հանցանքի համար կամ չի վիճարկում կամ դատապարտվել է հանցանքի համար:

(m) Եթե Հանձնաժողովում թափուր պաշտոն է առաջանում, Հանձնաժողովի նախագահը հրապարակային ժողովի ժամանակ անցկացնում է պատահական վիճակահանություն՝ հանձնաժողովի փոխարինող հանձնաժողովի անդամներից մեկին ընտրելու համար:

**Բաժ. 814: Շրջանի վերաբաշխման չափանիշներ:**

(a) Հանձնաժողովը պետք է ընդունի Կրթական խորհրդի շրջանների սահմանները, որոնք համապատասխանում են Միացյալ Նահանգների Սահմանադրությանը, California-ի Սահմանադրությանը և 1965 թվականի Քվեարկության իրավունքների դաշնային օրենքին: Յուրաքանչյուր շրջան պետք է ունենա ողջամտորեն հավասար բնակչություն այլ շրջանների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ շեղումը պահանջվում է Քվեարկության իրավունքի մասին դաշնային օրենքին կամ օրենքով թույլատրելի լինելու համար:

(b) Ի հավելումն (a) ենթաբաժնի պահանջներին հետևելուն, Հանձնաժողովը ընդունում է Կրթական խորհրդի շրջանների սահմաններն՝ օգտագործելով հետևյալ չափանիշները, որոնք սահմանված են հետևյալ առաջնահերթության կարգով.

(1) Առավելագույն իրագործելի չափով շրջանները պետք է լինեն աշխարհագրորեն հարակից: Տարածքները, որոնք հանդիպում են միայն հարակից անկյունների կետերում, հարակից չեն: Տարածքները, որոնք բաժանված են ջրով և կապված չեն կամրջով, թունելով կամ լաստանավի կանոնավոր երթևեկությամբ, հարակից չեն:

(2) Գործնականում կիրառվող առավելագույն չափով, և եթե դա չի հակասում սույն ենթաբաժնի նախորդ չափանիշին, ցանկացած տեղական թաղամասի կամ տեղական հետաքրքրություն ներկայացնող համայնքի աշխարհագրական ամբողջականությունը պետք է հարգվի այնպես, որ նվազագույնի հասցվի դրա բաժանումը: «Ընդհանուր շահերով համայնքը» այն բնակչությունն է, որը կիսում է ընդհանուր սոցիալական կամ տնտեսական շահերը, որոնք պետք է ներառվեն մեկ ընտրատարածքում՝ դրա արդյունավետ և արդար ներկայացվածության նպատակով: Ընդհանուր շահերով համայնքների բնութագրերը կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում ընդհանուր հանրային քաղաքականության մտահոգություններով, ինչպիսիք են կրթությունը, հանրային անվտանգությունը, հանրային առողջությունը, շրջակա միջավայրը, բնակարանը, տրանսպորտը և սոցիալական ծառայությունների հասանելիությունը: Ընդհանուր շահերով համայնքների բնութագրերը կարող են ներառել նաև, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝ մշակութային շրջանները, ընդհանուր սոցիալ-տնտեսական բնութագրերը, ընտրողների գրանցման և մասնակցության համանման ցուցանիշները և ընդհանուր պատմությունները: Ընդհանուր շահերով համայնքները չեն ներառում հարաբերությունները քաղաքական կուսակցությունների, գործող նախագահների կամ քաղաքական թեկնածուների հետ:

(3) Առավելագույն հնարավոր չափով, և եթե դա չի հակասում սույն ենթաբաժնի նախորդ չափանիշներին, շրջանները պետք է սահմանափակվեն բնական և արհեստական պատնեշներով, փողոցներով կամ Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի սահմաններով: Շրջանի սահմանները պետք է հեշտությամբ ճանաչելի և հասկանալի լինեն բնակիչների համար:

(4) Առավելագույն հնարավոր չափով, և եթե դա չի հակասում սույն ենթաբաժնի նախորդ չափանիշներին, շրջանները պետք է գծվեն՝ խրախուսելու աշխարհագրական կոմպակտությունն այնպես, որ բնակչության մոտակա տարածքները չշրջանցվեն հօգուտ ավելի հեռավոր բնակչության:

(c) Հանձնաժողովը չպետք է ընդունի շրջանների սահմանները գործող պաշտոնայային, քաղաքական թեկնածուին կամ քաղաքական կուսակցությանը նպաստելու կամ խտրականության ենթարկելու նպատակով, և գործող պաշտոնայայի կամ թեկնածուի բնակության վայրը շրջանների սահմանները մշակելիս չի դիտարկվի:

(d) Այլ լրացուցիչ չափանիշներ Հանձնաժողովը պետք է հաշվի առնի շրջանների սահմաններն ընդունելիս, այդ թվում՝ հաշվի առնելով համայնքը և մշակութային միավորումը տնտեսական և մշակութային տեսարժան վայրերով և ռեսուրսներով: Լրացուցիչ չափանիշների վերաբերյալ բոլոր որոշումները քննարկվում և հաստատվում են հանրային ժողովներում: Հանձնաժողովի կողմից լրացուցիչ չափորոշիչների դիտարկումը պետք է դիտարկվի՝ համապատասխանեցնելով (a)-ից (c) ենթաբաժինների կիրառելի պահանջներին:

(e) Հանձնաժողովի կողմից շրջանների սահմաններն ընդունելուց հետո Հանձնաժողովը պետք է համարակալի Կրթական խորհրդի յուրաքանչյուր շրջան, որպեսզի հնարավորինս շատ բնակիչների համար Կրթական խորհրդի շրջանի թիվը, որտեղ նրանք բնակվում են, մնա նույնը:

**Բաժ. 815: Հանրային հանդիպումներ, իրազեկում և մատչելիություն:**

(a) Հանձնաժողովը պետք է համապատասխանի Ralph M. Brown-ի օրենքին և բաց ժողովների այլ գործող օրենքներին:

(b) Հանձնաժողովը քայլեր կձեռնարկի՝ խրախուսելու բնակիչներին՝ մասնակցելու շրջանի վերաբաշխման գործընթացին, ներառյալ՝ թերներկայացված և ոչ անգլախոս համայնքների բնակիչներին:

(c) Հանձնաժողովը պետք է անցկացնի հանրային լսումներ և աշխատաժողովներ այնպես, որ հանրությունը հնարավորություն ունենա մասնակցելու և մեկնաբանելու շրջանի վերաբաշխման գործընթացի յուրաքանչյուր փուլում:

(d) Հանձնաժողովը տրամադրում է Հանձնաժողովի նիստերի ուղիղ թարգմանություն անգլերեն և իսպաներեն լեզուներով և ինչպես հետագայում նախատեսված է համաձայն հրամանագրի: Հանձնաժողովը նյութեր է տրամադրում դաշնային և նահանգային օրենսդրությամբ պահանջվող լեզուներով և ինչպես նախատեսված է համաձայն հրամանագրի:

(e) Հանձնաժողովը պետք է մշակի և կիրառի Մատչելիության ծրագիր՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները կարողանան մուտք գործել և լիարժեք մասնակցել Հանձնաժողովի նիստերին և լսումներին: Հանձնաժողովը պետք է մշակի այս պլանը մինչև հանրային լսումների մեկնարկը:

(f) Վկայություն տալու նպատակով Կրթական խորհրդի ընտրված անդամները պետք է ենթարկվեն հանրային մեկնաբանությունների նույն ընթացակարգերին, ինչ հանրության անդամները:

(g) Մեկ կողմի հետ հաղորդակցություններ:

(1) Հանձնաժողովի անդամը չպետք է շփվի որևէ անհատի կամ կազմակերպության հետ հանրային ժողովից դուրս շրջանի վերաբաշխման հարցերի վերաբերյալ: Այս դրույթը չի արգելում հաղորդակցությունն այլ հանձնակատարի, Հանձնաժողովի աշխատակազմի, իրավախորհրդատուի կամ Հանձնաժողովի կողմից պահպանվող խորհրդատուների հետ: Այս դրույթը չի արգելում քաղաքապետարանի և Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի աշխատակիցների հետ շփումներն այնքանով, որքանով այդ շփումները կապված են վարչական հարցերի կամ հանրությանը արված կրթական ներկայացումների հետ:

(2) Հանձնաժողովի Գործադիր տնօրենը, Հանձնաժողովի քարտեզագրող անձնակազմի ցանկացած անդամ կամ քարտեզագրման

խորհրդատու և Հանձնաժողովի կողմից նշանակված այլ աշխատակիցներ չպետք է շփվեն Կրթական խորհրդի անդամի կամ ընտրված Քաղաքի պաշտոնյայի, ընտրովի Կրթական խորհրդի կամ Քաղաքային պաշտոնի թեկնածուի կամ նման պաշտոնյայի կամ թեկնածուի անձնակազմի հետ, ուղղակիորեն կամ գործակալի միջոցով՝ հանրային ժողովից դուրս շրջանի վերաբաշխման հարցերի վերաբերյալ: Այս դրույթը չի արգելում քաղաքապետարանի և Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի աշխատակիցների հետ շփումներն այնքանով, որքանով այդ շփումները կապված են վարչական հարցերի կամ հանրությանը արված կրթական ներկայացումների հետ:

(3) Քաղաքի էթիկայի հանձնաժողովի, Քաղաքի քարտուղարի կամ այլ Քաղաքի վարչության անդամը կամ աշխատակիցը, որը ներգրավված է Հանձնաժողովի անդամների ընտրության գործընթացում, չպետք է շփվի Կրթական խորհրդի անդամի կամ ընտրված Քաղաքի պաշտոնյայի, ընտրովի Կրթական խորհրդի կամ Քաղաքային պաշտոնի թեկնածուի կամ նման պաշտոնյայի կամ թեկնածուի անձնակազմի հետ ուղղակիորեն կամ գործակալի միջոցով, մինչև այդ գործընթացի ավարտը հանրային ժողովից դուրս ընտրության գործընթացին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ: Այս դրույթը չի արգելում հաղորդակցությունն այնքանով, որքանով այդ հաղորդակցություններն առնչվում են վարչական հարցերի, իրավաբանական խորհրդատվության կամ հանրությանը արված կրթական ներկայացումների հետ:

(4) Հանձնաժողովը կարող է ընդունել հաղորդակցությունների վերաբերյալ այլ կանոններ, պայմանով, որ կանոնները համապատասխանում են Brown օրենքին, չեն հակասում սույն ենթաբաժնի դրույթներին և ընդունվում են Հանձնաժողովի հանրային նիստում:

**Բաժ. 816: Հանձնաժողովի կողմից բիզնեսի, կառավարման և անձնակազմի կազմակերպման ձևը:**

(a) Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամը և փոխարինող անդամը պետք է նշանակված աշխատող լինի Հանձնաժողովի շահերի բախման օրենսգրքում, որը ընդունվել է California-ի Քաղաքական բարեփոխումների մասին օրենքի համաձայն և Քաղաքի էթիկայի հանձնաժողովին կներկայացնի տնտեսական շահերի մասին հայտարարություն և ֆինանսական բացահայտման այլ հայտարարություններ, ինչպես պահանջվում է օրենքով:

(b) Ցանկացած պաշտոնական գործողության համար պահանջվում են Հանձնաժողովի մեծամասնության դրական ձայները, բացառությամբ հետևյալ գործողությունների, որոնք պահանջում են Հանձնաժողովի երկու երրորդի հաստատումը.

(1) քվեարկություն շրջանի վերջնական վերաբաշխման պլանի համար,

(2) հանձնակատարներին հեռացնելու քվեարկություն,

(3) քվեարկություն 813(h) Բաժնում նկարագրված յոթ հանձնակատարիների ընտրության համար,

(4) Գործադիր տնօրենի, քարտեզագրման խորհրդատուի կամ քարտեզագրման անձնակազմի անդամի և Հանձնաժողովի կողմից նշանակված ցանկացած այլ պաշտոնի աշխատանքի ընդունման քվեարկություն, և

(5) աշխատանքի ընդունող կամ պատվիրատու մարմնի պատվիրակությանը լիազորելու քվեարկություն, այնքանով, որքանով այդ

լիազորությունը փոխանցելի է նահանգային և քաղաքային օրենսդրության համաձայն:

(c) Հանձնաժողովի փոխարինող անդամները կարող են ամբողջությամբ մասնակցել Հանձնաժողովի քննարկումներին, սակայն չեն կարող քվեարկել և չեն կարող հաշվառվել քվորումի հաստատման համար:

(d) Հանձնաժողովն ընտրում է մեկ հանձնակատար Հանձնաժողովի նախագահի պաշտոնում: Հանձնաժողովն իր կազմից կարող է նշանակել այլ պաշտոնյաներ:

(e) Վերաբաշխման նախագծերի և շրջանի վերջնական վերաբաշխման պլանների համար շրջանների սահմանների մշակման սկզբունքների քննարկումն իրականացվում է հանրային ժողովում և հաստատվում Հանձնաժողովի քվեարկությամբ:

(f) Հանձնաժողովը պետք է տեղադրի առաջարկված քարտեզի սկզբունքները և ցանկացած առաջարկվող վերջնական քարտեզ Հանձնաժողովի կայքում առնվազն յոթ օր առաջ՝ Հանձնաժողովի լսումների կամ նիստի քննարկումից առաջ:

(g) Հանձնաժողովը աշխատանքի է ընդունում Գործադիր տնօրենի և շրջանի վերաբաշխման, տեխնոլոգիաների և իրազեկման անձնակազմ, որոնց պաշտոնները կազատվեն Կանոնադրության քաղաքացիական ծառայության դրույթներից:

(h) Հանձնաժողովն իրավասու է վարձել խորհրդատուներ մրցութային գործընթացի միջոցով, որը համահունչ է Կանոնադրության պայմանագրային դրույթներին և ինչպես նախատեսված է համաձայն հրամանագրի:

(i) Քաղաքի գործավարը Հանձնաժողովին աջակցություն կցուցաբերի Քաղաքի ռեսուրսների հասանելիության, քաղաքային և Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի վարչությունների և անձնակազմի հետ համակարգելու և անհրաժեշտության դեպքում վարչական այլ հարցերում: Հանձնաժողովին աջակցություն է ցուցաբերում նաև Կրթական խորհրդի գործադիր գրասենյակը:

(j) Հանձնաժողովը կարող է օգտագործել Քաղաքի դատախազին որպես իրավախորհրդատու կամ կարող է խնդրել Քաղաքի դատախազին Հանձնաժողովի իրավախորհրդատու պահել:

**Բաժ. 817: Շրջանի վերաբաշխման վերջնական պլանի ընդունում:**

(a) Հանձնաժողովն ընդունում է իր շրջանի վերաբաշխման վերջնական պլանը՝ սահմանելով Կրթական խորհրդի նոր շրջանների սահմանները ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 30-ը, որն ավարտվում է թիվ մեկով:

(b) Եթե Հանձնաժողովը (a) ենթաբաժնի վերջնաժամկետին չի ընդունում շրջանի վերաբաշխման վերջնական պլանը, ապա Քաղաքի դատախազը պետք է անհապաղ միջնորդություն ներկայացնի Գերագույն դատարան՝ Բաժին 814-ում նկարագրված շրջանի վերաբաշխման չափանիշներին համապատասխան Կրթական խորհրդի նոր շրջանների սահմանները սահմանելու մասին որոշում կայացնելու համար, և այդ սահմանները կկիրառվեն Կրթական խորհրդի ընտրությունների համար, քանի դեռ Հանձնաժողովը կկարողանա ընդունել շրջանի վերաբաշխման վերջնական պլանը:

(c) Հանձնաժողովը վերջնական պլանի հետ միասին թողարկում է հաշվետվություն, որը բացատրում է, թե ինչ հիմքով է Հանձնաժողովը կայացրել իր որոշումները՝ Բաժին 814-ում նկարագրված շրջանի վերաբաշխման չափանիշներին համապատասխանեցնելու համար:

(d) Շրջանի վերաբաշխման վերջնական պլանի ընդունումից հետո Հանձնաժողովը պլանը, վերջնական հաշվետվությունը և ցանկացած այլ ուղեկցող

նյութեր է ներկայացնում Քաղաքի գործավարին և հրապարակում այդ նյութը Հանձնաժողովի՝ շրջանի վերաբաշխման կայքում:

(e) Քաղաքի գործավարը պետք է տեղադրի Հանձնաժողովի շրջանի վերաբաշխման վերջնական պլանը և հաշվետվությունը Քաղաքի կայքում: Քաղաքի գործավարը հրապարակում է Կրթական խորհրդի նոր շրջանների սահմանների վերջնական հատակագիծը և նկարագրությունը նույն ձևով, ինչ Քաղաքի հրամանագիրն է:

(f) Կրթական խորհրդի նոր շրջաններ ստեղծող շրջանի վերաբաշխման վերջնական պլանն ուժի մեջ է մտնում դրա հրապարակումից 31 օր հետո, ինչպես նախատեսված է Կանոնադրության մեջ:

(g) Շրջանի վերաբաշխման վերջնական պլանը ենթակա է հանրաքվեի նույն կարգով, ինչ Քաղաքի հրամանագիրը:

(h) Որևէ շրջանի սահմանի կամ գտնվելու վայրի փոփոխություն՝ շրջանի վերաբաշխման միջոցով, չի կարող վերացնել կամ դադարեցնել Կրթական խորհրդի որևէ անդամի լիազորությունների ժամկետը մինչև այն պաշտոնավարման ժամկետի ավարտը, որի համար ընտրվել է անդամը:

(i) Հանձնաժողովի կողմից ընդունված շրջանների սահմանները չեն կարող փոփոխվել մինչև հաջորդ դաշնային տասնամյա մարդահամարի անցկացումը, բացառությամբ իրավական պահանջի լուծման կամ դատարանի որոշման:

(j) Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանին կցված կամ համախմբված ցանկացած տարածք Հանձնաժողովի կողմից ավելացվում է հարակից շրջանին կամ շրջաններին: Հավելումն ուժի մեջ է մտնում միացման կամ համախմբման վարույթի ավարտից հետո:

**Բաժ. 818: Հանձնաժողովի ֆինանսավորում:**

(a) Քաղաքային խորհուրդը և Քաղաքապետը պետք է բավարար միջոցներ տրամադրեն Հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարիքները հոգալու համար, այդ թվում՝ Հանձնաժողովի անձնակազմին, խորհրդատուներին և իրավախորհրդատուներին փոխհատուցելու, շրջանի վերաբաշխման գործընթացում հանրության լայն մասնակցություն պահանջելու համար, և, անհրաժեշտության դեպքում, պաշտպանել Հանձնաժողովի գործողությունները ցանկացած իրավական գործընթացում:

(b) Քաղաքային խորհուրդը և Քաղաքապետը միջոցներ են տրամադրում բոլոր քաղաքային ստորաբաժանումներին, որոնք ներգրավված են Հանձնաժողովի ձևավորման, հանձնաժողովին աջակցելու և Հանձնաժողովի հաշվառման վարման գործում:

(c) Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանը պետք է փոխհատուցի Քաղաքին Հանձնաժողովի ձևավորման և գործունեության համար Քաղաքի, ներառյալ քաղաքային բաժանմունքների կողմից կատարված ծախսերը:

(d) Հանձնաժողովի անդամները փոխհատուցվում են օրենքով նախատեսված կարգով:

**Բաժ. 819: Հանձնաժողովի առաջարկությունները.**

(a) Հանձնաժողովը կարող է առաջարկել փոփոխություններ կատարել Քաղաքի կանոնադրության և Վարչական օրենսգրքում նկարագրված անկախ շրջանի վերաբաշխման գործընթացում՝ Քաղաքի էթիկայի հանձնաժողովին ներկայացնելով հաշվետվություն՝ Հանձնաժողովի առաջարկություններին աջակցող բացահայտումներով, վերլուծություններով և տվյալներով:

(b) Քաղաքի էթիկայի հանձնաժողովը վերանայում է Հանձնաժողովի առաջարկությունները և կարող է հաշվետվություն փոխանցել Քաղաքային խորհրդին՝ շրջանի վերաբաշխման վերաբերյալ Քաղաքի կանոնադրության և Վարչական օրենսգրքում փոփոխություններ կատարելու առաջարկություններով: Այնքանով, որքանով առաջարկությունները ներառում են փոփոխություններ Վարչական օրենսգրքում, Էթիկայի հանձնաժողովը նաև պատրաստում և փոխանցում է Քաղաքի դատախազի աջակցությամբ ցանկացած առաջարկվող հրամանագիր, որը կպահանջվի առաջարկվող փոփոխություններն իրականացնելու համար:

(c) Վարչական օրենսգրքի փոփոխություններ: Էթիկայի հանձնաժողովի հաշվետվությունը և դրան կից առաջարկվող որոշման ներկայացումից հետո՝ 60 օրվա ընթացքում, որով առաջարկվում են փոփոխություններ կատարել Վարչական օրենսգրքում՝ շրջանի վերաբաշխման վերաբերյալ, Քաղաքային խորհուրդն այդ հարցի առնչությամբ անցկացնում է հանրային լսումներ և որոշում կայացնում՝ առանց փոփոխության կամ չհաստատելու առաջարկվող հրամանագիրը: Եթե 60-օրյա ժամկետում խորհուրդը ձախողի չհաստատելը, ապա առաջարկվող հրամանագիրը ներկայացվում է Քաղաքապետին՝ հաստատման կամ վետոյի, և խորհրդին՝ Քաղաքապետի վետոն վերացնելու համար: Եթե այն հաստատվել է Քաղաքապետի կողմից կամ Քաղաքապետի գործողություն չի ձեռնարկել կամ խորհուրդը հաղթահարել է Քաղաքապետի վետոն, առաջարկված հրամանագիրը համարվում է հաստատված:

(d) Կանոնադրության փոփոխություններ: Էթիկայի հանձնաժողովի զեկույցը, որով առաջարկվում է փոփոխություն կատարել Քաղաքի կանոնադրության մեջ՝ վերաբաշխման վերաբերյալ, պետք է քննարկվի Քաղաքային խորհրդի կողմից ժամանակին, որպեսզի թույլ տա կանոնադրության փոփոխությունն ընտրողներին ներկայացնել հաջորդ հասանելի ընտրությունների ժամանակ: Քաղաքի կանոնադրության փոփոխությունը պահանջում է Քաղաքի ընտրողների հավանությունը:

Բաժ. 2. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 802-ն ուժը կորցրած է ճանաչվել հետևյալ կերպ.

**~~Բաժ. 802: Կրթական խորհրդի շրջանի վերաբաշխում:~~**

~~(a) Շրջանի վերաբաշխում համաձայն հրամանագրի: Յուրաքանչյուր տասը տարին մեկ խորհուրդը, համաձայն հրամանագրի, վերաբաշխում է Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանը յոթ շրջանների, որոնք նշված են կանոնադրությամբ մեկից մինչև յոթ թվերով՝ ներառյալ: Այդ շրջանները պետք է օգտագործվեն Կրթական խորհրդի անդամների բոլոր ընտրությունների համար, ներառյալ նրանց հետ կանչելը, ինչպես նաև Կրթական խորհրդի անդամի պաշտոնում ցանկացած թափուր պաշտոն զբաղեցնելու համար՝ հրամանի ուժի մեջ մտնելուց հետո և մինչև նոր շրջանների ստեղծումը:~~

~~(b) Շրջանի վերաբաշխման հանձնաժողով: Շրջանի վերաբաշխման հանձնաժողովը խորհուրդ է տալիս խորհրդին՝ Կրթական խորհրդի շրջանային սահմանագծերը գծելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամները նշանակվում են հետևյալ կարգով՝ մեկական անդամ Կրթական խորհրդի յուրաքանչյուր անդամի կողմից, չորսը՝ խորհրդի նախագահի և չորսը՝ Քաղաքապետի կողմից: Չնայած Բաժին 501(d)-ի դրույթին, խորհրդի նախագահի նշանակվածներից մեկը և Քաղաքապետի նշանակվածներից մեկը պետք է բնակվի Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանում, բայց Քաղաքի սահմաններից դուրս: Դպրոցական շրջանի ոչ մի պաշտոնյա կամ աշխատակից իրավասու չէ աշխատել Հանձնաժողովում: Շրջանի վերաբաշխման հանձնաժողովը բյուջեի հաստատմանը համապատասխան նշանակում է տնօրեն և այլ անձնակազմ, որոնց պաշտոնները կազատվեն կանոնադրության քաղաքացիական ծառայության դրույթներից:~~

~~(c) **Շրջանի վերաբաշխման գործընթաց:** Շրջանի վերաբաշխման հանձնաժողովը նշանակվում է նախքան մարդահամարի բյուրոն կիրապարակի~~

տասնամյա մարդահամարի տվյալները: Նախքան յուրաքանչյուր հաջորդ շրջանի վերաբաշխումը խորհրդին խորհուրդներ տալու համար կնշանակվի նոր Հանձնաժողով: Հանձնաժողովը սկսում է շրջանի վերաբաշխման գործընթացը նշանակվելուց հետո ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան 2021 թ. հունիսի 1-ը և այդ օրվանից յուրաքանչյուր հաջորդ տասնամյակը: Հանձնաժողովը պետք է փետրի հանրային կարծիքը շրջանի վերաբաշխման գործընթացի ընթացքում: Հանձնաժողովը շրջանի վերաբաշխման իր առաջարկը ներկայացնում է խորհրդին ոչ ուշ, քան որոշմամբ սահմանված ժամկետը:

Խորհուրդը շրջանի վերաբաշխման մասին որոշում է ընդունում ոչ ուշ, քան 2021 թ. դեկտեմբերի 31-ը և այդ օրվանից յուրաքանչյուր հաջորդ տասնամյակը: Այս բաժնում ոչինչ չպետք է արգելի խորհրդին ավելի հաճախակի շրջանի վերաբաշխում կատարել, պայմանով, որ այդպիսով ձևավորված յուրաքանչյուր շրջան պարունակում է Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի ընդհանուր բնակչության հավասար բաժիններ, ինչպես ցույց է տալիս դաշնային մարդահամարը, որը անմիջապես նախորդում է շրջանների ձևավորմանը կամ հիմված Բնակչության այլ հաշվետվություններ կամ գնահատականներ, որոնք խորհրդի կողմից որոշվել են էապես վստահելի:

(d) **Շրջանի վերաբաշխման չափանիշները:** Բոլոր շրջանները պետք է գծվեն նահանգային և դաշնային օրենսդրության պահանջներին համապատասխան և, որքանով որ դա հնարավոր է, պետք է անձեռնմխելի պահեն թաղամասերն ու համայնքները, օգտագործեն բնական սահմանները կամ փողոցային գծերը և լինեն աշխարհագրորեն կոմպակտ և համապատասխանեն ավագ դպրոցի հաճախման գոտիներին:

(e) **Շրջանի վերաբաշխման ազդեցությունը գործող պաշտոնյաների վրա:** Որևէ շրջանի սահմանի կամ գտնվելու վայրի փոփոխություն՝ շրջանի վերաբաշխման միջոցով, չի կարող վերացնել կամ դադարեցնել Կրթական խորհրդի որևէ անդամի լիազորությունների ժամկետը մինչև այն պաշտոնավարման ժամկետի ավարտը, որի համար ընտրվել է անդամը:

(f) **Ներառում կամ համախմբում:** Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանին ավելացված տարածքը շրջանային կանոնադրության ընդունումից հետո խորհրդի կողմից կավելացվի հարակից և հարակից շրջանին կամ շրջաններին:

(g) **Ժամկետներ:** Կրթական խորհրդի անդամներն իրենց պաշտոնը զբաղեցնում են չորս տարի ժամկետով, բացառությամբ Բաժին 806-ում նախատեսված դեպքերի: Կենտ համարով շրջաններից ընտրված Կրթական խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սկսվում է 1979 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից, իսկ զույգ համարով ընտրված անդամների համար՝ 1981 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից, բացառությամբ Բաժին 806-ով նախատեսված դեպքերի և մինչև 2020թ. 2020 թվականից սկսած՝ Կրթական խորհրդի այն անդամների լիազորությունները, որոնք ընտրվել են կենտ թվով շրջաններից, սկսվում են 2020 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից, իսկ զույգ թվերով շրջաններից ընտրված անդամների համար՝ 2022 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից: Ոչ ոք չի կարող երեք ժամկետից ավելի պաշտոնավարել որպես Կրթական խորհրդի անդամ: Պաշտոնավարման ժամկետների թվի այս սահմանափակումը չի տարածվում որևէ չսպառված ժամկետի վրա, որի համար անձն ընտրվում կամ նշանակվում է, եթե ժամկետի մնացորդը լրիվ պաշտոնավարման կեսից պակաս է: Պաշտոնավարման ժամկետների սահմանափակումը տարածվում է միայն 2007 թվականի մարտի 1-ին կամ դրանից հետո սկսվող պաշտոնավարման ժամկետների վրա:

Բաժ. 3. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 806-ը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 806: Կրթական խորհրդի անդամի պաշտոնավարության ժամկետ:**

(a) Կրթական խորհրդի անդամներն իրենց պաշտոնը զբաղեցնում են չորս տարի ժամկետով, բացառությամբ ենթաբաժին (b)-ում նախատեսված դեպքերի:

(b)~~(ա)~~ Անկախ Կանոնադրության որևէ այլ դրույթից, 2020 թվականից սկսած ընտրությունների նոր ամսաթվերին անցնելու համար 2015 թվականին ընտրված Կրթական խորհրդի անդամները կընտրվեն 2020 թվականի դեկտեմբերին ավարտվող ժամկետով, իսկ 2017 թվականին ընտրված անդամները կընտրվեն 2022 թվականի դեկտեմբերին ավարտվող ժամկետով:

(c)~~(բ) Կրթական խորհրդի անդամի պաշտոնում ընտրված պաշտոնատար անձի լիազորությունները սկսվում են ընտրվելուց հաջորդող հուլիսի առաջին օրվանից մինչև 2020 թվականը: 2020 թվականից սկսած՝~~ Կրթական խորհրդի այն անդամների լիազորությունները, որոնք ընտրվել են կենտ թվով շրջաններից, սկսվում են 2020 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից: Կրթական խորհրդի այն անդամների լիազորությունները, որոնք ընտրվել են զույգ թվով շրջաններից, սկսվում են 2022 թվականի յուրաքանչյուր չորրորդ տարեդարձից: Կրթական խորհրդի անդամի պաշտոնում ընտրված պաշտոնատար անձի լիազորությունները սկսվում են ընտրվելուն հաջորդող դեկտեմբերի երկրորդ երկուշաբթի օրը:

(d)~~(գ)~~ Ոչ ոք չի կարող երեք ժամկետից ավելի պաշտոնավարել որպես Կրթական խորհրդի անդամ: Պաշտոնավարման ժամկետների թվի այս սահմանափակումը չի տարածվում որևէ չսպառված ժամկետի վրա, որի համար անձն ընտրվում կամ նշանակվում է, եթե ժամկետի մնացորդը լրիվ պաշտոնավարման կեսից պակաս է: Պաշտոնավարման ժամկետների սահմանափակումը տարածվում է միայն 2007 թվականի մարտի 1-ին կամ դրանից հետո սկսվող պաշտոնավարման ժամկետների վրա: Այս ենթաբաժնի նպատակով՝ ~~Բաժին 802(գ)~~պարունակվող ժամկետի սահմանափակումը, 2015 և 2017 թ. ընտրված Կրթական խորհրդի անդամների պաշտոնավարությունը, ինչպես նկարագրված է այս բաժնի ենթաբաժին (b)~~(ա)~~-ում պետք է համարվի որպես պաշտոնավարության մեկ ժամկետ:

Բաժ. 4: Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները միակողմանի են համարվում: Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները բաժանելի են:

## HH ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ HH:

Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ պահանջելու, որ հանձնաժողովների կողմից նշանակված անձինք ներկայացնեն ֆինանսական հայտարարագրեր՝ նախքան նրանց պաշտոնի հաստատելը, պարզաբանելու Վերահսկիչի վերստուգիչ իրավասությունը Քաղաքի կապալառուների վերաբերյալ, ընդլայնելու Քաղաքի գլխավոր դատախազի՝ պարտադիր կատարման համար պահանջ ներկայացնելու լիազորությունները, լիազորելու ժամանակավոր նշանակումներ որոշակի գլխավոր մենեջերի պաշտոններում, հիմնելու նախաձեռնությամբ առաջարկվող օրենքների ազդեցությունը գնահատելու գործընթաց և կատարելու այլ փոփոխություններ և պարզաբանումներ՝ Քաղաքի կառավարման, պաշտոնների նշանակումների և ընտրությունների հետ կապված:

### ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ
### SHARON M. TSO, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

Los Angeles քաղաքի կառավարության հիմնական օրենքը դրված է Քաղաքի կանոնադրության մեջ: Քաղաքի կանոնադրությունը սահմանում է Քաղաքի կառավարության կառուցվածքը, պարտականությունները, գործառույթները, գործընթացները և լիազորությունները: Քաղաքը տարբեր փոփոխություններ և պարզաբանումներ է առաջարկում Քաղաքի կանոնադրությանը՝ կապված Քաղաքի կառավարման, պաշտոնների նշանակումների և ընտրությունների հետ: Քաղաքի կանոնադրությունը կարող է փոփոխվել միայն Քաղաքի ընտրողների ձայների մեծամասնությամբ:

Օրենսդրական նախագիծը կփոխի Քաղաքի կանոնադրությունը՝ Քաղաքի կառավարման, պաշտոնների նշանակումների և ընտրությունների վերաբերյալ տարբեր փոփոխություններ և պարզաբանումներ կատարելու համար, ներառյալ հետևյալը.

- Թույլատրել Քաղաքի խորհրդի անդամին աշխատել համատեղ լիազոր մարմնի խորհրդում, եթե նրանք այդ ծառայության համար փոխհատուցում չեն ստանում,
- Հստակեցնել Քաղաքի խորհրդի քվեարկության կանոնները՝ կապված առաջարկվող գործողության մերժման հետ,
- Հստակեցնել Քաղաքի վերահսկիչի աուդիտի լիազորությունը՝ մուտք գործելու կապալառուների և ենթակապալառուների գրառումները և անձնակազմը, որոնք ստանում կամ տնօրինում են Քաղաքի միջոցները,
- Ընդլայնել Քաղաքի դատախազի դատավարության լիազորությունը՝ ներառելով վկաներին կանչելու, երդումներ և հաստատումներ տալու և նահանգային կամ տեղական օրենսդրության խախտումների հետաքննության ընթացքում արձանագրություններ կազմելու իրավասությունը, բայց չներառելով Քաղաքի գրասենյակների, գերատեսչությունների, պաշտոնյաների կամ աշխատակիցների հետաքննություն իրականացնելու լիազորությունը,
- Ջնջել Քաղաքի ընտրությունների ամսաթվերի վերաբերյալ հնացած լեզուն,
- Հստակեցնել ստորագրահավաքի ժամկետներն ու վերջնաժամկետները նախաձեռնող միջնորդությունների համար,
- Տրամադրել գործընթաց և ժամկետ, որպեսզի Քաղաքի գրասենյակները և բաժանմունքները զեկուցեն նախաձեռնությամբ կամ հանրաքվեի միջնորդությամբ առաջարկված հրամանագրի ազդեցության մասին մինչև

Քաղաքի խորհուրդը որոշում կայացնի ընդունել կամ չեղյալ համարել հրամանագիրը կամ ներկայացնել այն ընտրողներին,
- Թույլատրել կողմնակիցին հետ վերցնել հանրաքվեի միջնորդությունը,
- Պահանջել, որ Քաղաքի վարչությունը կամ հանձնաժողովի նշանակված անձը ներկայացնի ֆինանսական բացահայտման հաշվետվություններ Էթիկայի հանձնաժողով և բացահայտումները ներկայացնի Քաղաքի խորհրդին՝ նախքան նշանակված անձի հաստատումը Քաղաքի խորհրդի կողմից,
- Պահանջել, որ Նավահանգիստների հանձնակատարների վարչության երկու անդամները բնակվեն նավահանգիստների տարածքում, մեկը San Pedro համայնքից և մեկը Wilmington համայնքից,
- Թափուր պաշտոնի դեպքում սահմանել Հանրային հաշվետվողականության գրասենյակի ժամանակավոր գործադիր տնօրեն նշանակելու մեթոդ, և
- Թափուր պաշտոնի դեպքում թոշակային կամ կենսաթոշակային համակարգի ժամանակավոր գլխավոր կառավարչի նշանակման եղանակ սահմանել։

Այս օրենսդրական նախագիծն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ MATTHEW W. SZABO, ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՅԱ

Այս օրենսդրական նախագիծը կփոխի Քաղաքի կանոնադրության մի քանի բաժին, որոնք վերաբերում են Քաղաքի կառավարմանը, ներառյալ պաշտոնների նշանակումները հանձնաժողովներում և Քաղաքի այլ պաշտոններում: Օրենսդրական նախագիծը նաև ստեղծելու է գործընթաց՝ գնահատելու նախաձեռնող միջնորդագրերի միջոցով առաջարկվող օրենքների ազդեցությունը, պարզաբանելու է Վերահսկիչի աուդիտի մարմինը Քաղաքի կապալառուների վերաբերյալ և ընդլայնելու Քաղաքի դատախազի լիազորությունները: Այս օրենսդրական նախագիծը չի պահանջում ֆինանսական միջոցների հատկացում՝ փոփոխություններն իրականացնելու համար, սակայն դերերի հստակեցումը, ընթացակարգերի սահմանումը և Քաղաքի դատախազի դատավարական լիազորությունների ընդլայնումը կարող է մեծացնել տարբեր Քաղաքի բաժանմունքների ծանրաբեռնվածությունը, որոնք կարող են կամ չեն կարող կլանվել առկա ռեսուրսների շրջանակներում: Այս պահին բավարար տեղեկատվություն չկա ազդակիր բաժանմունքներից որևէ մեկի համար ծախսերը որոշելու համար:

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-Ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ն ազատում է Քաղաքի կանոնադրության հնացած ձևակերպումներից, փակում է էթիկական սողանցքները և նախատեսում է մի շարք շատ անհրաժեշտ բարեփոխումներ Քաղաքի կառավարման գործում:

- ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ը քաղաքի դատախազին լիազորություն է տալիս վկաներ կանչել դատարան և պարտադրել ապացույցների բացահայտում օրենքի հնարավոր խախտումների կամ այլ իրավախախտումների հետաքննության ընթացքում: Կանոնադրության ներկայիս ձևակերպումը քաղաքի դատախազին չի տրամադրում այդ անհրաժեշտ գործիքները Los Angeles-ի բնակիչների անունից արդարադատություն իրականացնելու համար:

- ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ը քաղաքի վերահսկողին լիազորություն է տալիս մուտք գործել ֆինանսական հաշվետվություններ և բոլոր կապալառուների և ենթակապալառուների աշխատակիցների տվյալներ, ովքեր ծախսում կամ ստանում են քաղաքային միջոցներ: Քաղաքի պայմանագրերը պետք է լինեն թափանցիկ, և նրանք, ովքեր ստանում են քաղաքային միջոցներ, պետք է պատասխանատու լինեն, թե ինչպես են այդ միջոցները ծախսվում:

- ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ն արգելում է Խորհրդին որևէ նշանակում հաստատել քաղաքային հանձնաժողովում, քանի դեռ թեկնածուի ֆինանսական հայտարարագրերը չեն ներկայացվել Էթիկայի հանձնաժողովին, Խորհրդին և հանրությանը: Շահերի բախումը պետք է բացահայտվի նախքան Քաղաքի հանձնաժողովում ցանկացած նշանակման հաստատումը:

- ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ը Խորհրդին տալիս է 30 օր՝ քննարկելու քվեարկողների նախաձեռնությունների հնարավոր ֆինանսական կամ այլ հետևանքները, նախքան դրանք որոշելը կամ քվեաթերթիկների մեջ դնելը, որպեսզի ընտրողները կարողանան որոշում կայացնել: Քվեարկողները պետք է նախապես իմանան, թե ինչ ազդեցություն կունենա առաջարկված նախաձեռնությունը և ինչ այն կարժենա:

- ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ը փոխելու է Նավահանգստի հանձնակատարների վարչության կազմը, որպեսզի ավելի լավներկայացնի այն համայնքների շահերը, որոնց վրա Los Angeles-ի Նավահանգստի գործունեության ազդեցությունն առավել շատ է: Մեր Նավահանգիստը ծառայում է որպես ամբողջ տարածաշրջանի տնտեսության շարժիչ ուժ՝ հատուկ ազդեցություն ունենալով մոտակա բնակավայրերի վրա: Պահանջելով տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցչությունը Վարչությունում, օրենսդրական նախագիծը կնպաստի հավասարությանը և անաչառությանը՝ բարձրացնելով Նավահանգստի շրջանի բնակիչների, ձեռնարկությունների և աշխատողների մտահոգությունների և փորձի հարցերը:

«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵՔ ԿԱՆՈՆԱԴՐՈԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-Ի ՀԱՄԱՐ

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-Ի ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, շրջան 2
City of Los Angeles

TIM MCOSKER
Խորհրդի անդամ, շրջան 15
City of Los Angeles

**ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՄ ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:**

## ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-Ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ը թարմացնում է Քաղաքի կանոնադրությունը և կատարում է բազմաթիվ անհրաժեշտ բարեփոխումներ քաղաքի կառավարման մեջ:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ը Քաղաքի դատախազին տալիս է վկաներին կանչելու և քաղաքացիական գործերով ապացույցների բացահայտում պահանջելու լիազորություն:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ն ապահովում է Քաղաքապետարանի կողմից վճարվող կազմակերպությունների բովանդակալից աուդիտ և թույլ է տալիս Քաղաքի վերահսկողին մուտք գործել իրենց գրառումներին:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ն երաշխավորում է, որ Քաղաքային խորհուրդը կարող է վերանայել Քաղաքային հանձնաժողովներում պաշտոնավարելու համար նշանակված անձանց ֆինանսական գրառումները՝ <u>նախքան</u> նրանց հաստատվելը, և ժամանակ է տալիս ուսումնասիրելու քվեարկության նախաձեռնությունների արժեքը՝ նախքան դրանք ընտրողներին ներկայացնելը:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ը պահանջում է, որ Նավահանգստի հանձնակատարների խորհուրդը (որը ղեկավարում է Los Angeles-ի նավահանգիստը) ներառի հասարակության անդամներին, ովքեր ապրում են նավահանգստի համայնքներում, որոնք անմիջականորեն ազդեցություն են կրում նավահանգստի գործողություններից:

Քվեարկեք պատասխանատու, հաշվետու, թափանցիկ կառավարման համար:

Քվեարկեք «ԱՅՈ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-ի համար:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՀ-Ի ՕԳՏԻՆ ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, Շրջան 2
City of Los Angeles

TIM MCOSKER
Խորհրդի անդամ, Շրջան 15
City of Los Angeles

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

Նոր դրույթները կամ լեզուն, որն ավելացվել է կանոնադրությանը կամ գոյություն ունեցող կանոնադրության բաժիններին, ցույց են տրված ընդգծված տառատեսակով. կանոնադրությունից կամ կանոնադրության գոյություն ունեցող բաժիններից ջնջված բառերը ցույց են տրվում ~~փրագծված~~ տառատեսակով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀԻ

Բաժին 1. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 212-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Խորհրդի ոչ մի անդամ, իր պաշտոնավարման ընթացքում, որի համար նա ընտրվել է, չի կարող պաշտոնավարել որևէ այլ պաշտոնում, եթե այդ պաշտոնը նշանակվում է խորհրդի կողմից կամ ենթակա է նրա կողմից հաստատման: Սույն բաժինը չի կիրառվում խորհրդի անդամին միացյալ լիազոր մարմնի խորհրդում աշխատանքն արգելելու համար, եթե անդամը ծառայության դիմաց փոխհատուցում չի ստանում:

Բաժ. 2. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 244-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Բիզնես գործարքների համար քվորում է ապահովվում խորհրդի անդամների երկու երրորդով: Կանոնադրության մեջ ոչինչ չի խանգարում ավելի փոքր թվով գործարքներ կատարել ներկա անդամների ձայների մեծամասնությամբ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է խորհրդի անդամների թափուր տեղերը զբաղեցնելու համար՝ Հոդված IV-ով նախատեսված կարգով, որտեղ քվորում չի կարող հավաքվել, բացառությամբ լրացնելով՝ թափուր աշխատատեղեր: Եթե այլ բան նախատեսված չէ Կանոնադրությամբ, խորհրդի գործողություններն ընդունվում են խորհրդի ողջ անդամների ձայների մեծամասնությամբ: Այնուամենայնիվ, պայմանով, որ եթե խորհրդի ողջ անդամների մեծամասնությունը դեմ է քվեարկում առաջարկվող գործողությանը, որը պահանջում է հաստատում կամ չհաստատում, այդ քվեարկությունը համարվում է խորհրդի մերժումը՝ չպահանջելով առանձին քվեարկություն չհաստատելու համար: Ամեն անգամ, երբ Կանոնադրության մեջ խորհրդի որոշակի մասնաբաժինը պահանջվում է որևէ գործողության կատարման համար, դա նշանակում է խորհրդի ողջ անդամների այդ համամասնությունը:

Բաժ. 3. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 261, Ենթաբաժին (e), որը վերաբերում է Վերահսկիչի լիազորություններին և պարտականություններին, փոփոխվել է՝ հետևյալ խմբագրությամբ.

(e) Համաձայն պետական աուդիտի ընդհանուր ընդունված ստանդարտների՝ աուդիտի ենթարկել Քաղաքի բոլոր բաժանմունքները և գրասենյակները, ներառյալ սեփականության բաժանմունքները, որտեղ Քաղաքի ցանկացած միջոցներ կա՛մ ստացվում, կա՛մ ծախսվում են. այս գործառույթն իրականացնելու համար իրավասու է հասանելիություն ունենալ ~~բաժանմունքների~~ բոլոր գրառումներին և անձնակազմին, ներառյալ Քաղաքի կապալառուներին և ենթակապալառուներին, որոնք կա՛մ ծախսում են, կա՛մ ստանում են Քաղաքի միջոցները, այս գործառույթն իրականացնելու համար: Սահմանել աուդիտի ցիկլ՝ ապահովելու, որ յուրաքանչյուր բաժանմունքի կատարողականը, ծրագրերը և գործունեությունը կանոնավոր կերպով աուդիտի ենթարկվեն և անհապաղ տրամադրեն ավարտված աուդիտորական հաշվետվությունները Քաղաքապետին, խորհրդին և Քաղաքի դատախազին և այդ հաշվետվությունները հասանելի դարձնել հանրությանը:

Բաժ. 4. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 271-ին ավելացվել է նոր Ենթաբաժին (f), որը վերաբերում է Քաղաքի դատախազի լիազորություններին և պարտականություններին՝ հետևյալ խմբագրությամբ.

(f) Անկախ Կանոնադրության որևէ այլ դրույթից, նահանգային կամ տեղական օրենսդրության ցանկացած խախտում հետաքննելու ընթացքում, որոնք Քաղաքի դատախազն իրավասու է կիրառելու, Քաղաքի դատախազն իրավասու է կանչել վկաներին, պարտադրել նրանց ներկայությունը և ցուցմունքները, երդումներ տալ և հաստատել, վերցնել ապացույցներ, պահանջել ներկայացնել ցանկացած

գրքեր, փաստաթղթեր, արձանագրություններ կամ այլ առարկաներ և պահանջել պատասխաններ գրավոր հարցաքննություններին, որոնք վերաբերում են քննությանը, բացառությամբ, որ սույն ենթաբաժնով տրված լիազորությունները չեն ներառում Քաղաքի գրասենյակները, բաժանմունքները, պաշտոնյաներին կամ աշխատակիցներին հետաքննելու կամ Քաղաքի գրասենյակներից, բաժանմունքներից, պաշտոնյաներից կամ աշխատակիցներից փաստաթղթեր կամ ցուցմունքներ ներկայացնելու իրավասությունը: Ոստիկանության պետը կամ որոշմամբ նշանակված այլ պաշտոնյան պետք է ուղեկցի բոլոր նման կանչերը կամ գրավոր այլ հրամաններ: Խորհուրդը որոշմամբ համապատասխան պատիժներ է սահմանում պարտադիր կանչին չենթարկվելու և վկաների կողմից ցուցմունքներ տալուց, ապացույցներ ներկայացնելուց կամ գրավոր հարցաքննություններին պատասխանելուց հրաժարվելու համար:

Բաժ. 5. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 401-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

~~(a) Մինչև 2020 թվականը Քաղաքի պաշտոնների և Կրթական խորհրդի ընտրությունների համար նախնական առաջադրման ընտրությունները պետք է անցկացվեն յուրաքանչյուր կենտ թվով տարվա մարտի առաջին երկուշաբթի օրվանից հետո առաջին երեքշաբթի օրը, իսկ ընդհանուր տեղական ընտրություններն անցկացվում են յուրաքանչյուր կենտ թվով տարվա մայիսի երրորդ երեքշաբթի օրը, բացի նրանից, որ այսպիսի ընտրություններ չեն անցկացվելու 2019 թվականին, որպեսզի անցում կատարվի ընտրությունների նոր ամսաթվերին, ինչպես նշված է ենթաբաժին (b)-ում:~~

~~(b) Սկսած 2020 թվականից,~~ Քաղաքային գրասենյակների և Կրթական խորհրդի ընտրությունների համար նախնական առաջադրման ընտրությունները պետք է անցկացվեն յուրաքանչյուր զույգ թվով տարվա մարտի առաջին երկուշաբթի օրվանից հետո առաջին երեքշաբթի օրը, իսկ ընդհանուր տեղական ընտրություններն անցկացվում են յուրաքանչյուր զույգ թվով տարվա նոյեմբերի առաջին երկուշաբթի օրվան հաջորդող առաջին երեքշաբթի օրը: Խորհուրդը, համաձայն հրամանագրի, կարող է սահմանել նախնական առաջադրման և ընդհանուր տեղական ընտրությունների տարբեր ժամկետներ, որպեսզի դրանք անցկացվեն նույն ամսաթվերին, ինչ նահանգային նախնական և ընդհանուր ընտրությունները:

Բաժ. 6. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 451-ի Ենթաբաժին (b), որը վերաբերում է նախաձեռնության միջնորդություններին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(b) Միջնորդությունների վրա ստորագրված բոլոր անունները պետք է ապահովված լինեն ոչ ավելի, քան ներկայացման օրվանից 120 օր առաջ: Այս ժամկետից դուրս դրված ցանկացած ստորագրություն չի հաշվվում միջնորդության բավարարությունը որոշելու համար: Խորհրդին ներկայացնելու համար նախաձեռնության միջնորդությունը ստորագրում են Քաղաքի գրանցված ընտրողները՝ համայնքի ընդհանուր տեղական ընտրությունների ժամանակ Քաղաքապետի պաշտոնի բոլոր թեկնածուներին կամ նախնական առաջադրման ընտրություններին տրված ձայների ընդհանուր թվի 15%-ին հավասար թվով, որի ժամանակ Քաղաքապետ է ընտրվել մինչև այն օրը, երբ Քաղաքի գործավարը կհաստատի միջնորդությունը ~~շրջանառության մեջ դնելու մասին միջնորդությունը~~: Քաղաքի գործավարին ներկայացնելու համար միջնորդությանը պետք է ի սկզբանե կցվեն անհրաժեշտ թվով ստորագրություններ:

Բաժ. 7. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 452-ի Ենթաբաժին (b), որը վերաբերում է նախաձեռնության միջնորդություններին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(b) Խորհրդի կողմից առաջարկված հրամանագրի ընդունման պահանջով նախաձեռնող միջնորդությունը Քաղաքի գործավարի կողից ներկայացվում է Խորհրդին, և Խորհուրդը պետք է ներկայացնելուց հետո 20 օրվա ընթացքում կատարի հետևյալ գործողություններից մեկը, բացառությամբ այն դեպքերի, երբ միջնորդությունը հետ է կանչվել առաջարկողների կողմից.

(1) ընդունել առաջարկված հրամանագիրն առանց փոփոխությունների,

~~(2) հրավիրում է արտահերթ ընտրություն, որն անցկացվելու է խորհրդի գործողությունից ոչ շուտ, քան 110 և ոչ ավելի, քան 140 օր հետո՝ առաջարկված հրամանագիրն առանց փոփոխության Քաղաքի ընտրողների քվեարկությանը ներկայացնելու միջնորդության վերաբերյալ, կամ~~

(2)~~(3)~~ որոշում է ներկայացնել առաջարկված հրամանագիրն առանց փոփոխության Քաղաքի ընտրողներին կա՛մ արտահերթ ընտրության ընթացքում, կա՛մ Քաղաքի հերթական ընտրությունների ընթացքում, կա՛մ հաջորդ նահանգային ընտրությունների ընթացքում, որը կկայանա միջնորդության վերաբերյալ խորհրդի գործողությունից ավելի քան 110 օր հետո~~ Los Angeles-ի վարչաշրջանի կողմից անցկացվող նահանգային ընտրությունների ընթացքում, որը կկայանա միջնորդության վերաբերյալ խորհրդի գործողությունից ավելի քան 110 օր հետո, կամ~~

(3) առաջարկված հրամանագիրն ուղարկում է բաժանմունք կամ գրասենյակ՝ Քաղաքի վրա վերջինիս ֆինանսական կամ այլ ազդեցությունների մասին հաշվետվության համար, պայմանով, սակայն, որ խորհուրդը պետք է ձեռնարկի սույն ենթաբաժնի (1) կամ (2) ենթաբաժիններում նկարագրված գործողություններից մեկը՝ առաջարկվող որոշումը զեկուցման ուղարկելուց հետո 30 օրվա ընթացքում:

Բաժ. 8. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 462-ի, որը վերաբերում է հանրաքվեի միջնորդություններին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(a) Հանրաքվեի միջնորդության կողմնակիցները կարող են հետ վերցնել միջնորդությունը համաձայն Քաղաքի ընտրական օրենսգրքի ընթացակարգերի:

(b) Երբ Քաղաքի գործավարի կողմից հանրաքվեի միջնորդություն է ներկայացվում Քաղաքի խորհուրդ, խորհուրդը պետք է կատարի հետևյալ գործողություններից մեկը՝ ներկայացվելուց հետո 20 օրվա ընթացքում, եթե միջնորդությունը հետ չի կանչվել առաջարկողների կողմից.

(1)~~(a)~~ ուժը կորցրած է ճանաչում հրամանագիրը,

~~(b) հրավիրում է արտահերթ ընտրություն, որը պետք է անցկացվի ոչ շուտ, քան 110 և ոչ ավելի, քան 140 օր հետո՝ հրամանագիրը հանրաքվեի քվեարկության ներկայացնելու միջնորդության վերաբերյալ խորհրդի գործողությունից հետո, կամ~~

(2)~~(c)~~ որոշում է ներկայացնել հրամանագիրը Քաղաքի ընտրողներին հաստատման կամ մերժման համար կա՛մ արտահերթ ընտրության ընթացքում, կա՛մ Քաղաքի հերթական ընտրությունների ընթացքում, կա՛մ հաջորդ նահանգային ընտրությունների ընթացքում, որը կկայանա միջնորդության վերաբերյալ խորհրդի գործողությունից ավելի քան 110 օր հետո~~ Los Angeles-ի վարչաշրջանի կողմից անցկացվող նահանգային ընտրությունների ընթացքում, որը կկայանա միջնորդության վերաբերյալ խորհրդի գործողությունից ավելի քան 110 օր հետո, կամ~~

(3) հրամանագիրն ուղարկում է բաժանմունք կամ գրասենյակ՝ Քաղաքի վրա վերջինիս ֆինանսական կամ այլ ազդեցությունների մասին հաշվետվության համար, պայմանով, սակայն, որ խորհուրդը պետք է ձեռնարկի սույն ենթաբաժնի (1) կամ (2) ենթաբաժիններում նկարագրված գործողություններից մեկը՝ առաջարկվող որոշումը զեկուցման ուղարկելուց հետո 30 օրվա ընթացքում:

Բաժ. 9. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 502-ի Ենթաբաժին (e)-ում հանձնակատարների նշանակման մասին փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(e) **Ֆինանսական բացահայտումներ:** խորհուրդը չի հաստատում նշանակված անձին մինչև նշանակված անձի ֆինանսական բացահայտման հաշվետվությունները Էթիկայի հանձնաժողով ներկայացնելը և խորհրդին ներկայացնելը: Անկախ (a) և (b)

Ենթաբաժիններից, նշանակված անձը համարվում է չհաստատված, եթե նշանակված անձի ֆինանսական բացահայտման հաշվետվությունները չեն ներկայացվել Էթիկայի հանձնաժողով և չեն ներկայացվել Խորհրդին նշանակումը Խորհրդին ներկայացնելուց հետո 45 օրվա ընթացքում:

Բաժ. 10. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 650-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Նավահանգիստների հանձնակատարների խորհուրդը բաղկացած է հինգ անդամից, որոնք նշանակվում և հեռացվում են Բաժին 502-ում սահմանված կարգով: Խորհուրդը պետք է ներառի առնվազն մեկ անդամ, ով բնակվում է San Pedro-ում և մեկ անդամ, ով բնակվում է Wilmington-ում, ~~Նավահանգիստի շրջանի շրջակայքում,~~ քանի որ ~~այդ տարածքը նույնն է, ինչ~~ այդ տարածքները սահմանված են համաձայն հրամանագրի:

Բաժ. 11. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 683-ի Ենթաբաժին (b), որը վերաբերում է Հանրային հաշվետվողականության գրասենյակի գործադիր տնօրենին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(b) OPA (Հանրային հաշվետվողականության գրասենյակը) պետք է գլխավորի Գործադիր տնօրենը, ով պետք է բացառվի քաղաքացիական ծառայությունից: Գործադիր տնօրենը նշանակվում է քաղաքացիների կոմիտեի կողմից հինգ տարի ժամկետով՝ նշանակվելով Խորհրդի և Քաղաքապետի հաստատմամբ: Խորհուրդը, համաձայն հրամանագրի, նախատեսում է Գործադիր տնօրենի պաշտոնանկությունը՝ Քաղաքի կանոնադրության Բաժին 575(e) կետում սահմանված կարգի նման ընթացակարգով և միայն որոշմամբ նախատեսված պատճառներով: Խորհուրդը, համաձայն հրամանագրի, սահմանում է քաղաքացիների կոմիտեի կազմը և ընտրության կարգը:

Քաղաքացիների կոմիտեն Գործադիր տնօրենի ցանկացած թափուր պաշտոնը լրացնում է նշանակմամբ՝ Խորհրդի և Քաղաքապետի հաստատմամբ: Քաղաքապետը կարող է նշանակել ժամանակավոր Գործադիր տնօրեն, որը կզբաղեցնի պաշտոնը մինչև թափուր պաշտոնի լրացումը՝ պայմանով, որ Խորհրդի կողմից հաստատվի, սակայն առանց քաղաքացիների կոմիտեի հաստատման վեց ամսից ավելի ժամանակավոր Գործադիր տնօրեն չի կարող պաշտոնավարել:

Բաժ. 12. Los Angeles Քաղաքի Կանոնադրության Բաժին 1108-ում ավելացվել է նոր Ենթաբաժին (d), որը վերաբերում է կենսաթոշակային և թոշակային համակարգերի գլխավոր մենեջերներին, հետևյալ խմբագրությամբ.

(d) **Պաշտոնի ժամանակավոր նշանակում:** Գլխավոր տնօրենի պաշտոնում թափուր տեղ առաջանալու դեպքում, մինչև թափուր պաշտոնը զբաղեցնելը, խորհուրդը կարող է նշանակել ժամանակավոր գլխավոր տնօրեն վեց ամսով, որը Քաղաքապետի և Խորհրդի համաձայնությամբ կարող է երկարաձգվել ևս վեց ամսով:

Բաժ. 13. Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները բաժանելի են: Բացի դրանից ընտրողները հայտարարում են, որ նրանք անցած կլինեին այս Կանոնադրության փոփոխության բոլոր բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածները՝ առանց բաժնի, կետի, նախադասության, արտահայտության կամ հատվածի հակասահմանադրական կամ անվավեր համարվելու:

## II ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II:

Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ պարզաբանելու, որ El Pueblo հուշարձանը և Կենդանաբանական այգին հանդիսանում են զբոսայգիների սեփականությունը, պարզաբանելու, որ բաժինները կարող են վաճառել ապրանքներ՝ Քաղաքի գործունեությանն աջակցելու համար, ներառելու գենդերային ինքնությունը Քաղաքի կողմից զբաղվածության համար կիրառելի խտրականության դեմ կանոններում, պարզաբանելու Օդանավակայանի հանձնաժողովի լիազորությունները՝ սահմանելու վճարներ և կանոնակարգեր և կատարելու այլ փոփոխություններ և պարզաբանումներ՝ Քաղաքի կառավարման և գործառնությունների հետ կապված:

### ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ
### SHARON M. TSO, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

Los Angeles քաղաքի կառավարության հիմնական օրենքը դրված է Քաղաքի կանոնադրության մեջ: Քաղաքի կանոնադրությունը սահմանում է Քաղաքի կառավարության կառուցվածքը, պարտականությունները, գործառույթները, գործընթացները և լիազորությունները: Քաղաքը տարբեր փոփոխություններ և պարզաբանումներ է առաջարկում Քաղաքի կանոնադրությանը՝ կապված Քաղաքի կառավարման և գործառնությունների հետ: Քաղաքի կանոնադրությունը կարող է փոփոխվել միայն Քաղաքի ընտրողների ձայների մեծամասնությամբ:

Այս օրենսդրական նախագիծը կփոխի Քաղաքի կանոնադրությունը՝ Քաղաքի կառավարման և գործունեության վերաբերյալ տարբեր փոփոխություններ և պարզաբանումներ կատարելու համար, ներառյալ հետևյալը.

- Հստակորեն պարզաբանել, որ բաժանմունքները կարող են ներգրավվել եկամուտներ ստեղծող կոնցեսիոն գործողություններ, ինչպիսիք են ապրանքների կամ սննդի վաճառքը, միջոցներ հայթայթելու համար, որոնք աջակցում են բաժանմունքների գործունեությանը,
- Ներառել գենդերային ինքնությունը և գենդերային արտահայտությունը Կանոնադրության բաժնում, որը վերաբերում է Քաղաքի աշխատանքի մեջ խտրականության բացառմանը,
- Կանոնադրության տարբեր բաժիններում փոխել «Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենի» և «Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի» անվանումը «Քաղաքի վարչական պաշտոնյայի» և «Քաղաքի վարչական պաշտոնյայի գրասենյակի»՝ ընթացիկ պրակտիկային համապատասխանելու համար: Այս փոփոխությունն այլ կերպ չի փոփոխում ազդակիր Կանոնադրության բաժինները,
- Հստակեցնել, որ յուրաքանչյուր Քաղաքի գրասենյակ և բաժանմունք, ներառյալ Գրադարանի և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքները, իրավասու են ծախսել իրենց աջակցության համար հատկացված միջոցները հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում՝ Կանոնադրությամբ, հրամանագրերով և այլ կիրառելի օրենքներով նախատեսված կանոններին համապատասխան,
- Հստակեցնել, որ Գոտավորման կառավարման գրասենյակի կանոնների և կանոնակարգերի ստուգումը հասանելի կլինի California-ի Հանրային գրառումների մասին օրենքի համաձայն,

- Թույլատրել Հանգստի և զբոսայգիների բաժանմունքին տարածքներ վարձակալել Los Angeles-ի Միասնական դպրոցական շրջանին՝ հանրային զբոսայգիների նպատակներին համապատասխանող հասարակական շենքերի կառուցման և պահպանման համար,
- Հստակորեն պարզաբանել, որ El Pueblo-ի պատմական հուշարձանը և Los Angeles-ի Կենդանաբանական այգին մնում են նվիրված զբոսայգու սեփականություն նույնիսկ այն բանից հետո, երբ հանվել են Հանգստի և զբոսայգիների հանձնաժողովի վերահսկողությունից,
- Թույլատրել այլընտրանքային տիտղոս օգտագործել Նավահանգիստների բաժանմունքի, Օդանավակայանների բաժանմունքի և Ջրի և էներգիայի բաժանմունքի գլխավոր տնօրենի համար,
- Հստակեցնել, որ էլեկտրոնային ստորագրությունները կարող են օգտագործվել Նավահանգիստների բաժանմունքի, Օդանավակայանների բաժանմունքի և Ջրի և էներգիայի բաժանմունքի կողմից թողարկված եկամտային պարտատոմսերի հետ կապված,
- Հստակեցնել Օդանավակայանի հանձնակատարների խորհրդի կարողությունը՝ սահմանելու վճարներ, կանոններ և կանոնակարգեր առևտրային և մասնավոր սեփականատերերի կողմից օդանավակայանի գույքի օգտագործման և մուտքի համար ավիացիոն և վերգետնյա փոխադրումների նպատակներով,
- Թույլատրել «Los Angeles-ի Համաշխարհային օդանավակայաններ» տերմինի օգտագործումը որպես Օդանավակայանների բաժանմունքի պաշտոնական անվանում,
- Ապահովել ճկունություն քաղաքացիական ծառայության քննությունների մասին ծանուցում տրամադրելու համար պատասխանատու պաշտոնատար անձի նկատմամբ՝ թույլ տալու համար հրապարակումներ կատարել Անձնակազմի վարչության կայքում և սոցիալական ցանցերում, և
- Հստակեցնել, որ քաղաքացիական ծառայության հավաստագրերը կարող են միաժամանակ օգտագործվել բազմաթիվ բաժանմունքների կողմից:

Այս օրենսդրական նախագիծն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## MATTHEW W. SZABO, ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՅԱ

Այս օրենսդրական նախագիծը փոփոխում է Քաղաքի կանոնադրության մի քանի բաժիններ՝ պաշտոնականացնելու քաղաքային տարբեր վարչական և գործառնական պրակտիկա: Օրենսդրական նախագիծը հաստատում է, որ El Pueblo-ի հուշարձանը և Կենդանաբանական այգին զբոսայգու սեփականությունն են, բաժանմունքներին թույլ է տալիս վաճառել ապրանքներ՝ գործառնություններին աջակցելու համար, ներառում է գենդերային ինքնությունը զբաղվածության խտրականության կանոններում, սահմանում է Օդանավակայանի հանձնաժողովի իրավասությունը՝ սահմանելու վճարներ և կանոնակարգեր, և վերանայում է Քաղաքի վարչական պաշտոնյայի Կանոնադրությամբ սահմանված անվանունը Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակից: Այս փոփոխությունները նպատակ ունեն պաշտոնականացնել ներկայիս գործելակերպը՝ առանց որևէ բաժանմունքին նոր լիազորություններ տալու: Այս օրենսդրական նախագիծը չի պահանջում միջոցների հատկացում՝ փոփոխություններն իրականացնելու համար, այնուամենայնիվ, ապրանքներ վաճառող կամ վճարներ և կանոնակարգեր սահմանող բաժանմունքները կարող են լրացուցիչ միջոցներ պահանջել՝ եկամուտների ստեղծմանը և հավաքագրմանը աջակցելու համար: Այս պահին բավարար տեղեկատվություն չկա ազդակիր բաժանմունքներից որևէ մեկի ծախսերը որոշելու համար, ինչպես նաև եկամուտների գումարները, որոնք կարող են գոյանալ գոյություն ունեցող պրակտիկաների պաշտոնականացումից:

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-Ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը թարմացնում է Քաղաքի կանոնադրությունը՝ քաղաքապետարանի ծառայություններն ավելի արդյունավետ, թափանցիկ և հաշվետու դարձնելու համար:

Անցյալ տարվա ընթացքում Քաղաքի խորհրդին կից Քաղաքային կառավարման բարեփոխումների հանձնաժողովը դիմել է Քաղաքի բոլոր բաժանմունքների ղեկավարությանն՝ առաջարկություններ ներկայացնելու այն մասին, թե ինչպես կարելի է թարմացնել Քաղաքի կանոնադրությունը՝ ծառայությունների մատուցումը բարելավելու համար:

Նրանց առաջարկներից շատերը Կանոնադրության ձևակերպումների տեխնիկական ուղղումներ էին, որոնք ներառված են այս փոփոխության մեջ: Մյուսները շոշափելի բարելավումներ կկատարեն հանրային ծառայությունների ոլորտում:

Ի թիվս այլ բաների, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը թույլ կտա.

- Թույլատրել համատեղ օգտագործման պայմանագրեր կնքել Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի միջև, ինչը թույլ կտա ավելացնել երեխաների հանգստի վայրերը անբավարար սպասարկման տարածքներում:
- Թույլատրել Օդանավակայանի հանձնակատարների վարչությանը գանձել վճարներ մեր օդանավակայաններում ցամաքային տրանսպորտը և այլ առևտրային ծառայությունները կարգավորելու և կառավարելու համար:
- Դա օգուտ կբերի հարկատուներին՝ թույլ տալով Քաղաքին զեղչեր տրամադրել սննդի և առաջին անհրաժեշտության ապրանքների վրա քաղաքային հաստատություններում:
- Բարձրացնել թվային տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետությունը, ինչպիսիք են՝ էլեկտրոնային ստորագրությունները:
- Պահանջել, որ գոտիավորման բոլոր կանոններն ու կանոնակարգերը հասանելի լինեն հանրային ստուգման համար՝ California-ի Հանրային գրառումների մասին օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը նշանակում է.

- Երեխաների համար ավելի շատ զբոսայգիների տարածքներ
- Բարելավված վերգետնյա ուղևորափոխադրում դեպի օդանավակայան և հակառակ ուղղությամբ
- Քաղաքային ձևաթղթերը և դիմումները հեռակա կարգով լրացնելու ավելի հեշտ եղանակ
- Սննդի և խմիչքի ավելի մեծ տեսականի քաղաքային միջոցառումներում և այլ հաստատություններում

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

Սրանք այն փոփոխություններն են, որոնք խնդրել են Քաղաքի բաժանմունքները, որպեսզի նրանք կարողանան ավելի լավ ծառայել ձեզ: Սրանք փոփոխություններ են, որ կարող եք կատարել հիմա՝ քվեարկելով Քաղաքի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու օգտին: Ոչ ոք փաստարկներ չի ներկայացրել այս օրենսդրական նախաձեռնության դեմ, քանի որ դժվար է առարկել վերը նշված կետերից որևէ մեկի դեմ:

«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵՔ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-Ի ՀԱՄԱՐ

**ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-Ի ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ**

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, շրջան 2
City of Los Angeles

**ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՄ ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:**

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

## ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-Ի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը փոփոխություններ է կատարում Քաղաքի կանոնադրության մեջ, որը թույլ կտա քաղաքային վարչություններին և գործակալություններին բարելավել իրենց ծառայությունները ՁԵԶ՝ հանրության համար: Այս փոփոխություններից շատերը տեխնիկական բնույթ են կրում, սակայն դրանք վաղուց ուշացած են: ԲԱՌԱՑԻՈՐԵՆ ոչ ոք որևէ փաստարկ չներկայացրեց այս Փոփոխության դեմ, քանի որ այս փոփոխությունները պարզապես բարելավում են քաղաքային ծառայությունները:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը նշանակում է ավելի շատ հանգստի տարածք ավելացնել երեխաների համար այն թաղամասերում, որոնք չունեն բավարար այգիներ:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը նշանակում է բարելավել մեր օդանավակայաններն՝ այնտեղ կորպորատիվ օպերատորներից եկամուտներ հավաքելով, որպեսզի կարողանաք ավելի լավ ծառայություններ ստանալ:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը նախատեսում է սննդի, խմիչքի և ապրանքների ավելի շատ տարբերակներ, որոնք հանրությունը կարող է վայելել Քաղաքի օբյեկտներում և միջոցառումների ժամանակ:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-ը կառավարությանը դարձնում է ավելի արդյունավետ թվային տեխնոլոգիաների միջոցով, որպեսզի կարողանաք լրացնել Քաղաքի բազմաթիվ ձևաթղթեր և դիմումներ՝ առանց մեքենա վարելու, կայանելու և քաղաքապետարանի գրասենյակներում հերթ կանգնելու:

Քաղաքի կառավարումը դարձրեք ավելի արդյունավետ «ԱՅՈ» ՔՎԵՐԱԿԵՔ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II-Ի ՀԱՄԱՐ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II ՕԳՏԻՆ ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, Շրջան 2
City of Los Angeles

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

Նոր դրույթները կամ լեզուն, որն ավելացվել է կանոնադրությանը կամ գոյություն ունեցող կանոնադրության բաժիններին, ցույց են տրված ընդգծված տառատեսակով. կանոնադրությունից կամ կանոնադրության գոյություն ունեցող բաժիններից ջնջված բառերը ցույց են տրվում ~~վրագծված~~ տառատեսակով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ II

Բաժին 1. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 104-ի Ենթաբաժին (g) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(g) **Բիզնես ձեռնարկություններ**: Քաղաքը չպետք է ներգրավված լինի որևէ զուտ առևտրային կամ արդյունաբերական ձեռնարկությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ Քաղաքի ընտրողների ձայների մեծամասնությունը քվեարկում է այդ հարցի վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռնարկության աշխատանքների մեջ ներառված է եղել Քաղաքը Կանոնադրության ուժի մեջ մտնելու պահին, կամ եթե Քաղաքը ներգրավված է եղել Կանոնադրության մեջ այլ տեղում հատուկ լիազորված լինելու արդյունքում: Սույն ենթաբաժնում ոչինչ չի արգելում Քաղաքին ուղղակիորեն ներգրավվել սննդամթերքի և ապրանքների մանրածախ առևտրում, երբ այդ առևտուրը համահունչ են և աջակցում են Քաղաքի գործունեությանն ու նպատակներին:

Բաժին 2. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 104-ի Ենթաբաժին (i) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(i) **Խտրականության բացառում**: Քաղաքի ծառայության մեջ աշխատող անձանց ընտրության կամ փոխհատուցման հարցում խտրականություն չպետք է լինի ռասայի, կրոնի, ազգային ծագման, նախնիների, սեռի, գենդերային ինքնության, գենդերային արտահայտման, սեռական կողմնորոշման, տարիքի, հաշմանդամության կամ ամուսնական կարգավիճակի պատճառով:

Բաժ. 3. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 201-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Քաղաքի գրասենյակները պետք է լինեն՝

Քաղաքապետի գրասենյակը
Քաղաքային խորհրդի գրասենյակը
Քաղաքի դատախազի գրասենյակը
Վերահսկողի գրասենյակը
~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակը~~ Քաղաքի վարչական ծառայողի գրասենյակը
Քաղաքի գործավարի գրասենյակը
Ֆինանսների գրասենյակը

Բաժ. 4. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 210-ի առաջին նախադասությունը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Քաղաքի վերահսկողը, Քաղաքի դատախազը, Գանձապահը, Քաղաքի գործավարը և ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենը~~ Քաղաքի վարչական պաշտոնյան յուրաքանչյուրը պետք է նշանակի օգնական կամ տեղակալ, որը պաշտոնակատար է դառնում գործող պաշտոնյայի թափուր պաշտոնի դեպքում:

Բաժ. 5. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 233-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Քաղաքապետը կարող է աշխատողների ժամանակավոր տեղափոխումներ կատարել՝ ոչ ավելի, քան 120 օրը մեկ օրացուցային տարվա ընթացքում, մի նշանակված պաշտոնից կամ բաժանմունքից մյուսը, բացառությամբ Սեփականության բաժանմունքների՝ կադրերի ժամանակավոր պակասը վերացնելու կամ լրացուցիչ աշխատողների ժամանակավոր պահանջները բավարարելու համար, որոնք առաջացել են ժամանակավոր կամ սեզոնային պահանջներ ցանկացած գրասենյակում կամ բաժանմունքում: Քաղաքապետն աշխատողների տեղափոխման պահին այդ մասին ծանուցում է Քաղաքի գործավարին, իսկ Քաղաքի գործավարը տեղեկացնում է Խորհրդի նախագահին, ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենին,~~ Քաղաքի վարչական պաշտոնյային և Քաղաքացիական ծառայության հանձնակատարների խորհրդին տեղափոխման մասին: Այսպես տեղափոխված աշխատողների փոխհատուցումը գանձվում է գրասենյակի կամ բաժանմունքի վրա, որտեղ աշխատողները տեղափոխվել են տեղափոխման ժամանակահատվածի համար: Նշանակող մարմնից որևէ մեկի կողմից ժամանակավոր տեղափոխման վերաբերյալ գրավոր առարկության դեպքում Քաղաքապետը որոշում է, թե արդյոք այդ տեղափոխումը պետք է կատարվի, թե ոչ:

Բաժ. 6. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 290-ին նախորդող վերնագիրը փոփոխվել է՝ «Վարչական հետազոտությունների ծառայությունների գրասենյակ» եզրույթը փոխարինելով «Քաղաքի վարչական պաշտոնյայի գրասենյակ» տերմինով:

Բաժ. 7. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 290-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենը~~ Քաղաքի վարչական պաշտոնյան նշանակվում է և հեռացվում է պաշտոնից համաձայն Բաժին 508-ի: ~~Տնօրենը~~ Քաղաքի վարչական պաշտոնյան պետք է ունենա վարչական և գործադիր կարողություններ, որոնք ապացուցված են գործադիր կամ վարչական մակարդակով հինգ տարվա փորձով՝ ~~Տնօրենը~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի պաշտոնում նշանակվելուն անմիջապես նախորդող տասը տարվա ընթացքում: ~~Տնօրենը~~ Քաղաքի վարչական պաշտոնյան կարող է նշանակել և հեռացնել պաշտոնից այնքան օգնականների, որքան լիազորված է Կանոնադրությամբ և հրամանագրով:

Բաժ. 8. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 291-ի առաջին նախադասությունը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

~~Տնօրենն~~ Քաղաքի վարչական պաշտոնյան ունի հետևյալ իրավունքներն ու պարտականությունները.

Բաժ. 9. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 291-ի Ենթաբաժին (h) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(h) Քաղաքապետի հաստատմամբ սահմանում է կանոններ և չափորոշիչներ, որոնք կարգավորում են ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի գրասենյակի իրավասության տակ գտնվող հարցերը, որոնց պետք է համապատասխանեն Քաղաքի բոլոր աշխատակիցներն ու բաժանմունքները.

Բաժ. 10. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 291-ի վերջին նախադասությունը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Բացառությամբ Բաժին 292-ով նախատեսված դեպքերի, սույն բաժնում սահմանված ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենի~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի լիազորություններն ու պարտականությունները չեն տարածվում Սեփականության բաժանմունքների վրա:

Բաժ. 11. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 292-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենն~~ Քաղաքի վարչական պաշտոնյան իրականացնում է հետազոտություն վարչական կառավարման ոլորտում՝ Քաղաքի կառավարման բոլոր նշանակված գրասենյակների, բաժանմունքների և այլ գերատեսչությունների կազմակերպման, քաղաքականության և գործելակերպի բարելավման համար, ներառյալ, առանց սահմանափակման, Սեփականության բաժանմունքները՝ ծրագրերի գնահատման և տարբեր պաշտոնների պարտականությունների, մեթոդների և արդյունավետության չափանիշների վերաբերյալ կատարողականի չափորոշիչների մշակման նպատակով: ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենը~~ Քաղաքի վարչական պաշտոնյան Քաղաքապետին, Խորհրդին և համապատասխան բաժանմունքներին և գործակալություններին առաջարկում է այն փոփոխությունները, որոնք կնպաստեն քաղաքի կառավարման տնտեսությանն ու արդյունավետությանը:

Բաժ. 12. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 293-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Անկախ 213-րդ Բաժնից, ղեկավար-աշխատող հարաբերությունների հետ կապված լրացուցիչ պարտականություններ կամ այլ պարտականություններ, որոնք այլ բաժանմունքների, գրասենյակների և հանձնաժողովների պատասխանատվությունը չեն կրում, կարող են համաձայն հրամանագրի վերագրվել ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակին~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի գրասենյակին: Այլ բաժանմունքների, գրասենյակների և հանձնաժողովների պարտականությունները կարող են փոխանցվել ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակին~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի գրասենյակին միայն Բաժին 514-ի համաձայն:

Բաժ. 13. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 311-ի Ենթաբաժին (a) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(a) Այն ժամանակ, երբ Քաղաքապետը սահմանում է, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ը, յուրաքանչյուր խորհուրդ կամ պաշտոնատար որևէ բաժանմունքի կամ գրասենյակի կամ քաղաքապետարանի այլ գործունեության ղեկավարն է, բացառությամբ այն բաժանմունքների, որոնք վերահսկում են իրենց սեփական միջոցները, ներկայացնում են Քաղաքապետին, իսկ պատճենը՝ Խորհրդին և ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենին~~ Քաղաքի վարչական պաշտոնյային, Քաղաքապետի կողմից սահմանված ձևերով և կարգով իրենց բաժանմունքների և գրասենյակների պատշաճ գործունեության համար հաջորդ ֆինանսական տարվա համար անհրաժեշտ գումարի մանրամասն նախահաշիվ: Այս նախահաշիվները պետք է պարունակեն բյուջետային միասնական դասակարգումներ և պետք է հստակ շարադրեն կատարվող գործառույթները և այդպիսի կատարման համար պահանջվող կետերն ու ծառայությունները: Գնահատումներին կցվում են ամփոփագրեր, ժամանակացույցեր և օժանդակ տվյալներ: Նախորդ տարվա հատկացումների նկատմամբ ավելացում պահանջող ստորաբաժանման ցանկացած ղեկավար կամ պաշտոնյա պետք է նշի, թե որ դասակարգումները կարիքն ունեն ավելացման և դասակարգի յուրաքանչյուր դասակարգման համար անհապաղ անհրաժեշտության կարգը: Պաշտոնյայի կամ բաժանմունքի ղեկավարի հետ խորհրդակցելուց հետո Քաղաքապետը կարող է հետ ուղարկել նախահաշիվը՝ հանձնարարելով պատրաստել վերանայված նախահաշիվ՝ հիմնվելով բաժանմունքի, գրասենյակի կամ գործունեության առավելագույն գումարի վրա, որը պետք է սահմանի քաղաքապետը կամ Քաղաքապետի որոշմամբ հետագա որակավորումներով: Պաշտոնյան կամ բաժանմունքի ղեկավարը վերանայված նախահաշիվը ներկայացնում է Քաղաքապետին, իսկ կրկնօրինակը՝ Խորհրդին և ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենին~~ Քաղաքի վարչական պաշտոնյային, Քաղաքապետի կողմից նշված ամսաթվին:

Բաժ. 14. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 311-ի Ենթաբաժին (c) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(c) Վերահսկողը յուրաքանչյուր տարվա մարտի 1-ին կամ դրանից շուտ ներկայացնում է Քաղաքապետին, իսկ կրկնօրինակը՝ Խորհրդին և ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենին~~ Քաղաքի վարչական պաշտոնյային, մանրամասն հայտարարություն այն գումարի մասին, որը Վերահսկողի գնահատմամբ կպահանջվի տոկոսների և մարման միջոցների և Քաղաքի կամ հատուկ շրջանների բոլոր չմարված պարտքերի և օրինական այլ պարտավորությունների համար, ինչպես նաև տուգանքներից, լիցենզիաներից և այլ աղբյուրներից ստացվելիք եկամուտների գնահատում:

Բաժ. 15. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 320-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Քաղաքի ընդհանուր բյուջեով նախատեսված յուրաքանչյուր գրասենյակ և բաժանմունք, ինչպես նաև Գրադարանի և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքները, այնքանով, որքանով նրանց աջակցում են Գլխավոր հիմնադրամի հատկացումները, իրավասու են ծախսել սույն Կանոնադրության, հրամանագրի և կիրառելի այլ օրենքների այլ դրույթներով նախատեսված կարգով, դրան հաջորդող ֆինանսական տարվա աջակցության համար հատկացված միջոցները, բայց միայն նախատեսվող ծախսերի ծրագրին համապատասխան, որը պետք է ժամանակ առ ժամանակ կազմվի, ներկայացվի և փոփոխվի՝ օրենքով նախատեսված կարգով: Քաղաքի կառավարության ոչ մի բաժանմունք, բյուրո կամ գրասենյակ չպետք է ծախսեր կամ պարտավորություններ կատարի դրանց համար հատկացված գումարից ավելի:

Բաժ. 16. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 342-ի Ենթաբաժին (a) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(a) Քաղաքապետի հաստատմամբ համաձայն հրամանագրի սահմանված չափը չգերազանցող փոխանցումների համար, պայմանով, որ Քաղաքապետն այդ փոխանցման մասին փոխանցման պահին ծանուցում է Քաղաքի գործավարին, որը փոխանցման մասին տեղեկացնում է Խորհրդի նախագահին, Վերահսկողին և ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենին~~ Քաղաքի վարչական պաշտոնյային:

Բաժ. 17. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 343-ի Ենթաբաժին (d) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(d) **Ծանուցում**: Սույն բաժնի համաձայն դրամական միջոցների ցանկացած փոխանցում կատարելու պահին փոխանցումը հաստատող մարմինը փոխանցման մասին ծանուցում է Քաղաքի գործավարին, որը ծանուցում է Խորհրդի նախագահին, ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենին~~ Քաղաքի վարչական պաշտոնյային:

Բաժ. 18. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 508-ի Ենթաբաժին (d) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(d) **Տարեկան վերանայում**: Քաղաքապետը տարեկան գնահատում է յուրաքանչյուր գլխավոր վարչական պաշտոնյայի: Քաղաքապետը Խորհրդի կողմից սահմանված ուղեցույցների շրջանակներում սահմանում կամ ճշգրտում է գլխավոր վարչական պաշտոնյայի փոխհատուցման չափը՝ ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենի~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի կողմից այդ ուղեցույցների վերաբերյալ խորհրդին առաջարկություններից հետո:

Բաժ. 19. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 508-ի Ենթաբաժին (f) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(f) **Հանձնաժողովի կողմից նշանակված գլխավոր վարչական պաշտոնյաներ**: Ցանկացած գլխավոր վարչական պաշտոնյա կամ գործադիր տնօրեն, որը նշանակվում է Հանձնաժողովի կողմից՝ համաձայն հրամանագրի, ամեն տարի վերանայվում է նշանակող հանձնաժողովի կողմից: Այդ հանձնաժողովը Խորհրդի կողմից սահմանված ուղեցույցների շրջանակներում սահմանում կամ ճշգրտում է գլխավոր վարչական պաշտոնյայի կամ գործադիր տնօրենի փոխհատուցումը՝ ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենի~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի կողմից այդ ուղեցույցների վերաբերյալ խորհրդին առաջարկություններից հետո: Հանձնաժողովը գնահատման և աշխատավարձի որոշման պատճենը ուղարկում է Քաղաքապետին և Խորհրդին՝ տեղեկացնելու համար:

Բաժ. 20. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 561-ի երրորդ պարբերությունը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Գոտիավորման գլխավոր ադմինիստրատորը կարող է ընդունել համաձայն հրամանագրի սահմանված պահանջները կատարելու համար անհրաժեշտ կանոններ, որոնք չեն հակասում կամ անհամապատասխան չեն այդ կանոնակարգերին: Բոլոր կանոններն ու կանոնակարգերը պետք է հասանելի լինեն ստուգման համար՝ California-ի հանրային գրառումների մասին օրենքի պահանջներին համապատասխան, ~~Գոտիավորման վարչակազմի գրասենյակում~~:

Բաժ. 21. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 571-ի Ենթաբաժին (b)-ի (2) ստորաբաժինը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(2) ամեն տարի գնահատում է Ոստիկանապետին՝ Խորհրդի կողմից սահմանված ուղեցույցների շրջանակներում, սահմանում կամ ճշգրտում է Ոստիկանապետի փոխհատուցումը՝ ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենի~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի կողմից այդ ուղեցույցների վերաբերյալ խորհրդին առաջարկություններից հետո, և գնահատման ու աշխատավարձի որոշման պատճենը փոխանցում է Քաղաքապետին և Խորհրդին՝ տեղեկատվության համար:

Բաժ. 22. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 594-ի Ենթաբաժին (c) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(c) **Որոշ նպատակներին նվիրված այգիների տեղափոխման սահմանափակումներ**: Բոլոր հողերը, որոնք նախկինում կամ այսուհետ առանձնացվել կամ որպես հանրային այգի են հատկացվել, ընդմիշտ մնում են անձեռնմխելի հասարակության օգտագործման համար. բայց խորհուրդը կարող է թույլատրել հողերի օգտագործումը զբոսայգու ցանկացած նպատակով, և հետևյալի համար.

(1) Սերվիտուտներ կամ ճանապարհի իրավունքներ ցանկացած աշխատանքի, բարելավման կամ կառույցի համար, որն անհրաժեշտ և հարմար է Քաղաքին կամ նրա բնակիչներին ծառայություններ մատուցելու համար՝ կապված Քաղաքին պատկանող որևէ հասարակական կազմակերպության հետ: Նմանատիպ հանգամանքներում նմանատիպ թույլտվություն կարող է տրվել արտոնություն ունեցող ցանկացած մասնավոր հասարակական կազմակերպությանը և սահմանափակվել արտոնագրի գործողության ժամկետով: Այս սերվիտուտները կամ ճանապարհի իրավունքը ենթակա են կարգավորման որոշմամբ:

(2) Վարձակալություն Los Angeles-ի վարչաշրջանի, ~~կամ~~ Los Angeles Միացյալ դպրոցական շրջանի, California նահանգի , կամ Միացյալ Նահանգների համար 50 տարի չգերազանցող ժամկետով, ցանկացած հանրային զբոսայգում հանրային պարկի նպատակներին համապատասխանող հասարակական շենքերի կառուցման և պահպանման համար:

(3) Ձուլված ավազի կամ այլ բնական ռեսուրսների վերացում և հեռացում այն պայմաններով, որոնք խորհուրդը կարող է սահմանել և այնպես, որ էականորեն չվնասեն հասարակական օգտագործման և տարածքների վայելքի վայրերը:

(4) Խորհրդի կողմից վերահսկվող այգու հողատարածքների բացում, հիմնում և սպասարկում:

Բաժ. 23. Los Angeles քաղաքի Կանոնադրությանն ավելացել է նոր Բաժին 598՝ հետևյալ տեքստով.

**Բաժ. 598. El Pueblo de Los Angeles պատմական հուշարձան և Los Angeles-ի Կենդանաբանական այգի:**

(a) Ամբողջ անշարժ գույքը, որը նախկինում վերահսկվում և շահագործվում էր Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի կողմից, որը տրամադրվել էր որպես հանրային այգի և հատկացվել էր որպես կենդանաբանական այգի, հավերժ կմնա հանրության օգտագործման համար անձեռնմխելի: Նման գույքը կարող է շահագործվել, կառավարվել, պահպանվել և վերահսկվել այլ բաժանմունքի կողմից, քան Հանգստի և զբոսայգիների բաժանմունքը, որը կարող է նշանակվել համաձայն հրամանագրի, և այդպիսի բաժանմունքը կունենա նույն լիազորություններն ու պարտականություններն այդ գույքի նկատմամբ, ինչպիսինը Հանգստի և զբոսայգիների հանձնակատարների խորհուրդն ունի Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի գույքի նկատմամբ:

(b) Ամբողջ անշարժ գույքը, որը նախկինում վերահսկվում և շահագործվում էր Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի կողմից, որը տրամադրվել էր որպես հանրային այգի և որը ներառում է El Pueblo de Los Angeles պատմական հուշարձանը, հավերժ կմնա հանրության օգտագործման համար անձեռնմխելի: Նման գույքը կարող է շահագործվել, կառավարվել, պահպանվել և վերահսկվել այլ բաժանմունքի կողմից, քան Հանգստի և զբոսայգիների բաժանմունքը, որը կարող է նշանակվել համաձայն հրամանագրի, և այդպիսի բաժանմունքը կունենա նույն լիազորություններն ու պարտականություններն այդ գույքի նկատմամբ, ինչպիսինը Հանգստի և զբոսայգիների հանձնակատարների խորհուրդն ունի Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի գույքի նկատմամբ:

Բաժ. 24. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 604-ի Ենթաբաժին (b) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(b) **Տարեկան վերանայում**: Յուրաքանչյուր Սեփականության բաժանմունքի խորհուրդը գնահատում է իր գլխավոր մենեջերին առնվազն տարին մեկ և սահմանում կամ ճշգրտում է գլխավոր մենեջերի փոխհատուցումը խորհրդի կողմից սահմանված ուղեցույցների համաձայն՝ ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենի~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի կողմից այդ ուղեցույցների վերաբերյալ խորհրդին արված առաջարկություններից հետո: Խորհուրդն իր կատարողականի գնահատման և աշխատավարձի որոշման պատճենն ուղարկում է Քաղաքապետին և Խորհրդին:

Բաժ. 25. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 604-ին ավելացել է նոր Ենթաբաժին (d)՝ հետևյալ տեքստով.

(d) **Այլընտրանքային պաշտոն**: Յուրաքանչյուր Սեփականության բաժանմունքի խորհուրդը կարող է նշանակել գլխավոր տնօրենի այլընտրանքային պաշտոն, ներառյալ, բայց չսահմանափակվելով գլխավոր գործադիր տնօրենի կամ գործադիր տնօրենի համար:

Բաժ. 26. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 609-ի Ենթաբաժին (d) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(d) **Մրցակցային հայտ կամ մասնավոր վաճառք**: Եկամուտային պարտատոմսերը պետք է վաճառվեն մրցակցային հայտային գործընթացի

համաձայն։ Այնուամենայնիվ, Եկամուտային պարտատոմսերը կարող են վաճառվել մասնավոր վաճառքով կամ Ընթացակարգային որոշմամբ լիազորված բաժանմունքի և Խորհրդի համար ընդունելի որևէ այլ եղանակով՝ հետևյալ պայմաններով.

(1) Բաժանմունքի խորհուրդը թույլատրել է Եկամուտային պարտատոմսերի վաճառքը մասնավոր վաճառքի համաձայն՝ բաժանմունքի գլխավոր ֆինանսական տնօրենի գրավոր առաջարկությունից հետո՝ նշելով պատճառները, թե ինչու մասնավոր վաճառքը օգուտ կբերի բաժանմունքին։

(2) Խորհուրդը՝ ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենից~~ Քաղաքի վարչական պաշտոնյայից հաշվետվություն ստանալուց հետո, հաստատել է մասնավոր վաճառքը։

(3) Խորհրդին հնարավորություն է ընձեռվել, ինչպես սահմանված է Ընթացակարգային որոշման մեջ, չհաստատել տեղաբաշխող ընկերության(ների) բաժանմունքի կողմից Եկամուտային պարտատոմսերի մասնավոր վաճառքի ընտրությունը։

Բաժ. 27. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 609-ի Ենթաբաժին (g)-ի (3) ստորաբաժինը, որը վերաբերում է Քաղաքի Սեփականության բաժանմունքների կողմից թողարկված եկամուտային պարտատոմսերին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(3) *Եկամուտային պարտատոմսերի վավերականությունը։* Եկամուտային պարտատոմսերի վավերականությունը, որտեղ նշվում է, որ դրանք թողարկվել են սույն բաժնի համաձայն, չպետք է ազդի Կանոնադրության որևէ այլ բաժնում պարունակվող որևէ դրույթի կամ սահմանափակումների վրա։ Սույն բաժնի համաձայն թողարկված Եկամուտային պարտատոմսերի ցանկացած անհրաժեշտ ստորագրություն կարող է լինել ֆաքսիմիլով, ~~կամ~~ ձեռքով ստորագրությամբ, կամ էլեկտրոնային ստորագրությամբ։ Կանոնադրության Բաժիններ 146, 146.1, 229, 229.1 և 239, որոնք գոյություն ունեն 1996 թվականի հունիսի 1-ից, ամբողջությամբ մնում են ուժի մեջ սույն բաժնի ընդունումից հետո, քանի դեռ Խորհուրդը չի ընդունել սույն բաժնում նախատեսված Ընթացակարգային որոշում(ներ)ը։

Բաժ. 28. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 632-ի Ենթաբաժիններ (a) և (b), որոնք վերաբերում են Օդանավակայանի հանձնակատարների խորհրդի լիազորություններին և պարտականություններին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Խորհուրդն իրավասու է և պարտավոր է.

(a) **Դրույքաչափերը և ծախսերը**։ Ամրագրում և գանձում է Օդանավակայանի ակտիվների և բաժանմունքի կողմից մատուցվող ցանկացած այլ ծառայությունների դրույքաչափերը և ծախսերը, ներառյալ ավիացիոն և վերգետնյա փոխադրումների նպատակով առևտրային և մասնավոր օպերատորների կողմից օդանավակայանի գույքի օգտագործման և մուտքի համար վճարների սահմանումը։

(b) **Կանոններ և կանոնակարգեր**։ Ելնելով առևտրին առնչվող Միացյալ Նահանգների լիազորություններից, սահմանում և կիրառում է բոլոր անհրաժեշտ կանոններն ու կանոնակարգերը, որոնք կարգավորում են Քաղաքին պատկանող կամ վերահսկվող օդանավակայանների օգտագործումը և վերահսկումը, որոնք գտնվում են Քաղաքի ներսում և դրսում, ինչպես նաև այդ օդանավակայաններին մոտ գտնվող օդուղիների և ջրային ուղիների օգտագործումը, որը տեղի է ունենում օդային նավիգացիայի հետ։ Խորհրդի կողմից ընդունված կանոնակարգը հաստատվում է համաձայն հրամանագրի, որով սահմանվում են տույժեր սույն կանոնների և կանոնակարգերի խախտման համար։ Այս կանոնները և կանոնակարգերը կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հետևյալով.

(1) օդային նավիգացիայի և թռիչքի համար բոլոր սարքերի վերելքը, վայրէջքը, խարիսխը, շարժումը, սպասարկումը, շահագործումը կամ

օգտագործումը, կամ հարմար կամ անհրաժեշտ այդ գործողությունների հետ կապված, ~~և~~

(2) ցանկացած օդանավակայանի ցանկացած կոմունալ ձեռնարկության, մեքենայի, շենքի, կառույցի կամ բարելավման նախագծում, կառուցում, սպասարկում, օգտագործում, վիճակ և շահագործում, ինչպես նաև օդակայաններում կամ դրանցում գտնվող պեղումների, խոչընդոտների և երթևեկության վերահսկում; և

(3) օդանավակայանի գույքով վերգետնյա փոխադրումների կառավարում և կարգավորում, ներառյալ առևտրային տրանսպորտային ծառայություններ մատուցողների մուտքը:

(c) **Օդանավակայանների բարելավում**: Բոլոր գույքի, բարելավումների, կոմունալ ծառայությունների, սարքավորումների, պարագաների կամ օբյեկտների գնում, վարձակալում, ձեռք բերում, նախագծում, կառուցում, պահպանում, կատարելագործում, վերանորոգում և շահագործում, ինչպես անհրաժեշտ կամ հարմար կհամարվի Բաժանմունքի նպատակների համար: Դատապարտման իրավունքն իրականացվում է միայն խորհրդի հաստատմամբ:

Բաժ. 29. Los Angeles քաղաքի Կանոնադրությանն ավելացել է նոր Բաժին 637՝ հետևյալ տեքստով.

**Բաժ. 637. Վարչության անվանում:**

Օդանավակայանների բաժանմունքը կարող է նաև կոչվել և հայտնի լինել որպես Los Angeles World Airports:

Բաժ. 30. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1001-ի Ենթաբաժին (a)-ի (14) ստորաբաժինը, որը վերաբերում է ազատված պաշտոններին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(14) ~~Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի~~ Քաղաքի վարչական պաշտոնյայի գրասենյակի տնօրենի բոլոր տեղակալները:

Բաժ. 31. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1007, որը վերաբերում է քննական տեղեկագրերին, փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

Յուրաքանչյուր քննության ժամանակի, վայրի և ընդհանուր շրջանակի մասին ծանուցում է ~~Կադրերի բաժանմունքի գլխավոր մենեջերը՝~~ քաղաքացիական ծառայության կանոններով սահմանված կարգով:

Բաժ. 32. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1010-ին ավելացվել է նոր Ենթաբաժին (f), որը վերաբերում է քաղաքացիական ծառայության հավաստագրմանը, հետևյալ խմբագրությամբ.

(f) Այս բաժնում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ արգելի որևէ վկայականի միաժամանակ օգտագործումը մի քանի բաժանմունքների կողմից:

Բաժ. 33. Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները բաժանելի են: Բացի դրանից ընտրողները հայտարարում են, որ նրանք անցած կլինեին այս Կանոնադրության փոփոխության բոլոր բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածները՝ առանց բաժնի, կետի, նախադասության, արտահայտության կամ հատվածի հակասահմանադրական կամ անվավեր համարվելու:

## ER ՔԱՂԱՔԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER:

Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ Քաղաքի էթիկայի հանձնաժողովի համար նվազագույն տարեկան բյուջե սահմանելու, բարձրացնելու Հանձնաժողովի իրավասությունը ծախսերի վերաբերյալ որոշումների և աշխատանքի ընդունման հարցերում, թույլ տալու Հանձնաժողովին սահմանափակ հանգամանքներում դրսից վարձել փաստաբան, սահմանելու Հանձնաժողովի անդամների համար լրացուցիչ որակավորման պահանջներ, պահանջելու, որ Քաղաքային խորհուրդը հանրային լսումներ անցկացնի Հանձնաժողովի առաջարկների վերաբերյալ և բարձրացնելու պատիժները Քաղաքի օրենքների խախտման համար:

### ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ
### SHARON M. TSO, ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

Էթիկայի հանձնաժողովը ստեղծվել է Los Angeles քաղաքում՝ ապահովելու, որ քաղաքը բիզնես է վարում արդյունավետությամբ, թափանցիկությամբ և արդարությամբ՝ միաժամանակ աշխատելով Քաղաքի կառավարության և ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վստահության ձևավորման ուղղությամբ: Էթիկայի հանձնաժողովը օրենքով պարտավոր է կիրառել քաղաքային և նահանգային օրենքները, որոնք վերաբերում են քարոզարշավի ֆինանսավորմանը, պոտենցիալ կապալառուների և մշակողների հետ քաղաքային պայմանագրերին, կառավարության էթիկայի և լոբբիստական գործունեությանը:

2023 թվականին Խորհուրդը նախաձեռնեց Քաղաքի կանոնադրության բարեփոխման գործընթաց: Որպես այս ջանքերի մի մաս, Էթիկայի հանձնաժողովը մի քանի առաջարկություններ է ներկայացրել Քաղաքի խորհրդին, որոնք կթարմացնեն Քաղաքի կանոնադրությունը՝ ընդլայնելու հանձնաժողովի լիազորություններն ու գործառնական անկախությունը, ինչպես նաև թարմացնելու վարչական դրույթները՝ կապված հանձնաժողովի քաղաքականության և գործընթացների հետ:

Օրենսդրական նախագիծը կփոխի Քաղաքի կանոնադրությունը հետևյալ կերպ.

- Ավելացնել արգելքներ այն անձանց համար, ովքեր կարող են նշանակվել Էթիկայի հանձնաժողովում, ինչը կկանխի նշանակող մարմնի հարազատների կամ Քաղաքի ընտրված այլ պաշտոնյաների, քաղաքական արշավի խորհրդատուների կամ քաղաքական քարոզարշավի խոշոր նվիրատուների ազգականների առաջադրումը,
- Ավելացնել որակավորումներ Հանձնաժողովի անդամների և Գործադիր տնօրենի համար նրանց պաշտոնավարման ընթացքում, ներառյալ՝ սեփականության շահերի սահմանափակումները մի բիզնեսում, որը պայմանագիր է կնքում կամ հայեցողական հաստատում է պահանջում Քաղաքից, մասնակցում է որպես քարոզարշավի հիմնական դոնոր կամ տրամադրում է վճարովի խորհրդատվություն կամ ծառայություններ արշավներին,
- Թույլատրել Էթիկայի հանձնաժողովի նշանակված անդամներին իրենց նշանակող մարմինների կողմից հեռացումը և Հանձնաժողովի թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը 30-ից դարձնելով 90 օր,
- Բարձրացնել էթիկայի հետ կապված խախտման դրամական պատիժը $5,000-ից մինչև $15,000 և ամեն տարի կարգավորել այս տուգանքը՝ համաձայն Սպառողական գների ինդեքսի,
- Թույլ տալ Գործադիր տնօրենի նշանակված անձին որոշել, թե արդյոք կա Քաղաքի կանոնադրության կամ Քաղաքի կանոնադրության դրույթների խախտման հետ կապված հավանական պատճառ,

- Պահանջել Քաղաքի խորհրդից 180 օրվա ընթացքում հանրային լսումներ անցկացնել Էթիկայի հանձնաժողովի կողմից ներկայացված քաղաքականության առաջարկի վերաբերյալ,
- Թույլատրել Էթիկայի հանձնաժողովին սահմանափակ հանգամանքներում ունենալ արտաքին իրավախորհրդատու, ներառյալ՝ Քաղաքի դատախազին, Քաղաքի դատախազությանը, Քաղաքի դատախազի քարոզարշավին կամ հատուկ հետաքննության և կատարողական գործերին առնչվող հարցերի վերաբերյալ,
- Մեծացնել Հանձնաժողովի բյուջեն հատուկ դատախազի համար $250,000-ից մինչև $500,000, և թարմացնել դրույթները, որոնք թույլ կտան հանձնաժողովին ընտրել հատուկ դատախազի հաստատված ցուցակից, երբ Քաղաքի դատախազը հայտարարի շահերի բախման մասին,
- Էթիկայի հանձնաժողովի տարեկան գործառնական բյուջեի համար հատկացնել տարեկան նվազագույնը $7 միլիոն, սկսած 2025-2026 թթ., և ամեն տարի ճշգրտել այդ հատկացումները՝ հիմնվելով Քաղաքի նախորդ տարվա եկամուտների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ խորհուրդը գտնում է, որ դա չանելու համար կան հանգամանքներ,
- Թույլատրել Էթիկայի հանձնաժողովի կողմից կատարվող ծախսերը՝ առանց Քաղաքի գրասենյակների կամ անձնակազմի նախնական հաստատման, երբ ծախսերը գտնվում են Հանձնաժողովի բյուջեի շրջանակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ խորհուրդը գտնում է, որ կան հանգամանքներ՝ դա չանելու համար,
- Լիազորել Էթիկայի հանձնաժողովին սահմանել Հանձնաժողովի գործադիր տնօրենի աշխատավարձը և համապատասխանեցնել աշխատավարձի միջակայքը՝ համապատասխանեցնելու Քաղաքի այլ գլխավոր տնօրենների աշխատավարձերի միջակայքերին,
- Էթիկայի հանձնաժողովի աշխատողներին ազատել քաղաքացիական ծառայության զբաղվածության դրույթներից, և
- Ազատել Էթիկայի հանձնաժողովին աշխատանքի ընդունման սառեցումներից, եթե Հանձնաժողովը գործում է իր հաստատված բյուջեի շրջանակներում:

Այս օրենսդրական նախագիծն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**MATTHEW W. SZABO, ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՅԱ**

Այս օրենսդրական նախագիծը սահմանում է Քաղաքի Էթիկայի հանձնաժողովի համար $7,000,000 նվազագույն տարեկան բյուջե՝ ներառյալ $500,000-ը՝ ցանկացած նշանակված հատուկ դատախազին աջակցելու համար, մեծացնում է Հանձնաժողովի իրավասությունը ծախսերի վերաբերյալ որոշումների և աշխատանքի ընդունման հարցերում, թույլ է տալիս Հանձնաժողովին որոշակի հանգամանքներում ստանալ արտաքին պաշտպան ինչպես նաև մեծացնում է պատիժները Քաղաքի օրենքների խախտման համար: 2025-26 թվականներին ընթացիկ բյուջեից $7,000,000 հասնելու համար պահանջվող աճը գնահատվում է $380,000: Ավելին, օրենսդրական նախագիծը պահանջում է, որ բյուջեի գումարը ճշգրտվի յուրաքանչյուր ֆինանսական տարի՝ հիմնվելով նախորդ տարվա Քաղաքի եկամուտների փոփոխության վրա: Այնուամենայնիվ, խորհուրդը կարող է պարզել, որ առկա են այնպիսի խիստ հանգամանքներ, որ այդ ֆինանսական տարվա համար ճշգրտումներ չպետք է կատարվեն: Պահանջվող աճի հնարավոր փոխհատուցումը խախտումների համար տուգանքներից ստացվող լրացուցիչ եկամուտն է: Տույժերի քանակը և չափը, որոնք կարող են տրվել և գանձվել ապագա տարիներին, այս պահին հնարավոր չէ որոշել:

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-Ի

Քվեարկեք քաղաքի կառավարման էթիկայի իրական բարեփոխումների օգտին՝ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ER-ի միջոցով: Այս փոփոխությունը Քաղաքի էթիկայի հանձնաժողովին ավելի շատ ազատություն է տալիս՝ քննելու էթիկայի խախտումները, և մեծացնում է սահմանված տույժերի չափը նրանց համար, ովքեր խախտում են կանոնները:

Վերջին տարիներին մի քանի քաղաքային պաշտոնյաներ դավաճանել են հանրությանը և վարկաբեկել իրենց պաշտոնը կոռուպցիոն արարքներով և պատժվել են օրենքով սահմանված կարգով: Քաղաքի ծառայողների և պաշտոնատար անձանց ճնշող մեծամասնությունը բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները և պահպանում են մեր էթիկայի կանոնները: Ցավոք, կան մարդիկ, ովքեր փորձում են չարաշահել իրենց իշխանությունը՝ հարստանալու կամ սեփական շահերը սպասարկելու համար:

Քաղաքի արդյունավետ կառավարումը պետք է լինի անթերի: Los Angeles-ի բնակիչները ապավինում են Քաղաքի էթիկայի հանձնաժողովին, որը պետք է կասեցնի այն խախտումները, որոնք խաթարում են հասարակության վստահությունը իշխանության նկատմամբ:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-ը Էթիկայի հանձնաժողովի պատմության մեջ էթիկայի բարեփոխման առաջին նշանակալի միջոցն է: Այն զգալիորեն մեծացնում է տուգանքները, որոնք Հանձնաժողովը կարող է կիրառել էթիկայի խախտումների համար, և Հանձնաժողովին տալիս է ավելի մեծ անկախություն:

Ի թիվս այլ բաների, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-ը թույլ կտա.

- Եռապատկել առկա տուգանքները նրանց համար, ովքեր խախտում են էթիկայի մասին օրենքները:
- Արգելել Քաղաքի հետ բիզնես վարողներին կամ Քաղաքի կողմից կատարվող միջոցառումների նկատմամբ ֆինանսական շահ ունեցողներին աշխատել էթիկայի հանձնաժողովում:
- Արգելել ընտրված պաշտոնյաներին Հանձնաժողովում նշանակել իրենց հարազատներին, նախընտրական քարոզչության խորհրդատուներին կամ նախընտրական քարոզչության խոշոր հովանավորներին:
- Պարտավորեցնել Քաղաքային խորհրդին 180 օրվա ընթացքում քննել Հանձնաժողովի բոլոր առաջարկությունները:
- Էթիկայի հանձնաժողովին տալ ավելի մեծ անկախություն՝ սահմանելով տարեկան նվազագույն բյուջե, որը Հանձնաժողովը վերահսկում է առանց խորհրդի հաստատման հատուկ ծախսերի մասով, և թույլ տալով Հանձնաժողովին վարձել իր սեփական իրավախորհրդատուին:

Ամրապնդել էթիկայի պահպանումը և վերականգնել վստահությունը Քաղաքի իշխանությունների նկատմամբ:

«ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵՔ ԿԱՆՈՆԱԴՐՈԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-Ի ՀԱՄԱՐ:

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-Ի ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, շրջան 2
City of Los Angeles

**ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՄ ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:**

## ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-Ի

Ավելի քան 30 տարի առաջ Los Angeles-ի բնակիչները քվեարկեցին Քաղաքի Էթիկայի հանձնաժողով ստեղծելու օգտին, որպեսզի ապահովեն, որ հանրային ծառայողներն իսկապես ծառայեն հանրությանը և ենթարկվեն քաղաքի էթիկայի կանոններին: Երեք տասնամյակի ընթացքում առաջին անգամ մենք այժմ հնարավորություն ունենք ուժեղացնելու Էթիկայի հանձնաժողովը: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-ն Էթիկայի հանձնաժողովին ավելի մեծ անկախություն կտա, կպաշտպանի նրան շահերի բախումից և կմեծացնի պատիժները նրանց համար, ովքեր խախտում են Քաղաքի էթիկայի կանոնները և չարաշահում հանրային վստահությունը:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-ն եռապատկում է էթիկայի խախտման համար նախատեսված տույժերը. այն Հանձնաժողովին տալիս է անկախ բյուջե, այնպես որ նա կարիք չի ունենա հույսը դնելու Քաղաքային խորհրդի վրա՝ բոլոր ծախսերը հաստատելու համար, և այն թույլ է տալիս Հանձնաժողովին վարձել իր փաստաբաններին՝ էթիկայի խախտումները հետաքննելու և Հանձնաժողովին խորհուրդ տալու համար:

Բարելավեք մեր կառավարումն՝ ուժեղացնելով Քաղաքի էթիկայի հանձնաժողովը:

Քվեարկեք «ԱՅՈ» Քաղաքապետարանի բարեփոխման համար: Քվեարկեք «ԱՅՈ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-ի համար:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER-Ի ՕԳՏԻՆ ՀԵՐՔՄԱՆ ՓԱՍՏԱՐԿԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, Շրջան 2
City of Los Angeles

NITHYA RAMAN
Խորհրդի անդամ, Շրջան 4
City of Los Angeles

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

Նոր դրույթները կամ լեզուն, որն ավելացվել է կանոնադրությանը կամ գոյություն ունեցող կանոնադրության բաժիններին, ցույց են տրված ընդգծված տառատեսակով. կանոնադրությունից կամ կանոնադրության գոյություն ունեցող բաժիններից ջնջված բառերը ցույց են տրվում ~~վրացծված~~ տառատեսակով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ER

Բաժին 1. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 700-ի Ենթաբաժին (b) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(b) **Նշանակում:** Հանձնաժողովի մեկական անդամ նշանակում են Քաղաքապետը, Քաղաքի դատախազը, Վերահսկողը, Խորհրդի ժամանակավոր նախագահը: Բոլոր նշանակումները ենթակա են հաստատման Խորհրդի ձայների մեծամասնությամբ: Նշանակող մարմինը չպետք է նշանակի իրենց ազգականին կամ որևէ այլ ընտրված Քաղաքի պաշտոնյայի, քարոզարշավի խորհրդատուի կամ խոշոր դոնորի ազգականին: Սույն դրույթի նպատակներով՝ ազգականը ներառում է ամուսին, տնային զուգընկեր, երեխա, ծնող, քույր, կամ եղբայր, կամ խնամի: Նախընտրական արշավի խորհրդատուն ներառում է այն անհատին, ով նախորդ 12 ամիսների ընթացքում փոխհատուցվող խորհրդատվություն կամ ծառայություններ է տրամադրել քաղաքական քարոզարշավին կամ հանձնաժողովին, որը վերահսկվում է Քաղաքի պաշտոնյայի կողմից. և հիմնական դոնորը ներառում է այն անհատին, ով նախորդ 12 ամիսների ընթացքում որակվել է որպես հիմնական դոնոր՝ համաձայն Քաղաքական բարեփոխումների օրենքի: Հանձնաժողովի նախագահը և փոխնախագահն ընտրվում են հանձնաժողովի կողմից և ծառայում են Բաժին 503 նշված պաշտոններով:

Բաժին 2. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 700-ի Ենթաբաժին (d) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(d) **Որակավորումներ:** Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է լինի Քաղաքի գրանցված ընտրող: Ո՛չ հանձնաժողովի անդամը, ո՛չ էլ դրա Գործադիր տնօրենը չպետք է մասնակցեն Քաղաքի որևէ պաշտոնի ընտրությանը կամ Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի Կրթական խորհրդի պաշտոնի ընտրությանը, որի վերաբերյալ հանձնաժողովը որոշում է կայացրել հանձնակատարի կամ Գործադիր տնօրենի պաշտոնավարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պաշտոնի համար ընտրությունները պետք է անցկացվեն հանձնակատարի կամ Գործադիր տնօրենի պաշտոնավարման ժամկետի ավարտից առնվազն երկու տարի հետո: ~~Իր~~ Իրենց պաշտոնավարման ընթացքում ո՛չ հանձնաժողովի անդամը, ո՛չ էլ Գործադիր տնօրենը չպետք է.

(1) զբաղեցնեն որևէ հանրային պաշտոն,

(2) մասնակցեն կամ նպաստեն Քաղաքի ընտրությունների քարոզարշավին,

(3) մասնակցեն կամ նպաստեն Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի Կրթական խորհուրդի անդամի ընտրությունների քարոզարշավին,

(3) մասնակցեն կամ նպաստեն Los Angeles-ի Միացյալ դպրոցական շրջանի Կրթական խորհուրդի անդամի նախընտրական քարոզարշավին, ով հավակնում է դառնալ Քաղաքի պաշտոնյա, ~~կամ~~

(5) աշխատանքի ընդունեն կամ աշխատեն որպես Los Angeles քաղաքում լոբբիստ գրանցվելու համար պահանջվող անձ,

(6) ունենան սեփականության իրավունք այն բիզնեսում (բացառությամբ հրապարակային առևտրով զբաղվող ընկերության բաժնետոմսերի), որը պայմանագիր է կնքում Քաղաքի հետ կամ հայեցողական թույլտվություն է հայցում նրանից կամ անձամբ պայմանագրով Քաղաքին մատուցել փոխհատուցվող ծառայություններ,

(7) տրամադրեն փոխհատուցվող խորհուրդներ և ծառայություններ քաղաքական քարոզարշավին կամ կոմիտեին, որը վերահսկվում է Քաղաքի պաշտոնյաների կողմից, կամ

(8) նպաստեն հանձնաժողովներին, որպեսզի անհատը որակավորվի որպես հիմնական դոնոր, ինչպես նախատեսված է Քաղաքական բարեփոխումների մասին օրենքով:

Բաժ. 3. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 700-ի Ենթաբաժիններ (e) և (f) փոփոխվել են հետևյալ խմբագրությամբ.

(e) **Պաշտոնազրկում:** Հանձնաժողովի անդամը կարող է հեռացվել պաշտոնից անդամին նշանակող մարմնի՝ ~~Քաղաքապետի կողմից~~, խորհրդի համաձայնությամբ՝ ձայների մեծամասնությամբ կամ խորհրդի ձայների երկու երրորդով՝ պարտականությունների էական անփութության, պաշտոնում կոպիտ վարքագծի, լիազորությունները և պարտականությունները կատարելու անկարողության կամ սույն հոդվածի խախտման համար՝ գրավոր ծանուցումից հետո այն հիմքերի մասին, որոնցով պահանջվում է հեռացում, և պատասխանելու հնարավորություն ստանալուց հետո:

(f) **Թափուր պաշտոններ:** Հանձնաժողովի թափուր պաշտոնը լրացնելու համար նշանակումներն արվում են 90~~30~~ օրվա ընթացքում միևնույն նշանակող մարմնի կողմից, որը նշանակել էր այդ պաշտոնի նախկին աշխատողին: Թափուր պաշտոնը լրացնելու նշանակումը լինում է այն անդամի չավարտված ժամկետի համար, որին փոխարինում է նոր նշանակված պաշտոնյան: Թափուր պաշտոնը կամ պաշտոնները չեն խաթարում մնացած անդամների՝ Հանձնաժողովի լիազորություններն իրականացնելու իրավունքը:

Բաժ. 4. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 701-ի Ենթաբաժիններ (a) և (b) փոփոխվել են հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 701. Գործադիր տնօրեն, Հանձնաժողովի աշխատակազմ և լիազորությունների պատվիրակում:**

(a) Հանձնաժողովը նշանակում է և լիազորված է պաշտոնից հեռացնել Գործադիր տնօրենին, ով պետք է գործի համաձայն հանձնաժողովի քաղաքականության և կանոնակարգերի և ըստ կիրառելի օրենքի: Գործադիր տնօրենը պաշտոնավարում է հանձնաժողովի ցանկությամբ, ենթակա չէ քաղաքացիական ծառայության դրույթներին և գույքային շահ չունի Գործադիր տնօրենի ~~պաշտոնում կամ նրա~~ աշխատանքում: Հանձնաժողովը սահմանում է աշխատավարձի տիրույթ Գործադիր տնօրենի համար՝ համապատասխան Քաղաքի այլ գլխավոր մենեջերների աշխատավարձի, նկատի առնելով նմանատիպ պարտականությունները, և ամեն տարի սահմանում կամ փոփոխում է Գործադիր տնօրենի աշխատավարձի չափն այս տիրույթի սահմաններում: ~~Գործադիր տնօրենի աշխատավարձը սահմանվում է խորհրդի կողմից, որը պետք է հաստատի Քաղաքապետը, և այն պետք է հիմնված լինի Վարչական և հետազոտական ծառայությունների գրասենյակի տնօրենի կողմից պաշտոնին վերապահված պարտականությունների և լիազորությունների վերանայումից և վերլուծությունից հետո ներկայացված առաջարկության վրա:~~ Գործադիր տնօրենը չի կարող տասը տարուց ավելի պաշտոնավարել այդ պաշտոնում:

(b) Գործադիր տնօրենը նշանակում և իրավասու է ազատել հանձնաժողովի աշխատակազմի անդամներին և սահմանել նրանց պարտականությունները: Հանձնաժողովի ~~ոչ գործավար~~ անձնակազմը ծառայում է Գործադիր տնօրենի ցանկությամբ, չի ենթարկվում քաղաքացիական ծառայության դրույթներին և չունի գույքային շահ իր աշխատանքի մեջ:

Բաժ. 5. Բաժին 703-ի վերնագիրը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

**Կանոններ, կանոնակարգեր և առաջարկներ**

Բաժ. 6. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 703-ի Ենթաբաժին (c) ավելացվել է հետևյալ խմբագրությամբ.

(c) Հանձնաժողովն իր իրավասության ներքո գտնվող քաղաքականության առաջարկը Խորհրդին փոխանցելուց հետո՝ 180 օրվա ընթացքում, խորհուրդը հրավիրում է առաջարկի հանրային լսում: Եթե Խորհուրդը 180-օրյա ժամկետում նիստ չի հրավիրում, ապա Քաղաքի գործավարն առաջարկը նշանակում է Քաղաքային խորհրդի հաջորդ հերթական նիստին:

Բաժ. 7. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 706-ի Ենթաբաժին (b) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(b) **Հավանական պատճառի բացահայտումներ, Վարչական հարկադրում:** Եթե հանձնաժողովի Գործադիր տնօրենը կամ Գործադիր տնօրենի կողմից նշանակված անձը որոշում է, որ հավանական պատճառ կա ենթադրելու, որ խախտվել է Կանոնադրության կամ Քաղաքի հրամանագրերի դրույթը, որը վերաբերում է քարոզարշավի ֆինանսավորմանը, լոբբիզգին, շահերի բախմանը կամ կառավարական էթիկային, Գործադիր տնօրենը կամ Գործադիր տնօրենի կողմից նշանակված անձն առաջացնում է վարչական հարկադրման մեղադրանքի հարուցում և առաջադրում: Գործադիր տնօրենը կամ Գործադիր տնօրենի կողմից նշանակված անձը ~~հանձնաժողովը~~ չի կատարում հավանական պատճառի հայտնաբերում, եթե Գործադիր տնօրենի կամ Գործադիր տնօրենի կողմից նշանակված անձի կողմից ենթադրյալ խախտման քննարկումից առնվազն 21 օր առաջ խախտում թույլ տված անձին ծանուցում է տրվել ենթադրյալ խախտման մասին գործընթացի միջոցով կամ պատվիրված փոստով՝ պահանջվող վերադարձի անդորրագրով, նրան տրամադրվում է ապացույցների ամփոփում և տեղեկացվում է իր իրավունքի մասին՝ անձամբ ներկա գտնվելու և ներկայացված լինելու փաստաբանի կողմից ցանկացած վարույթին, որն անցկացվում է քննելու, թե արդյոք կա հավանական պատճառ՝ ենթադրելու, որ անձը խախտում է կատարել: Ենթադրյալ խախտողին ծանուցումը համարվում է կատարված առաքման օրը, գրանցված փոստի անդորրագրի ստորագրման օրը, կամ, եթե գրանցված փոստի անդորրագիրը ստորագրված չէ, փոստային բաժանմունքի կողմից վերադարձման ամսաթվին: Հավանական պատճառները դիտարկելու նպատակով անցկացվող վարույթը մասնավոր է, քանի դեռ ենթադրյալ խախտողը հանձնաժողովին չի ներկայացրել վարույթը հրապարակային լինելու գրավոր դիմում:

Բաժ. 8. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 706-ի Ենթաբաժիններ (c) և (d) փոփոխվել են հետևյալ խմբագրությամբ.

(c) **Վարչական լսումներ, հրամաններ և տույժեր:** Մեղադրանք առաջադրելուց և ներկայացնելուց հետո հանձնաժողովը հրավիրում է հրապարակային ապացույցների լսում՝ պարզելու, թե արդյոք տեղի է ունեցել խախտում: Երբ հանձնաժողովը նիստին ներկայացված հիմնավոր ապացույցների հիման վրա որոշում է, որ տեղի է ունեցել խախտում, արձակում է հրաման, որը կարող է պահանջել խախտողից.

(1) դադարեցնել խախտումը,

(2) ներկայացնել օրենքով պահանջվող ցանկացած հաշվետվություն, հայտարարություն կամ այլ փաստաթուղթ կամ տեղեկատվություն, և/կամ

(3) վճարել դրամական տույժ Քաղաքի Գլխավոր հիմնադրամին մինչև ~~հինգ~~ տասնհինգ հազար դոլարի չափով ($15,000 ~~5,000~~) յուրաքանչյուր խախտման համար, որը տարեկան ճշգրտվում է՝ արտացոլելու Սպառողական գների ինդեքսի փոփոխությունները, կամ այն գումարի եռապատիկը, որը անձը չի ներկայացրել պատշաճ կերպով կամ ապօրինի ներդրված, ծախսված, տված կամ ստացված, որն ավելի մեծ է: Երբ հանձնաժողովը պարզում է, որ խախտում չի եղել, ապա հրապարակում է այդ մասին հայտարարություն:

(d) **Գործակալությունների միջև ուղղորդումներ:** Անկախ նրանից, թե Գործադիր տնօրենը կամ նրա կողմից նշանակված անը պաշտոնական որոշում կկայացնի հավանական պատճառի վերաբերյալ, գործը կարող է փոխանցվել մեկ այլ համապատասխան գործակալության՝ հարկադրման նպատակով:

Բաժ. 9. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 708-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 708. Իրավաբանական ծառայություններ:**

Քաղաքի դատախազը իրավաբանական ծառայություններ է մատուցում հանձնաժողովին, բացառությամբ այն բանի, որ, չնայած Բաժին 275-ին, հանձնաժողովը կարող է ունենալ իր իրավախորհրդատուն՝ հանձնաժողովին խորհրդատվություն տրամադրելու և և ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք հանձնաժողովը կարող է ուղղել, երբ անհրաժեշտ է սույն Բաժնում նկարագրված երկու հանգամանքներում: ~~Անկախ Բաժին 275-ից,~~ Առաջին, անկախ Քաղաքի դատախազը, հանձնաժողովը կարող է վարձել կամ պայմանագիր կնքել աշխատակազմի խորհրդատուի հետ՝ հանձնաժողովին խորհուրդներ տալու և այնպիսի գործողություններ ձեռնարկելու, որոնք հանձնաժողովը կարող է ուղղորդել այն հարցերի շուրջ, որոնք ուղղակիորեն կապված են Քաղաքի դատախազի, Քաղաքի դատախազի–գրասենյակի, կամ Քաղաքի դատախազի նախընտրական քարոզարշավի հետ: Երկրորդ, հանձնաժողովը կարող է պահպանել իր սեփական իրավաբանական խորհրդատուին իրավաբանական ծառայությունների համար՝ կատարելով Բաժին 706-ով նախատեսված հանձնաժողովի պարտականությունները կոնկրետ հետաքննության կամ հարկադրման նպատակով: Այս երկրորդ դեպքում հանձնաժողովը և Քաղաքի դատախազը հիմնում են իրավաբանական ընկերություններից կամ փաստաբաններից բաղկացած մի խումբ, որոնցից հանձնաժողովը կարող է ընտրել իրավաբանական խորհրդատու այս ծառայությունների համար:

Բաժ. 10. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 710-ի Ենթաբաժիններ (a), (b) և (c) փոփոխվել են հետևյալ խմբագրությամբ.

(a) Անկախ Բաժին 275-ից, երբ Քաղաքի դատախազը որոշում է, որ Քաղաքի դատախազի ~~նրա~~ գրասենյակը շահերի հնարավոր բախում ունի և որ գրասենյակը չպետք է հետաքննի կամ հետապնդի Կանոնադրության Քաղաքի հրամանագրերի կամ կանոնակարգերի, կամ քարոզարշավի ֆինանսավորման, լոբբինգի, շահերի բախման կամ կառավարական էթիկայի հետ կապված կանոնադրությունների հնարավոր խախտումները, Քաղաքի դատախազը տեղեկացնում է Քաղաքի էթիկայի հանձնաժողովին, որն իր բոլոր անդամների ձայների չորս հինգերորդով կարող է որոշել՝ ~~դիմել~~ հետաքննությունն իրականացնելու համար~~ հատուկ~~ դատախազ նշանակելու խնդրանքով: Հատուկ դատախազ չի նշանակվում, երբ նախաքննության արդյունքում պարզվում է, որ ենթադրյալ խախտումը պահանջում է միայն քաղաքացիական վնասի հատուցման կամ վարչական տույժի հայց:

(b) Հատուկ դատախազ ~~նշանակելու վերաբերյալ~~ հանձնաժողովի խնդրանքը ներկայացվում է հատուկ դատախազների ցուցակից ~~երեք պաշտոնաթող դատավորներից կազմված մշտական հանձնաժողովին,~~ որոնք ընտրվում են հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր կենտ տարվա սկզբին: ~~Երեք դատավորների կոլեգիան նշանակում է~~ հատուկ դատախազը, ~~որը~~ նշանակվելուց հետո իրավասու է ժողովրդի անունից քրեական և քաղաքացիական հայցեր հարուցել և հետապնդել:

(c) Յուրաքանչյուր ֆինանսական տարի Քաղաքի էթիկայի հանձնաժողովի բյուջեն կներառի ~~ներառվում է~~ հինգ հարյուր ~~երկու հարյուր հիսուն~~ հազար դոլար ($500,000~~250,000~~) գումար՝ սույն բաժնի համաձայն նշանակված ցանկացած հատուկ դատախազին աջակցելու համար: Այն դեպքում, երբ այս բոլոր միջոցները ծախսվել են կամ ամենայն հավանականությամբ կծախսվեն մինչև որևէ ֆինանսական տարվա ավարտ, հանձնաժողովը կարող է լրացուցիչ հատկացում~~խնդրել~~ խորհրդից ~~լրացուցիչ հատկացում խնդրելու համար:~~ Ոչ մի դեպքում հատուկ դատախազի համար

յուրացված կամ պայմանագրով նախատեսված գումարը չպետք է գերազանցի հինգ հարյուր երկու հարյուր հիսուն հազար դոլարը ($500,000 ~~250,000~~) որևէ ֆինանսական տարում առանց Խորհրդի հաստատման: Խորհուրդը ստանալուց հետո ունի 30 օր (բացառությամբ հանգստյան և տոն օրերի)՝ ընդունելու, մերժելու կամ փոփոխելու հանձնաժողովի կողմից հավելյալ միջոցների հայտը: Եթե Խորհուրդն այդ ժամկետում չգործի, ապա հարցումը համարվում է հաստատված: Քաղաքապետը որոշում է կայացնում Խորհրդի գործողության կամ անգործության վերաբերյալ, եթե հարցումը բավարարված է համարվում հինգօրյա ժամկետում (բացառությամբ հանգստյան և տոն օրերի): Եթե Քաղաքապետը վետո է դնում Խորհրդի արարքի վրա, ապա Խորհուրդը հինգ օր ունի (բացառությամբ հանգստյան և տոն օրերի)՝ ձայների երկու երրորդով վերացնելու վետոն:

Բաժ. 11. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 711-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 711. Հատկացումներ և ծախսեր:**

(a) Սկսած 2025-2026 ֆինանսական տարվա բյուջեից՝ Խորհուրդը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար հատկացնում է առնվազն յոթ միլիոն ($7,000,000) դոլար՝ հանձնաժողովի տարեկան գործառնական բյուջեի համար: Հատկացումների գումարը պետք է ճշգրտվի յուրաքանչյուր ֆինանսական տարի՝ հիմնվելով Քաղաքի նախորդ տարվա եկամուտների փոփոխության վրա: Այնուամենայնիվ, հանձնաժողովի տարեկան բյուջեի ճշգրտումը՝ հիմնված Քաղաքի նախորդ տարվա եկամուտների փոփոխության վրա, չի պահանջվում, եթե Խորհուրդը գտնում է, որ առկա են այնպիսի լուրջ հանգամանքներ, որոնք չպետք է ճշգրտումներ կատարվեն այդ ֆինանսական տարվա համար: ~~Խորհուրդը Հանձնաժողովի համար միջոցներ է հատկացնում յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվանից առնվազն մեկ տարի առաջ:~~

(b) Հանձնաժողովի ծախսերը չեն պահանջում Քաղաքի պաշտոնյաների կամ անձնակազմի նախնական հաստատումը, եթե ծախսերը գտնվում են Հանձնաժողովի բյուջեի շրջանակներում, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհուրդը չի պարզում անհրաժեշտ հանգամանքները: Հանձնաժողովը պետք է համապատասխանի Քաղաքի գործող պահանջներին, ընթացակարգերին և ծախսերին վերաբերող օրենքներին:

(c) Հանձնաժողովը չի ենթարկվում աշխատանքի ընդունելու սառեցման, երբ այն գործում է իր բյուջեի սահմաններում, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհուրդը պարզում է լուրջ հանգամանքներ:

Բաժ. 12. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1001-ի Ենթաբաժին (a)(13) փոփոխվել է՝ սահմանելով, որ Էթիկայի հանձնաժողովի բոլոր պաշտոններն ազատված են քաղաքացիական ծառայությունից և պետք է ընթարցվի հետևյալ կերպ.

(13) Քաղաքի էթիկայի հանձնաժողովի Գործադիր տնօրենը և բոլոր ~~ոչ գործավարական~~ աշխատակազմը:

Բաժ. 13. Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները բաժանելի են: Բացի դրանից ընտրողները հայտարարում են, որ նրանք անցած կլինեին այս Կանոնադրության փոփոխության բոլոր բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածները՝ առանց բաժնի, կետի, նախադասության, արտահայտության կամ հատվածի հակասահմանադրական կամ անվավեր համարվելու:

## FF LOS ANGELES-Ի ՀՐՇԵՋ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ, ՕՐԻՆԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ: ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ FF:

Արդյո՞ք Քաղաքի կանոնադրությունը պետք է փոփոխվի՝ թույլ տալով Ոստիկանության, Օդանավակայանի, Նավահանգիստների և Հանգստի և զբոսայգիների բաժիններում աշխատող օրինապահ մարմինների աշխատակիցներին անդամակցությունն ու ծառայությունը փոխանցել Los Angeles քաղաքի աշխատակիցների կենսաթոշակային համակարգից Los Angeles-ի հրշեջ ծառայության և ոստիկանության կենսաթոշակային ծրագրին, և պահանջելու քաղաքից վճարել հարակից ծախսերը, ներառյալ Օդանավակայանի և Ոստիկանության բաժնի որոշ անդամներին փոխհատուցել նախկինում կատարած փոխանցումները:

### ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ ԱՄՓՈՓՈՒՄ
### SHARON M. TSO, ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ

Los Angeles Քաղաքի կանոնադրությունը (Կանոնադրություն) նախատեսում է, որ Քաղաքի որոշ աշխատակիցներ, ովքեր խաղաղության երդվյալ պաշտոնյաներ են և խաղաղապահի պարտականություններ են կատարում Քաղաքի Ոստիկանության, Օդանավակայանների, Նավահանգիստների և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքներում, հանդիսանում են Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգի անդամներ (LACERS) (այսուհետ՝ LACERS խաղաղության պաշտոնյաներ): Կանոնադրության նախորդ փոփոխությունները թույլ են տվել խաղաղության երդվյալ աշխատակիցների իրավասու խմբերին LACERS-ից տեղափոխվել Los Angeles հրդեհային և ոստիկանության կենսաթոշակային ծրագիր (LAFPP): Քաղաքի մյուս խաղաղության երդվյալ աշխատակիցների ճնշող մեծամասնությունը LAFPP-ի անդամներ են: LAFPP-ի 6-րդ մակարդակը կենսաթոշակային ծրագիրն է LAFPP-ի իրավասու անդամների համար:

Այս օրենսդրական նախագիծը կփոփոխի Կանոնադրությունը՝ լիազորելով Քաղաքի խորհրդին ապահովելու գործընթաց, որով LACERS խաղաղության պաշտոնյաները, ովքեր ակտիվորեն աշխատում են 2025 թվականի հունվարի 12-ին, կարող են անցկացնել մեկանգամյա ընտրություն՝ LAFPP տեղափոխվելու համար: Սա ներառում է LACERS-ի խաղաղության պաշտոնյաներին, ովքեր նախկինում չեն ընտրել տեղափոխվել LAFPP՝ համաձայն Կանոնադրության նախորդ փոփոխությունների:

Այս օրենսդրական նախագիծը համապատասխանում է Քաղաքի և Los Angeles-ի Օդանավակայանի խաղաղության պաշտոնյաների ասոցիացիայի կողմից ներկայացված սակարկությունների ստորաբաժանումների միջև կնքված Համաձայնագրի նամակներին: Այս օրենսդրական նախագիծը նաև համահունչ է Քաղաքի գործադիր աշխատակիցների հետ հարաբերությունների կոմիտեի կողմից ձեռնարկված գործողություններին՝ ներառելու Քաղաքի Ոստիկանության և Նավահանգիստների բաժանմունքների երդվյալ աշխատակիցներին, ովքեր ներկայիս LACERS անդամներ են: Առաջարկվող օրենսդրական նախագիծը փոփոխում է Կանոնադրության XI հոդվածի 3-րդ մասի որոշ բաժիններ: Այս օրենսդրական նախագիծը նաև լիազորում է Քաղաքի խորհրդին ընդունել հրամանագիր և փոփոխել Los Angeles-ի Վարչական օրենսգրքում ամրագրված LACERS ծրագրի համապատասխան դրույթները:

Այս օրենսդրական նախագծի չորս հիմնական բաղադրիչներն են.

- Լիազորել Քաղաքի խորհրդին ապահովելու գործընթաց, որով LACERS-ի խաղաղության պաշտոնյաները, ովքեր ակտիվորեն աշխատում են 2025 թվականի հունվարի 12-ին, կարող են կատարել մեկանգամյա անշրջելի ընտրություններ՝ իրենց անդամությունը LACERS-ից LAFPP-ի 6-րդ մակարդակ տեղափոխելու համար, ներառյալ ծառայության բոլոր նախորդ տարիների և ներդրումների փոխանցումը LACERS-ից LAFPP-ի 6-րդ մակարդակ՝ անդամակցությունից հետո:
- Լիազորել Քաղաքի խորհրդին՝ ապահովելու գործընթաց, որով 6-րդ մակարդակի որոշ անդամներ կփոխանցեն Քաղաքի մնացած ծառայությունների և կենսաթոշակային վճարները LACERS-ից LAFPP-ին:
- Պահանջել LAFPP-ին վերադարձնել հարկերին համապատասխանող բոլոր գումարները, որոնք նախկինում կատարել են 6-րդ մակարդակի անդամները՝ գնելու իրենց Քաղաքի ծառայության կամ 6-րդ մակարդակի առողջության նպաստները՝ Los Angeles-ի վարչական օրենսգրքի համաձայն:
- Պահանջել Քաղաքից վճարել LACERS-ի խաղաղության պաշտոնյաների տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը LACERS-ից LAFPP 6-րդ մակարդակ, և փոխհատուցել LAFPP-ին 6-րդ մակարդակի անդամներին վերադարձված գումարների ամբողջ արժեքը՝ համաձայն սույն Կանոնադրության փոփոխության՝ համաձայն ընդունված ցանկացած հարակից հրամանագրի: Քաղաքի գլխավոր ֆոնդի, Օդանավակայանների, և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքները կհոգան բոլոր ծախսերը, որոնք կապված են կենսաթոշակային ծրագրի անդամության փոխանցման և նախնական ծառայության հետ:

Այս օրենսդրական նախագիծն ուժի մեջ կմտնի, եթե այն հաստատվի ընտրողների մեծամասնության կողմից:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ MATTHEW W. SZABO, ՎԱՐՉԱԿԱՆ ԳԾՈՎ ՔԱՂԱՔԻ ՊԱՇՏՈՆՅԱ

Այս օրենսդրական նախագիծը թույլ է տալիս Ոստիկանության, Օդանավակայանի, Նավահանգիստների և Հանգստի և զբոսայգիների բաժանմունքներում ներկայումս աշխատող մոտ 460 խաղաղապահներին և պարկապահներին կենսաթոշակային ծրագրին անդամակցությունն ու ծառայությունը փոխանցել Los Angeles-ի քաղաքի Աշխատողների կենսաթոշակային համակարգից (LACERS) Los Angeles-ի հրշեջ և ոստիկանական կենսաթոշակ (LAFPP): Այս օրենսդրական նախագիծը պահանջում է, որ Քաղաքը վճարի LAFPP-ի բոլոր մեկանգամյա և տարեկան ծախսերը, որոնք կապված են փոխանցումների հետ, ինչպես նաև այլ անդամների փոխհատուցման ծախսերը, ովքեր գնել են Քաղաքի ծառայությունը նախնական ընտրովի փոխանցումով: Մոտավոր մեկանգամյա արժեքը կազմում է $109,500,000, ներառյալ $106,000,000 փոխանցման ծախսերը և $3,500,000 փոխհատուցման համար: Գնահատված տարեկան արժեքը կազմում է $6,300,000 տարեկան ճշգրտված աշխատավարձի փոփոխությունների համամասնությամբ:

Քաղաքի գլխավոր հիմնադրամը, Օդանավակայանի եկամուտների հիմնադրամը և Նավահանգիստների եկամուտների հիմնադրամը կվճարեն բոլոր ծախսերը իրենց համապատասխան տուժած անդամների համար: Գլխավոր հիմնադրամը կվճարի մոտավորապես $23,000,000 միանվագ վճարման համար և տարեկան $1,000,000՝ տարեկան ճշգրտված աշխատավարձի փոփոխությունների համամասնությամբ:

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ FF-Ի

### «ԱՅՈ» ՔՎԵԱՐԿԵՔ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ FF-Ի ՀԱՄԱՐ:

FF օրենսդրական նախագիծը պարզ միջոց է, որը Քաղաքում աշխատող բոլոր իրավապահ մարմինների աշխատակիցներին հնարավորություն կտա ստանալ նույն կենսաթոշակային ապահովության պլանը՝ անկախ նրանից, թե որ բաժանմունքում են նրանք աշխատում: Այս բոլոր իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է բավարարեն վերապատրաստման և լիցենզավորման նույն պահանջները, կատարեն նմանատիպ գործառույթներ և բախվեն նմանատիպ ռիսկերի: Նրանք պետք է ունենան նույն նպաստները ստանալու իրավունք:

Ներկայումս իրավապահ մարմինների աշխատակիցները, ովքեր աշխատում են Los Angeles-ի Ոստիկանության բաժանմունքում (LAPD), ընդգրկված են LA-ի Հրշեջ ծառայության և ոստիկանության կենսաթոշակային պլանում (LAFPP), ինչպես նաև Նավահանգստի ոստիկանության (2004 թվականից) և Օդանավակայանի ոստիկանության (2018 թվականից) նոր աշխատակիցները: Այնուամենայնիվ, որոշ իրավապահ մարմինների աշխատակիցներ, որոնք աշխատում են Օդանավակայանի, Նավահանգիստի, Հանգստի և զբոսայգիների բաժանմունքներում և LAPD-ում, ապահովագրվում են LA-ի Քաղաքացիական ծառայողների կենսաթոշակային համակարգի (LACERS) կողմից: Իրավապահ մարմինների որոշ, բայց ոչ բոլոր աշխատակիցներ, որոնք ապահովագրվում են LACERS-ի կողմից, ստանում են հանրային անվտանգության ոլորտի բարձր կենսաթոշակ: Սա վերջին 20 տարիների ընթացքում պետական օրենսդրության և քաղաքային կանոնադրության տարբեր փոփոխությունների արդյունք է:

Տարբեր կենսաթոշակային պլանների և որոշ իրավապահ մարմինների աշխատակիցների նպաստների այս խառնաշփոթը խնդիրներ է ստեղծում Քաղաքի համար: FF-ի օրենսդրական նախագիծը կվերացնի Քաղաքի իրավապահ մարմինների միջև փոխադրումների խոչընդոտներն՝ ապահովելով, որ բարձր որակավորում ունեցող անձնակազմը կարողանա պաշտոններ զբաղեցնել այլ բաժանմունքներում: Այն նաև կթեթևացնի Քաղաքի վարչական բեռը՝ պարզեցնելով կենսաթոշակային կատեգորիաները, որոնք տարածվում են նույնանման հաստիքների վրա: Նավահանգստի և Օդանավակայանի ոստիկանության աշխատակիցները ներդրում ունեն այս փոփոխության ծախսերում՝ ֆինանսական հետևանքները նվազեցնելու համար:

FF օրենսդրական նախագիծը խելամիտ և արդյունավետ քաղաքականություն է, որը բարձրացնում է ձեր հանրային անվտանգությունը և ձեր կառավարության արդյունավետությունը: Այն արժանի է ձեր աջակցությանը:

**Այս էջում տպագրված փաստարկները հեղինակների կարծիքներն են, և դրանց ճշմարտացիությունը չի ստուգվում Քաղաքի որևէ գործակալության կողմից:**

## ՓԱՍՏԱՐԿ ՀՕԳՈՒՏ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ FF-Ի ՍՏՈՐԱԳՐՈՂ ԱՆՁԻՆՔ

BOB BLUMENFIELD
Խորհրդի անդամ, City of Los Angeles

JOHN S. LEE
Խորհրդի անդամ, City of Los Angeles

PAUL KREKORIAN
Խորհրդի անդամ, City of Los Angeles

MARSHALL E. MCCLAIN
Նախագահ
Los Angeles Airport Peace Officers Assn.

KAREN BASS
Քաղաքապետ, City of Los Angeles

TRACI PARK
Խորհրդի կին անդամ, City of Los Angeles

ANTONIO VILLARAIGOSA
Նախկին քաղաքապետ, City of Los Angeles

JOE LOSORELLI
Այգիների գլխավոր պահապան, Los Angeles

**ԱՅՍ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՄ ՈՉ ՄԻ ՓԱՍՏԱՐԿ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ:**

Նոր դրույթները կամ լեզուն, որն ավելացվել է կանոնադրությանը կամ գոյություն ունեցող կանոնադրության բաժիններին, ցույց են տրված ընդգծված տառատեսակով. կանոնադրությունից կամ կանոնադրության գոյություն ունեցող բաժիններից ջնջված բառերը ցույց են տրվում ~~վրացծված~~ տառատեսակով:

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ FF

Բաժին 1. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1202-ի Ենթաբաժին (e) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(e) **Բաժանմունքի անդամ.** անձ, ով Հրշեջ բաժանմունքի երդվյալ անդամ կամ Ոստիկանության բաժանմունքի երդվյալ անդամ է, ինչպես այդ եզրույթները սահմանված են յուրաքանչյուր մակարդակի համար: Այս եզրույթը չի ներառում այն անձին, ով Ոստիկանության բաժանմունքի երդվյալ անդամ է, ով իրավասու էր ընտրություն կատարել՝ լիազորված Կանոնադրության Բաժին 1703-ով կամ 1709-ով , սակայն մնացել էր Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգի անդամ: Այս եզրույթը ներառում է նաև այն անձին, ով Նավահանգստի բաժանմունքի երդվյալ անդամ է, ով համապատասխանում է Ծրագրի ցանկացած մակարդակի դրույթներին համապատասխան Ծրագրին անդամակցելու համար, սակայն չի ներառում Նավահանգստի բաժանմունքի որևէ երդվյալ աշխատողի, ով նշանակվել էր մինչև 2006թ. հունվարի 8-ը և իրավասու էր կատարել ընտրություն, որը լիազորված էր Կանոնադրության Բաժին 1709-ով , սակայն մնացել էր Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգի անդամ: Ի լրումն, այս եզրույթը ներառում է այն անձին, ով Օդանավակայանների բաժանմունքի երդվյալ անդամ է, ով համապատասխանում է Ծրագրի ցանկացած մակարդակի դրույթներին համապատասխան Ծրագրին անդամակցելու համար, սակայն չի ներառում Օդանավակայանների–բաժանմունքի որևէ երդվյալ աշխատողի, ով նշանակվել էր մինչև 2018թ. հունվարի 7-ը և իրավասու էր կատարել ընտրություն, որը լիազորված էր Կանոնադրության Բաժին 1704-ով կամ 1709-ով, սակայն մնացել էր Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգի անդամ: Վերջապես, այս եզրույթը ներառում է այն անձին, ով Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի երդվյալ անդամ է, ով համապատասխանում է Կանոնադրության Բաժին 1709-ին համապատասխան Ծրագրին անդամակցելուն, սակայն այն չի ներառում այն անձին, ով Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի երդվյալ անդամ է, ով իրավասու էր կատարել ընտրություն, որը լիազորված էր Կանոնադրության բաժին 1709-ով, սակայն մնացել էր Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգի անդամ:

Բաժ. 2. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1700-ը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 1700. Անդամակցություն մակարդակ 6-ում:**

(a) **Նշանակված պետ:** Ոստիկանության պետ, Հրշեջ ծառայության պետ կամ Նավահանգստի ղեկավար (Պետ), ով նշանակվել է այդ պաշտոնում 2011թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո, և Օդանավակայանի ոստիկանության պետ, ով նշանակվել է այդ պաշտոնում 2018թ. հունվարի 7-ին կամ դրանից հետո, և ով ոչ Ծրագրի անդամ է, ոչ էլ թոշակի անցած Ծրագրի անդամ նշանակման ժամանակ, դառնում է մակարդակ 6-ի Ծրագրի անդամ նշանակումից հետո, եթե նշանակման հաջորդ յոթ օրացուցային օրվա ընթացքում, նա գրավոր չի ներկայացնում դուրս գալու ընտրություն Հրշեջ թիմին և Ոստիկանության բաժանմունքին, ընտրելով դառնալ Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգի (LACERS) անդամ՝ մակարդակ 6-ի անդամակցության փոխարեն: Այն Պետը, որը նշանավկել է այդ պաշտոնում 2011թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո և արդեն բաժանմունքի անդամ է իր նշանակման օրը, շարունակում է լինել անդամ այն մակարդակին, որին պատկանել է որպես Պետ իր նշանակումից առաջ: Թոշակի անցած Ծրագրի անդամ, ով նշանակվել է Պետի պաշտոնում 2011թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո, դառնում է LACERS-ի անդամ նշանակման ժամանակ, այլ ոչ թե մակարդակ 6-ի Ծրագրի անդամ, և շարունակում է ստանալ բոլոր նպաստները, որոնց իրավասու է որպես թոշակի անցած Ծրագրի անդամ

և դաշնային հարկային օրենքներով թույլատրված կարգով, որոնք կարգավորում են ծառայության ընթացքում բաշխումները, բայց չի ստանում Ծրագրից նպաստների որևէ լրացուցիչ իրավունք՝ որպես պետ աշխատելով պայմանավորված: Զբոսայգու գլխավոր տեսուչը, ով արդեն Ծրագրի անդամ է իր նշանակման օրը, շարունակում է լինել այն մակարդակի անդամ, որին նա պատկանում էր նախքան Գլխավոր տեսուչ նշանակվելը, սակայն Զբոսայգու գլխավոր տեսուչը, ով Ծրագրի անդամ չէ նշանակման պահին, դառնում է կամ շարունակում է լինել LACERS-ի անդամ: Զբոսայգու գլխավոր տեսուչը, ով նշանակման պահին թոշակի անցած Ծրագրի անդամ է, դառնում է LACERS-ի անդամ և շարունակում է ստանալ բոլոր նպաստները, որոնց իրավասու է որպես թոշակի անցած Ծրագրի անդամ և դաշնային հարկային օրենքներով թույլատրված կարգով, որոնք կարգավորում են ծառայության ընթացքում բաշխումները, բայց չի ստանում Ծրագրից նպաստների որևէ լրացուցիչ իրավունք՝ որպես Զբոսայգու գլխավոր տեսուչ աշխատելով պայմանավորված:

(b) **Նշանակված անդամներ:** Յուրաքանչյուր անձ, բացառությամբ Պետի, ով նշանակվում է որպես Բաժանմունքի անդամ 2011թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո, դառնում է մակարդակ 6-ի Ծրագրի անդամ՝ (1) այդ անձի կողմից Ուսումնական կամ Հրշեջ ակադեմիաներում կամ որպես հրշեջ կամ ուսումնական հիմնական ուսուցում տրամադրող համարժեք հաստատությունում վերապատրաստումն ավարտելուն պես, և որպես այդպիսին պահպանվում է Los Angeles քաղաքի քաղաքապետարանի կողմից, կամ (2) Նավահանգստի բաժանմունքի կողմից պահանջվող ակադեմիական վերապատրաստումն ավարտելուն պես: Մակարդակ 6-ի Ծրագրի անդամ դառնալուց հետո անդամը կարող է ընտրել Ծառայության տարիների հաշվանցում ձեռք բերել նման վերապատրաստման ժամանակահատվածի համար՝ Վարչության կողմից ընդունված կանոններին համապատասխան:

(c) **Անձինք, ովքեր չեն դառնում մակարդակ 6-ի Ծրագրի անդամներ:** Անկախ սույն բաժնի ենթաբաժիններ (b), (f), (g), և (h) դրույթներից.

(1) Անձը, ով մեկ այլ մակարդակի Ծրագրի անդամ է և, ով առանց ծառայության ընդմիջման, նշանակվում է այլ պաշտոնում, որն այլ կերպ իրեն որակավորում է մակարդակ 6-ի անդամակցության համար, այս նոր նշանակմամբ պայմանավորված չի դառնա մակարդակ 6-ի անդամ, բայց շարունակում է լինել այն մակարդակի անդամ, որին նա պատկանել է մինչև իր նոր նշանակումը:

(2) Նավահանգստի բաժանմունքում մինչև 2006թ. հունվարի 8-ը երդվյալ պաշտոնում նշանակված անձը, ով չի ընտրել տեղափոխվել մակարդակ 5 կամ մակարդակ 6 և մնացել է LACERS-ի անդամ, եթե հետագայում նշանակվել է առանց Նավահանգստի բաժանմունքի ծառայության մեջ ընդմիջման Նավահանգստի բաժանմունքի այլ երդվյալ պաշտոնում, որն այլ կերպ կորակավորեր նրան մակարդակ 6-ին անդամակցելու համար, նշանակվելուց հետո չի դառնում մակարդակ 6-ի անդամ, այլ մնում է LACERS-ի անդամ:

(3) Ծրագրի ցանկացած անդամ, ով թոշակի է անցել այլ մակարդակից հաշմանդամության կենսաթոշակով և հետագայում վերականգնվել է որպես Բաժանմունքի անդամ, չի դառնում մակարդակ 6-ի անդամ, այլ վերադառնում է այն մակարդակի անդամակցությանը, որտեղից նա անցել է թոշակի:

(4) Ծրագրի ցանկացած անդամ, ով թոշակի է անցել այլ մակարդակից ծառայողական կենսաթոշակով և հետագայում վերադարձել է որպես Բաժանմունքի անդամ, չի դառնում մակարդակ 6-ի անդամ, այլ վերադառնում է այն մակարդակի անդամակցությանը, որտեղից նա անցել է թոշակի:

(5) Օդանավակայանների բաժանմունքում ~~Բաժանմունքում~~ կամ Հրշեջ բաժանմունքում 2018թ. հունվարի 7-ին կամ դրանից հետո երդվյալ պաշտոնում նշանակված անձը, ով չի ընտրել տեղափոխվել մակարդակ

6 և մնացել է LACERS-ի անդամ, եթե հետագայում նշանակվել է առանց Օդանավակայանների բաժանմունքի ծառայության մեջ ընդմիջման Օդանավակայանների բաժանմունքի երդվյալ պաշտոնում կամ Հրշեջ բաժանմունքի երդվյալ պաշտոնում, որն այլ կերպ կորակավորեր նրան մակարդակ 6-ին անդամակցելու համար, նշանակվելուց հետո չի դառնում մակարդակ 6-ի անդամ, այլ մնում է LACERS-ի անդամ:

(6) Հանգստի և զբոսայգիների բաժանմունքում երդվյալ պաշտոնի նշանակված անձ, ով չի ընտրել տեղափոխվել մակարդակ 6 և մնացել է LACERS-ի անդամ:

(7) Հանգստի և զբոսայգիների բաժանմունքում 2025թ. հունվարի 12-ից հետո երդվյալ պաշտոնի նշանակված անձ:

(d) **Նախկին անդամներ:** Ցանկացած մակարդակի ցանկացած նախկին անդամ, ով դադարել է անդամ լինել պաշտոնանկության կամ աշխատանքից ազատվելու հետևանքով, և ով հետագայում վերանշանակվել է որպես Բաժանմունքի անդամ 2011թ. հուլիսի 1-ին կամ դրանից հետո, դառնում է մակարդակ 6-ի անդամ: Այն դեպքում, երբ այդ անձը չի ստացել իր նախորդ ծառայության համար վճարումների վերադարձը, այս մակարդակ 6-ում պարունակվող «Ծառայության տարիներ» սահմանումը որոշիչ է այդ անձի ծառայության հաշվանցում ստանալու իրավունքի մասով, և այդ անձին հարկավոր չէ վերադարձնել վճարումները նման նախկին ծառայության հաշվին: Այն դեպքում, երբ անդամն իրավունք չուներ վերադարձնելու իր նախկին մակարդակի վճարումները, նա իրավունք չունի վերադարձնել նախկին մակարդակի դրույթների համաձայն իր կողմից նախկինում կատարված վճարումները՝ հետագայում Ծրագրին անդամակցությունը դադարեցնելու դեպքում: Այն դեպքում, երբ այդ անձը ստացել է իր վճարումների վերադարձն իր անդամակցության դադարեցման արդյունքում, այդ անձի Ծառայության տարիների հաշվանցում ստանալու իրավունքը նախկին ծառայության ժամկետի համար պայմանավորված կլինի նրանով, որ նա կընտրի վերադարձնել և կվճարի Հրշեջ և Ոստիկանության կենսաթոշակային ծրագրին նախկինում վերադարձված վճարումների գումարը, դրանց վրա տոկոսները հաշվարկված որպես տոկոսներ, որոնք կվաստակվեին նման դադարեցման օրվանից մինչև Ծրագրի անդամ ծառայության մեջ մտնելու ամսաթիվը՝ համաձայն Վարչության կողմից ընդունված կանոնների: Այն դեպքում, երբ այդ անդամը չի ընտրում վերադարձնել, «Ծառայության տարիներ» եզրույթը, ինչպես այլուր օգտագործվում է այս մակարդակ 6-ում, չի ներառում որևէ ժամանակաշրջան մինչև նրա վերանշանակումը, անկախ 1702(գ)(r) և (դ)(s) Բաժնում պարունակվող սահմանումների:

(e) **Մակարդակ 6 տեղափոխումներ թույլատրելու Խորհրդի իրավասությունը:** Խորհուրդը համաձայն հրամանագրի կարող է լիազորել այլ մակարդակների Ծրագրի անդամներին կամավոր կերպով տեղափոխվել մակարդակ 6, պայմանով, որ այդ տեղափոխումները ակտուարական մասով չեզոք կլինեն Ծրագրի ծախսերի համար: Սույն ենթաբաժնի համաձայն ընդունված հրամանագրերն ընդունվում են նույն ձևով, ինչ նախատեսված է սույն Կանոնադրության 1618(b) Բաժնով, սակայն գրանցված ակտուարը գրավոր տեղեկացնում է Քաղաքային խորհրդին առաջարկվող փոփոխությունների արժեքի վերաբերյալ:

(f) **Օդանավակայանների բաժանմունքի անդամներ:** Ի լրումն սույն բաժնի ենթաբաժնում (b) նկարագրված Բաժանմունքի անդամներին՝ մակարդակ 6-ին անդամակցելու համար որակավորում են ստորև բերված անձինք.

(1) **2018թ. հունվարի 7-ին կամ դրանից հետո նշանակված անձինք:** Յուրաքանչյուր անձ, որը նշանակվել է 2018թ. հունվարի 7-ին կամ դրանից հետո, որպես Օդանավակայանների բաժանմունքի ~~Բաժանմունքի~~ անդամ, ինչպես սահմանված է Բաժին 1702(d)-ում, դառնում է մակարդակ 6-ի Ծրագրի անդամ՝ այդ անձի կողմից Օդանավակայանների բաժանմունքի ~~Բաժանմունքի~~ կողմից պահանջվող ակադեմիայի վերապատրաստումն ավարտելուց հետո: Մակարդակ 6-ի Ծրագրի անդամ դառնալուց հետո անդամը կարող է ընտրել ակադեմիայի վերապատրաստման ժամանակահատվածի համար Ծառայության տարիների հաշվանցում ձեռք

բերել՝ համաձայն վարչության կողմից ընդունված կանոնների, պայմանով, որ միայն ակադեմիայի վերապատրաստման ժամանակահատվածը, որի ընթացքում անձը եղել է Կես դրույքով, սեզոնային և ժամանակավոր աշխատողների համար Կենսաթոշակային խնայողությունների ծրագրի անդամ, ենթակա է ձեռքբերման: Օդանավակայանի ոստիկանության պետը, ով նշանակվել է 2018թ. հունվարի 7-ին կամ դրանից հետո, կարող է նշանակման պահին անդառնալիորեն գրավոր ընտրել չդառնալ մակարդակ 6-ի անդամ, պայմանով, որ նա բավարարում է Բաժին 1700(a)-ով սահմանված նման ընտրությունների իրավասության պահանջները:

(2) **2018թ. հունվարի 7-ից առաջ նշանակված անձինք:** Մինչև 2018թ. հունվարի 7-ը նշանակված անձը որպես Օդանավակայանների բաժանմունքի ~~Բաժանմունքի~~ անդամ, Բաժին 1702(d)-ում սահմանված կարգով, և ով այդ օրը աշխատանքի է ընդունվել որպես Օդանավակայանների բաժանմունքի անդամ ~~Բաժանմունքի~~, Բաժին 1702(d)-ում սահմանված կարգով, կարող է կատարել գրավոր անդառնալի ընտրություն դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ LACERS-ին անդամակցելու փոխարեն՝ ստորև նշված ընդհանուր դրույթներով և պայմաններով, և Քաղաքային խորհրդի կողմից սույն դրույթն իրականացնելու համար ընդունված ցանկացած հրամանագրի մեջ, պայմանով, որ ոչ մի անձ չի դառնա մակարդակ 6-ի Ծրագրի անդամ, քանի դեռ նա չի ավարտել ակադեմիայի վերապատրաստումը, որը պահանջվում է Օդանավակայանների բաժանմունքի ~~Բաժանմունքի~~ կողմից: Անձը, ով չի ներկայացնում ընտրության դիմում ստորև նշված ժամկետում, շարունակում է մնալ որպես LACERS-ի անդամ և մնում է LACERS-ի անդամ, եթե հետագայում առանց Օդանավակայանների բաժանմունքի ~~Բաժանմունքի~~ ծառայության մեջ ընդմիջման նշանակվի Օդանավակայանների բաժանմունքի ~~Բաժանմունքի~~ երդվյալ պաշտոնում կամ Հրշեջ բաժանմունքի երդվյալ պաշտոնում, որը հակառակ դեպքում կպահանջի նրանից դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ:

(g) **Նավահանգստի անդամներ և Հանրային անվտանգության ոստիկանության բաժանմունքի նախկին գրասենյակի անդամներ:** Ի լրումն սույն բաժնի Ենթաբաժնում (b)-ում նկարագրված բաժանմունքի անդամների՝ անձինք, ովքեր նավահանգստի բաժանմունքի երդվյալ աշխատակիցներ են, և անձինք, ովքեր դարձել են ոստիկանության երդվյալ աշխատակիցներ Հանրային անվտանգության գրասենյակում իրենց նախկինում շարունակական աշխատանքի արդյունքում, կարող են կատարել գրավոր անդառնալի ընտրություն դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ՝ LACERS-ին անդամակցելու փոխարեն՝ Քաղաքային խորհրդի կողմից սույն դրույթն իրականացնելու համար ընդունված ցանկացած հրամանագրի համապատասխան: Անձը, ով չի ներկայացնում ընտրության դիմում հրամանագրում նշված ժամկետում, շարունակում է մնալ որպես LACERS-ի անդամ և մնում է LACERS-ի անդամ, եթե հետագայում առանց Բաժանմունքի ծառայության մեջ ընդմիջման նշանակվի մեկ այլ երդվյալ պաշտոնում, որը հակառակ դեպքում կպահանջի նրանից դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ:

(h) **Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի անդամներ:** Ի լրումն սույն բաժնի Ենթաբաժնում (b)-ում նկարագրված Բաժանմունքի անդամների՝ անձինք, ովքեր Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի երդվյալ աշխատակիցներ են, կարող են կատարել գրավոր անդառնալի ընտրություն դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ՝ LACERS-ին անդամակցելու փոխարեն՝ Քաղաքային խորհրդի կողմից սույն դրույթն իրականացնելու համար ընդունված ցանկացած հրամանագրի համապատասխան: Անձը, ով չի ներկայացնում ընտրության դիմում հրամանագրում նշված ժամկետում, շարունակում է մնալ որպես LACERS-ի անդամ և մնում է LACERS-ի անդամ, եթե հետագայում առանց Բաժանմունքի ծառայության մեջ ընդմիջման նշանակվի մեկ այլ երդվյալ պաշտոնում, որը հակառակ դեպքում կպահանջի նրանից դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ:

(i) Բոլոր ընտրությունները՝ կատարված ~~սույն ստորաբաժին~~ Ենթաբաժիններ (f)(2), (g), կամ (h) համաձայն՝ պետք է բավարարի խորհրդի կողմից հրամանագրի պահանջները,

ինչպես լիազորված է բաժինները 1703, 1704, կամ 1709-ով, ընտրությունները կառավարելու համար՝ ներառյալ բոլոր համապատասխան պահանջները, որոնք կարգավորում են ծառայությունների գնումները, վճարումները և ընտրությունների արժեքը:

(j) 1706 և 1708 Բաժինների նպատակներով՝ կապված մակարդակ 6-ի Հաշմանդամության կենսաթոշակների և մակարդակ 6-ի Կենսապահովման կենսաթոշակների հետ և 1212 Բաժնի նպատակներով՝ կապված Բաժանմունքի անդամի՝ Աշխատողի փոխհատուցման ստացման ուժի հետ, մակարդակ 6-ի Ծրագրի անդամը, ով տեղափոխվում է Ենթաբաժինների ~~հատվածի~~ (f)(2), (g), կամ (h) այս բաժնի, Բաժիններ 1703, 1704-ի կամ 1709-ի և հրամանագրերի ներքո՝ ընդունված խորհրդի կողմից, ինչպես թույլատրված է այդ բաժիններով~~1704~~, համարվում է Բաժանմունքի անդամ Բաժին 1202(e)-ով սահմանված կարգով, ամբողջ աշխատանքի ժամանակահատվածում, ինչի համար անդամը ստանում է ծառայության տարիների հաշվանցում՝ բաժիններ 1703, 1704 կամ 1709-ի և հրամանագրերի իհամաձայն՝ ընդունված խորհրդի կողմից, ինչպես թույլատրված է այդ բաժիններով ~~1704~~՝ անկախ նրանից, թե անձը իրականում մակարդակ 6-ի Ծրագրի անդամ չի եղել աշխատանքի ժամանակ: Սույն դրույթի մտադրությունն այն է, որ անձն աշխատանքի ժամանակ համարվի Բաժանմունքի անդամ այս բաժինների նպատակների համար, որպեսզի մակարդակ 6-ի դրույթների համաձայն տրված հաշմանդամության կամ կենսապահովման ցանկացած կենսաթոշակի չափը կրճատվի՝ Բաժին 1212-ով նախատեսված կարգով:

Բաժ. 3. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1702-ի Ենթաբաժիններ (d) և (q)-ը փոփոխվել են, նոր ենթաբաժին (e) է ավելացվել, և ենթաբաժիններ (e), (f), (g), (h), (i), (j), (k), (l), (m), (n), (o), (p), (q), (r), (s)-ը վերահամարակալվել են համապատասխանաբար ենթաբաժիններ (f), (g), (h), (i), (j), (k), (l), (m), (n), (o), (p), (q), (r), (s), (t)-ի՝ հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 1702. Սահմանումներ:**

Ի լրումն Հրշեջ և Ոստիկանության թոշակառության ծրագրի 3-րդ մասի ընդհանուր դրույթներում սահմանված բառերի և արտահայտությունների, և սույն մակարդակ 6-ի նպատակների համար հետևյալ բառերը կամ արտահայտություններն ունեն սույն բաժնում իրենց վերագրվող նշանակությունը, եթե այլ նշանակություն հստակ նշված չէ համատեքստում:

(a) **Հրշեջ բաժանմունքի անդամ:** Հրշեջ բաժանմունքի անդամ նշանակում է Հրշեջ պետ և անձ, ով պատշաճ կերպով և կանոնավոր կերպով նշանակվել է Հրշեջ բաժանմունքում՝ համաձայն քաղաքացիական ծառայության կանոնների և կանոնակարգերի կամ Կանոնադրության դրույթների, կամ երկուսի, որոնք կարգավորում են բնօրինակ կանոնավոր և մշտական նշանակումները, որոնք պահանջում են փորձաշրջաններ անցնելը, բայց ոչ սկզբնական արտակարգ կամ ժամանակավոր նշանակումները՝ Քաղաքի համար հրշեջի պարտականությունները կատարելու համար՝ անկախ նրանից, թե այդ անձն ինչ անվան ներքո կարող է նկարագրվել ցանկացած աշխատավարձի կամ բաժանմունքի հրամանագրում, որը վարձատրություն է տրամադրում բաժանմունքի անդամներին, բայց այդ անձը պետք է լինի բաժանմունքի անդամ միայն մինչև որ նրա կարգավիճակը դադարեցվի թոշակի անցնելու, պաշտոնանկ լինելու կամ աշխատանքից ազատվելու կամ որևէ այլ պատճառով:

(b) **Ոստիկանության բաժանմունքի անդամ:** Ոստիկանության բաժանմունքի անդամ նշանակում է Ոստիկանության պետ և անձ, ով պատշաճ կերպով և կանոնավոր կերպով նշանակվել է Ոստիկանության բաժանմունքում՝ համաձայն քաղաքացիական ծառայության կանոնների և կանոնակարգերի կամ Կանոնադրության դրույթների, կամ երկուսի, որոնք կարգավորում են բնօրինակ կանոնավոր և մշտական նշանակումները, որոնք պահանջում են փորձաշրջաններ անցնելը, բայց ոչ դրանում սկզբնական արտակարգ կամ ժամանակավոր նշանակումները, և երդվել է, ինչպես նախատեսված է օրենքով, Քաղաքի համար ոստիկանի պարտականությունները կատարել՝ անկախ նրանից, թե այդ անձն ինչ անվան ներքո կարող է նկարագրվել ցանկացած աշխատավարձի կամ բաժանմունքի հրամանագրում, որը վարձատրություն է տրամադրում բաժանմունքի անդամներին, բայց այդ անձը պետք է լինի բաժանմունքի անդամ միայն մինչև որ նրա կարգավիճակը դադարեցվի թոշակի անցնելու, հրաժարական տալու կամ աշխատանքից ազատվելու կամ որևէ այլ պատճառով:

(c) **Նավահանգստի բաժանմունքի անդամ:** Նավահանգստի բաժանմունքի անդամ նշանակում է Նավահանգստի ղեկավար և անձ, ով պատշաճ կերպով և կանոնավոր կերպով նշանակվել է՝ համաձայն քաղաքացիական ծառայության կանոնների և կանոնակարգերի կամ Կանոնադրության դրույթների, կամ երկուսի, որոնք կարգավորում են բնօրինակ կանոնավոր և մշտական նշանակումները, որոնք պահանջում են փորձաշրջաններ անցնելը, բայց ոչ դրանում սկզբնական արտակարգ կամ ժամանակավոր նշանակումները, և երդվել է, ինչպես նախատեսված է Քրեական օրենսգրքի 830.1 բաժնով, Նավահանգստի բաժանմունքի համար ոստիկանի պարտականությունները կատարել՝ անկախ նրանից, թե այդ անձն ինչ անվան ներքո կարող է նկարագրվել ցանկացած աշխատավարձի կամ բաժանմունքի հրամանագրում, որը վարձատրություն է տրամադրում բաժանմունքի անդամներին, բայց այդ անձը պետք է լինի բաժանմունքի անդամ միայն մինչև որ նրա կարգավիճակը դադարեցվի թոշակի անցնելու, հրաժարական տալու կամ աշխատանքից ազատվելու կամ որևէ այլ պատճառով:

(d) **Օդանավակայանների բաժանմունքի ~~Օդանավակայանի~~ անդամ:** ~~Օդանավակայանի~~ Օդանավակայանների բաժանմունքի անդամ նշանակում է Օդանավակայանի ոստիկանության պետ, Օդանավակայանի ոստիկանության պետի օգնական, Օդանավակայանի անվտանգության գլխավոր սպա, և անձ, ով պատշաճ կերպով և կանոնավոր կերպով նշանակվել է՝ համաձայն քաղաքացիական ծառայության կանոնների և կանոնակարգերի կամ Կանոնադրության դրույթների, կամ երկուսի, որոնք կարգավորում են բնօրինակ կանոնավոր և մշտական նշանակումները, որոնք պահանջում են փորձաշրջաններ անցնելը, բայց ոչ դրանում սկզբնական արտակարգ կամ ժամանակավոր նշանակումները, և երդվել է, ինչպես նախատեսված է Քրեական օրենսգրքի 830.1 բաժնով, ~~Օդանավակայանի~~ Օդանավակայանների բաժանմունքի համար ոստիկանի կամ հրշեջի պարտականությունները կատարել՝ անկախ նրանից, թե այդ անձն ինչ անվան ներքո կարող է նկարագրվել ցանկացած աշխատավարձի կամ բաժանմունքի հրամանագրում, որը վարձատրություն է տրամադրում բաժանմունքի անդամներին, բայց այդ անձը պետք է լինի բաժանմունքի անդամ միայն մինչև որ նրա կարգավիճակը դադարեցվի թոշակի անցնելու, հրաժարական տալու կամ աշխատանքից ազատվելու կամ որևէ այլ պատճառով:

(e) **Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի անդամ:** Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի անդամ նշանակում է Զբոսայգու գլխավոր տեսուչ և անձ, ով պատշաճ կերպով և կանոնավոր կերպով նշանակվել է՝ համաձայն քաղաքացիական ծառայության կանոնների և կանոնակարգերի կամ Կանոնադրության դրույթների, կամ երկուսի, որոնք կարգավորում են բնօրինակ կանոնավոր և մշտական նշանակումները, որոնք պահանջում են փորձաշրջաններ անցնելը, բայց ոչ դրանում սկզբնական արտակարգ կամ ժամանակավոր նշանակումները, և երդվել է, ինչպես նախատեսված է Քրեական օրենսգրքի 830.31 բաժնով, Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի համար ոստիկանի կամ հրշեջի պարտականությունները կատարել՝ անկախ նրանից, թե այդ անձն ինչ անվան ներքո կարող է նկարագրվել ցանկացած աշխատավարձի կամ բաժանմունքի հրամանագրում, որը վարձատրություն է տրամադրում բաժանմունքի անդամներին, բայց այդ անձը պետք է լինի բաժանմունքի անդամ միայն մինչև որ նրա կարգավիճակը դադարեցվի թոշակի անցնելու, հրաժարական տալու կամ աշխատանքից ազատվելու կամ որևէ այլ պատճառով:

~~(e)~~(f) **Մակարդակ 6-ի Ծրագրի անդամ:** Մակարդակ 6-ի Ծրագրի անդամ նշանակում է անձ, ով Բաժանմունքի անդամ է, և ում կենսաթոշակային իրավունքներն ու նպաստները կարգավորվում են սույն մակարդակ 6-ով: Մակարդակ 6-ի կարգավորող դրույթների նպատակների համար Ծրագրի անդամ եզրույթը սովորաբար վերաբերում է մակարդակ 6-ի Ծրագրի անդամին, բացառությամբ այն դեպքերի, երբ համատեքստը, որում օգտագործվում է եզրույթը, ցույց է տալիս այնպիսի օգտագործում, որը վերաբերում է կամ ներառում է այլ մակարդակների անդամներին: Մակարդակ 6-ի Ծրագրի անդամի կարգավիճակը սահմանափակված է Բաժին 1700-ի դրույթներով:

~~(f)~~(g) **Որակավորված վերապրած ամուսին:** Որակավորված վերապրած ամուսին նշանակում է անձ, ով ամուսնացած է եղել մակարդակ 6-ի Ծրագրի անդամի հետ.

(1) իր ծառայության հետ կապ չունեցող մահվան ամսաթվից առնվազն մեկ տարի առաջ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ լինելու ժամանակ, կամ

(2) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի ծառայության հետ կապված մահվան ամսաթվին, կամ

(3) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի ծառայողական կենսաթոշակով կամ ծառայության հետ կապ չունեցող հաշմանդամության կենսաթոշակով կենսաթոշակի անցնելն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն մեկ տարի առաջ, կամ

(4) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի թոշակի անցնելն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ծառայության հետ կապված հաշմանդամության կենսաթոշակով, կամ

(5) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի ծառայության հետ կապ չունեցող մահվան օրը՝ զինվորական արձակուրդում գտնվելու ժամանակ:

Ի լրումն՝ անդամի մահվան ամսաթվին այս անձը պետք է լինի կամ այդ անդամի տնային զուգընկերը (գրանցված նահանգում կամ ներկայացված Ծրագրում) կամ ամուսինը:

Այնքանով, որքանով պահանջվում է նահանգի օրենսդրությամբ, նույն սեռի երկու անձ, ում օրինական միությունը, որը տարբերվում է ամուսնությունից, վավերականորեն ձևավորվել է այլ իրավասության տարածքում և էապես համարժեք է պետական գրանցված ընտանեկան զուգընկերությանը, դիտարկվում է նույն կարգով, ինչ ամուսինները՝ սույն Ծրագրի նպատակներով: Այս նպատակների համար ամուսնության ամսաթվին ցանկացած հղում համարվում է այլ իրավասության օրինական միության ամսաթվին հղումը:

~~(g)~~(h) **Որակավորված վերապրած տնային զուգընկեր:** Որակավորված վերապրած տնային զուգընկեր նշանակում է անձ, ում մակարդակ 6-ի Ծրագրի անդամի հետ տնային զուգընկերության մասին հայտարարագիրը ներկայացվել է Հրշեջ և Ոստիկանության թոշակառության հանձնակատարների խորհուրդ, ինչպես նախատեսված է Los Angeles Վարչական օրենսգրքի 4.2204 Բաժնում, կամ ում մակարդակ 6-ի Ծրագրի անդամի հետ տնային զուգընկերությունը գրանցվել է նահանգում.

(1) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի ծառայության հետ կապ չունեցող մահվան ամսաթվից առնվազն մեկ տարի առաջ, կամ

(2) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի ծառայության հետ կապված մահվան ամսաթվին, կամ

(3) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի ծառայողական կենսաթոշակով կամ ծառայության հետ կապ չունեցող հաշմանդամության կենսաթոշակով կենսաթոշակի անցնելն ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն մեկ տարի առաջ, կամ

(4) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի թոշակի անցնելն ուժի մեջ մտնելու օրվանից՝ ծառայության հետ կապված հաշմանդամության կենսաթոշակով, կամ

(5) մակարդակ 6-ի Ծրագրի անդամի ծառայության հետ կապ չունեցող մահվան օրը՝ զինվորական արձակուրդում գտնվելու ժամանակ:

Ի լրումն՝ անդամի մահվան ամսաթվին այս անձը պետք է լինի կամ այդ անդամի տնային զուգընկերը (գրանցված նահանգում կամ ներկայացված Ծրագրում) կամ ամուսինը:

~~(h)~~(i) **Որակավորված վերապրած անձ:** Որակավորված վերապրած անձ նշանակում է անձ, ով կամ Որակավորված վերապրած ամուսին է, կամ Որակավորված ողջ մնացած տնային զուգընկեր:

~~(i)~~(j) **Երեխա:** Անչափահաս երեխա նշանակում է անձ, ով մակարդակ 6-ի Ծրագրի մահացած անդամի կամ մակարդակ 6-ի Ծրագրի թոշակի անցած անդամի երեխա է կամ որդեգրված երեխա, սակայն այդ անձն Անչափահաս երեխա է համարվում միայն այնքան ժամանակ, քանի դեռ չի լրացել այդ անձի 18 տարեկանը կամ նա չի ամուսնացել՝ կախված նրանից, թե որը կլինի ավելի վաղ: Անձը կարող է հետագայում ունենալ այս մակարդակի դրույթներին համապատասխան Անչափահաս երեխային տրամադրվող նպաստների իրավունք՝ մինչև նրա 22 տարեկանը լրանալը, եթե այդ անձն ընդգրկված է դպրոցում ուսման առկա կարգով, ինչպես սահմանված է Վարչության կողմից, բայց այդ անձի ամուսնությունը դադարեցնում է Անչափահաս երեխայի նպաստների իրավունքը:

~~(j)~~(k) **Խնամարկյալ երեխա:** Խնամարկյալ երեխա նշանակում է անձ, ով մակարդակ 6-ի Ծրագրի մահացած անդամի կամ մակարդակ 6-ի Ծրագրի մահացած թոշակի անցած անդամի երեխա է, ով 21 տարեկանից ցածր լինելով անաշխատունակ է դարձել՝ այս անդամի մահվանից առաջ կամ դրանից հետո, և ցանկացած պատճառով կամ հիմքով չի կարող ապրուստի միջոց վաստակել, սակայն այդ անձը համարվում է խնամարկյալ երեխա միայն այնքան ժամանակ, քանի դեռ նա չի դադարել ապրուստի միջոց վաստակելու համար անաշխատունակ լինել: Եթե անաշխատունակությունը դադարում է մինչև 22 տարեկանը, կիրառվում են ~~(h)~~(i) ենթաբաժնում նշված սահմանափակումները:

~~(k)~~(l) **Խնամարկյալ ծնող:** Խնամարկյալ ծնող նշանակում է անձ, ով մակարդակ 6-ի Ծրագրի մահացած անդամի կամ մակարդակ 6-ի Ծրագրի թոշակի անցած մահացած անդամի ծնող է, ում կամ ում համար այդ մահացած անդամն իր մահից անմիջապես առաջ առնվազն մեկ տարվա ընթացքում ներդնում էր այդ խնամարկյալ ծնողի ապրուստի ծախսերի կեսը կամ ավելին, և ով ի վիճակի չէ վճարել այդ ծախսերն առանց կենսաթոշակ ստանալու, սակայն այդ անձը համարվում է խնամարկյալ ծնող միայն այնքան ժամանակ, քանի դեռ նա չի կարող վճարել իր ապրուստի համար անհրաժեշտ ծախսերը:

~~(l)~~(m) **Ծառայության ստաժի վճար:** Ծառայության ստաժի վճար նշանակում է ցանկացած լրացուցիչ համախառն ամսական վճար, որը, կախված ծառայության ստաժից, տրամադրվում է հրամանագրով կամ Փոխըմբռնման հուշագրով:

~~(m)~~(n) **Հատուկ վճար:** Հատուկ վճար նշանակում է ցանկացած լրացուցիչ համախառն ամսական վճար, որը վտանգավոր պարտականություններից տարբերվող հատուկ պարտականություններ կատարելու հանձնարարությամբ պայմանավորված տրամադրվում է հրամանագրով կամ Փոխըմբռնման հուշագրով:

~~(n)~~(o) **Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճար:** Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճար նշանակում է ցանկացած հավելյալ համախառն ամսական վճար, որն ուղղաթիռի, երկանիվային մոտոցիկլետի կամ այլ վտանգավոր պարտականությունների կատարման հանձնարարությամբ պայմանավորված տրամադրվում է հրամանագրով կամ Փոխըմբռնման հուշագրով:

~~(o)~~(p) **Հանձնարարության վճար:** Հանձնարարության վճար նշանակում է ցանկացած լրացուցիչ համախառն ամսական վճար, որը պայմանավորված հատուկ պարտականություններ կամ վտանգավոր պարտականություններ կատարելու հանձնարարությամբ՝ կապված ավելի բարձր դասի, պաշտոնի, աստիճանի, ծածկագրի կամ այլ կոչման հետ, քան մակարդակ 6-ի Ծրագրի անդամի մշտական ամենացածր կոչումը, տրամադրվում է հրամանագրով կամ Փոխըմբռնման հուշագրով:

~~(p)~~(q) **Տարի:** Տարի նշանակում է 12 ամսվա ժամանակաշրջան, կամ Ծառայության տարիները որոշելու նպատակներով ոչ լրիվ տարիներ գումարման ժամանակ, նշանակում է 365 օր:

~~(q)~~(r) **Ծառայության տարիներ:** Ծառայության տարիներ նշանակում է և ներառում է միայն այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կամ որոնց համար Ծրագրի անդամը Հրշեջ բաժանմունքի անդամ էր, Ոստիկանության բաժանմունքի անդամ էր, Նավահանգստի բաժանմունքի անդամ էր ~~կամ Օդանավակայանի~~ Օդանավակայանների բաժանմունքի անդամ էր, կամ Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի անդամ էր, և մակարդակ 6-ի Ծրագրի անդամ դառնալուց առաջ կամ դրանից հետո և ենթակա լինելով մակարդակ 6-ի 1700 Բաժնում պարունակվող սահմանափակումներին.

(1) ստացել կամ ստանում է աշխատավարձ՝ ամբողջական կամ նվազեցված չափով.

(2) ստացել կամ ստանում է կամ ծառայության հետ կապված հաշմանդամության կենսաթոշակ կամ ոչ ծառայության հետ կապ չունեցող հաշմանդամության թոշակ Ծրագրից, եթե նա վերականգնվել էր կամ վերականգնվել է ակտիվ պարտականությունների կատարման ծառայությանը որպես Բաժանմունքի անդամ և կատարել կամ կատարում է իր պարտականությունները որպես այդպիսին կրկին թոշակի անցնելուց կամ սույն մակարդակ 6-ի համաձայն թոշակի անցնելուց առաջ առնվազն մեկ տարվա ընթացքում, որ տարին չի ներառում աշխատանքից ազատ ժամանակ որևէ վնասվածքի կամ հիվանդության պատճառով, որն առաջացել է կամ նպաստել է որևէ վնասվածքի կամ հիվանդության, որը նրան պատճառվել է կամ նա կրել է մինչև այդ վերականգնումը: Վերականգնված Ծրագրի անդամը վերականգնումից հետո՝ մեկ Ծառայության տարին ավարտելուց հետո, իրավասու է ստանալ նման հաշվանցում միայն այնքանով, որքանով վերականգնմանը հաջորդող ծառայության ստաժը համապատասխանում է հաշմանդամության կենսաթոշակի ստացման ժամանակաշրջանին, սակայն վերականգնման ծառայության երեք տարին ավարտելուց հետո վերականգնված Ծրագրի անդամը իրավասու է հաշվանցում ստանալ հաշմանդամության կենսաթոշակի ստացման ամբողջ ժամանակահատվածի համար. և պայմանով, որ այն ժամանակահատվածը, որի ընթացքում Ծրագրի անդամը ստացել է ծառայության հետ կապ չունեցող հաշմանդամության կենսաթոշակ, կարող է հաշվվել միայն նրա ծառայության տարիների մասով, եթե Ծրագրի անդամը վճարումներ է կատարում, հետևաբար, ինչպես նախատեսված է սույն մակարդակ 6-ի 1714 Բաժնով՝ Վարչության կողմից ընդունվելիք կանոնների համաձայն.

(3) իրավունք ունի կամ կունենա Քաղաքի ընդհանուր օրենքի կամ հրամանագրի որևէ դրույթի համաձայն ստանալ հաշվանցում թոշակի անցնելու մասով՝ զինծառայության կամ զինվորական արձակուրդի ժամանակահատվածների համար.

(4) ստացել կամ ստանում է Աշխատողների փոխհատուցման նպաստներ ժամանակավոր անաշխատունակության համար, ինչպես նախատեսված է ընդհանուր օրենքով՝ աշխատանքի արդյունքում և աշխատանքի ընթացքում առաջացած ցանկացած վնասվածքի կամ հիվանդության պատճառով, սակայն այդ ժամանակահատվածը պետք է դառնա Ծրագրի անդամի Ծառայության տարիների մի մասը միայն այն դեպքում, եթե Ծրագրի անդամը վճարումներ է կատարել Հրշեջ և Ոստիկանության կենսաթոշակային ծրագրում՝ Վարչության կանոններով սահմանված կարգով.

(5) իրավունք ունի կամ կունենա փոխհատուցում ստանալ պարտականությունների կատարման ժամանակ վնասվածքի համար՝ համաձայն Քաղաքի որևէ հրամանագրի կամ որևէ կիրառելի Փոխըմբռնման հուշագրի. և

(6) ծառայել է որպես Հրշեջ և Ոստիկանության թոշակառության համակարգի անդամ՝ մակարդակներ 2, 3, 4, կամ 5, առանց թոշակառության նպաստ ստանալու իրավասության:

Այն անձը, ով նախկինում եղել է որևէ մակարդակի Ծրագրի անդամ, ով դադարել է լինել այդպիսին իր հրաժարականի կամ աշխատանքից ազատվելու պատճառով, և ով հետագայում դառնում է մակարդակ 6-ի Ծրագրի անդամ, ստաժի հաշվանցման իրավունք ունի ծառայության տարիների համար՝ նախորդ անդամակցության ժամանակաշրջանի ընթացքում, միայն այն դեպքում, երբ նա սկզբում տոկոսներով վերագրանցել է իր կողմից նախկինում հետ կանչված ցանկացած վճարում՝ Վարչության կողմից սահմանված կարգով:

Մակարդակ 6-ի Ծրագրի անդամի որակավորված վերապրած անձը կարող է ավարտել Ծառայության տարիների ստաժի հաշվանցման ձեռք բերումը, որն ընտրվել է Ծրագրի անդամի կողմից:

(ք)(s) **Ծառայության ոչ լրիվ տարի:** Ծառայության ոչ լրիվ տարի նշանակում է ցանկացած ժամանակաշրջան, որը նշված է սույն բաժնի (թ)(q) ենթաբաժնում, որը 12 ամսից ավելի քիչ է: Ծառայության ցանկացած այդպիսի ոչ լրիվ տարի հաշվարկվում է Ծրագրի անդամի ծառայության վերջին լրիվ տարվա վերջից մինչև նրա կենսաթոշակի անցնելու ամսաթվից անմիջապես առաջ աշխատավարձային ժամանակաշրջանի վերջը և հաշվվում է որպես Ծրագրի անդամի ծառայության տարիների մաս թոշակի անցնելու համար՝ հետագայում նշանակվելիք տարիների ծառայության համար կենսաթոշակի ստացմամբ, կամ հետագայում նշանակվելիք կենսաթոշակի համար, որը տրվելու է իր Որակավորված վերապրած անձին, Անչափահաս երեխային կամ երեխաներին, Խնամարկյալ երեխային կամ երեխաներին կամ Խնամարկյալ ծնողին կամ ծնողներին, եթե նա հետագայում մահանա տարիների ծառայության համար թոշակի անցած լինելու ընթացքում, որը կնշանակվի հետագայում, կամ լինելով իրավասու ստանալ տարիների ծառայության համար կենսաթոշակ:

(թ)(t) **Վերջնական միջին աշխատավարձ:** Վերջնական միջին աշխատավարձ նշանակում է գումար, որը համարժեք է Ծրագրի անդամի կողմից նշանակված՝ ծառայության 24 հաջորդական ամիսների ընթացքում իրականում ստացված միջին ամսական աշխատավարձին: Նման նշանակման բացակայության դեպքում վերջին 24 հաջորդական ամիսները, որոնք նախորդում են այն ամսաթվին, երբ կենսաթոշակն ուժի մեջ կմտներ, օգտագործվում են որպես Վերջնական միջին աշխատավարձի հաշվարկման հիմք:

Վերջնական միջին աշխատավարձը որոշելու այն ժամանակաշրջանների համար, որոնց ընթացքում Ծրագրի անդամը ստանում է ավելի քիչ, քան լրիվ աշխատավարձ վնասվածքի կամ հիվանդության պատճառով, Քաղաքի ցանկացած կիրառելի հրամանագրի համաձայն, Վերջնական միջին աշխատավարձը հիմնված է աշխատավարձի վրա՝ ներառյալ ցանկացած Ծառայության ստաժի վճարի, Հատուկ վճարի, Հանձնարարության վճարի կամ Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճարի վրա, որը Ծրագրի անդամը կստանար միայն վնասվածքի կամ հիվանդության համար:

Վերջնական միջին աշխատավարձի հաշվարկում ներառված են Ծառայության ստաժի վճարը, Հատուկ վճարը, Հանձնարարության վճարը և Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճարը, որը փաստացի վաստակվել է 24 հաջորդական ամիսների ընթացքում, որոնք օգտագործվում են Վերջնական միջին աշխատավարձը որոշելու համար:

Մակարդակ 6-ի Ծրագրի այն անդամների համար, ովքեր թոշակի են անցնում Հրշեջ բաժանմունքից՝ զբաղեցնելով Կապիտանից ոչ բարձր կոչում կամ Ոստիկանության բաժանմունքից՝ զբաղեցնելով Լեյտենանտից ոչ բարձր կոչում. եթե Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճարը չի վաստակվել 24 հաջորդական ամիսների ամբողջ կամ որևէ մասի ընթացքում, որն օգտագործվում է Վերջնական միջին աշխատավարձը որոշելու համար, վերջին նշանակման դադարեցման պահին վաստակված՝ Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճարի 10%-ին համարժեք գումարը յուրաքանչյուր տարվա համար վտանգավոր պարտականությունների նշանակման համախառն գումարով ավելացվում է Վերջնական միջին աշխատավարձին, որն ընդհանուր առմամբ չպետք է գերազանցի 10 տարին: Վերջնական միջին աշխատավարձում ներառված Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճարի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել այն գումարի 100%-ը, որը Ծրագրի անդամը կվաստակեր, եթե իրավունք ունենար Վտանգավոր պայմաններում աշխատանքի համար վճարի ամբողջ 24 ամսվա ընթացքում, որն օգտագործվում էր Վերջնական միջին աշխատավարձի հաշվարկում:

Հրամանագրով կամ Փոխըմբռնման հուշագրով որպես աշխատավարձ չնշված՝ անդամին արտաժամյա փոխհատուցումը կամ դրամական վճարումները չեն դիտարկվում Վերջնական փոխհատուցումը հաշվարկելու համար:

Եթե մակարդակ 6-ի Ծրագրի անդամը չի լրացրել 24 հաջորդական ամիսների ծառայությունը որպես Ծրագրի անդամ, ապա և միայն այդ դեպքում Վերջնական միջին աշխատավարձը հաշվարկվում է որպես բոլոր հաջորդական ավարտված օրացուցային ամիսների ամսական միջին, և եթե Ծրագրի անդամը որպես Ծրագրի անդամ լրացրել է ընդհանուր ծառայության մեկ ամսից պակաս ժամկետ, փաստացի ստացված աշխատավարձն օգտագործվում է դրա ամսական համարժեքը հաշվարկելու համար:

Անկախ վերը նշվածներից որևէ մեկից՝ եթե թոշակի անցած մակարդակ 6-ի Ծրագրի անդամը վերականգնվի ակտիվ պարտականությունների կատարման համար որպես բաժանմունքի անդամ և այդպիսով նորից դառնա մակարդակ 6-ի Ծրագրի անդամ, և եթե նա նորից թոշակի անցնի կամ աշխատանքից ազատվի առանց իր պարտականությունները կատարելու նման վերականգնումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում, ապա այդ տարին չի ներառի աշխատանքից բացակայելու ժամանակը որևէ վնասվածքի կամ հիվանդության պատճառով, որն առաջացել կամ նպաստել է որևէ վնասվածքի կամ հիվանդության, որը նա ստացել կամ կրել է մինչև այդ վերականգնումը, Վերջնական միջին աշխատավարձը, որը կիրառելի կլինի նրա հետագա թոշակի անցնելու համար, կլինի այն Վերջնական միջին աշխատավարձը, որը կիրառելի է եղել նրա նախկին կենսաթոշակի համար: Եթե Ծրագրի անդամն աշխատել է պահանջվող մեկ տարին նման վերականգնումից հետո, բայց չի լրացրել ծառայության 24 հաջորդական ամիսները վերականգնումից հետո, ապա այդ դեպքում վերջնական միջին աշխատավարձը հաշվարկվում է որպես այդ վերականգնումից հետո ավարտված բոլոր հաջորդական ամիսների ամսական միջին:

Բաժ. 4. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1703-ի Ենթաբաժիններ (a) և (b)-ն փոփոխվել են հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 1703. Քաղաքային խորհրդի լիազորությունը թույլ տալու ոստիկանության անձնակազմին տեղափոխվելու՝ նախկինում երդվյալ Քաղաքապետարանի ծառայություններ ձեռք բերելու համար**:

(a) **Խորհրդի լիազորություն:** 1709 և 1711 Բաժինների համաձայն՝Խորհուրդը սույն բաժնի դրույթներին համապատասխան ընդունված հրամանագրով կարող է թույլատրել ոստիկանության այն անձնակազմին, որը Ոստիկանության բաժանմունք է տեղափոխվել Ընդհանուր ծառայությունների բաժանմունքից և ստանալ կարգավիճակ հետևյալ Դասային ծածկագրերից մեկով՝ 2214, 2217, 2223, 2227, 2232, և 2244՝ նախկինում երդվյալ ծառայությունը Քաղաքում փոխանցելու Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենդաթոշակային համակարգից (LACERS) դեպի մակարդակ 6, երբ նրանք դառնան Ծրագրի անդամներ՝ համաձայն Կանոնադրության և Los Angeles-ի Վարչական օրենսգրքի կիրառելի դրույթների: Անկախ 1702(գ)(դ) Բաժնի դրույթներից՝ փոխանցված ծառայությունը կարող է համարվել որպես Ծառայության տարիներ մակարդակ 6-ի բոլոր նպատակների համար:

(b) **Ծառայությունների ձեռքբերման սահմանափակումներ:** 1709 և 1711 Բաժինների համաձայն՝ նախկին ծառայության փոխանցում թույլատրելու Խորհրդին տրված լիազորությունը հատուկ սահմանափակված է հետևյալով՝

(1) **Գնումները պետք է լինեն ծախսերի մասով չեզոք**: Անդամից պահանջվում է վճարել փոխանցվելիք ծառայության ամբողջական ակտուարական արժեքը, ինչպես սահմանում է Ծրագրի ակտուարը՝ առանց հաշվի առնելու Ծրագրի կողմից կատարված պատահական վարչական ծախսերը՝ կրճատված LACERS-ից փոխանցված ծառայության հետ կապված Ծրագրին փոխանցված ցանկացած միջոցների չափով:

(2) **Միայն որոշակի ծառայություն կարող է փոխանցվել:** Երդվյալ ծառայությունը, որը կարող է փոխանցվել, սահմանափակվում է 3183, 3185, 3188 և 3198 Դասային ծածկագրերով Քաղաքում նախկին ծառայությամբ, որի համար աշխատակիցը կատարել է վճարումներ և ստացել ծառայության ստաժի հաշվանցում LACERS-ում:

Բաժ. 5. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1704-ի Ենթաբաժիններ (a) և (b) փոփոխվել են հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 1704. Քաղաքային խորհրդի լիազորությունը թույլ տալու օդանավակայանի խաղաղապահ անձնակազմին տեղափոխվելու մակարդակ 6 և թույլ տալու անձնակազմին տեղափոխվելու՝ նախկին Քաղաքապետարանի ծառայություններ ձեռք բերելու համար:**

(a) **Խորհրդի լիազորություն:** 1709 և 1713 Բաժինների համաձայն՝ Խորհուրդը սույն բաժնի դրույթներին համապատասխան ընդունված հրամանագրով և համաձայն

Կանոնադրության և Los Angeles-ի Վարչական օրենսգրքի կիրառելի դրույթների՝ կարող է թույլ տալ այն անձին, ով ընդունվել է քաղաքապետարանի ծառայության մինչև 2018 թ. հունվարի 7-ը որպես Օդանավակայանի բաժանմունքի անդամ, ինչպես սահմանված է 1702(d) Բաժնով, դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ՝ Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգում (LACERS) անդամակցության փոխարեն, և փոխանցել ամբողջ նախկին Քաղաքապետարանի ծառայությունները LACERS-ից մակարդակ 6՝ Ծրագրի անդամ դառնալուց հետո, պայմանով, որ այդ անձը շարունակում է կատարել անդամի վճարումներ իր LACERS անդամակցության նկատմամբ կիրառելի դրույքաչափով՝ այնքանով, որքանով պահանջվում է Ներքին եկամուտների օրենսգրքով և ինչպես նկարագրված է 1714(a)(3) Բաժնում: Անկախ 1702~~(e)~~(r) Բաժնի դրույթներից՝ այս բաժնի համաձայն փոխանցված ծառայությունը և Խորհրդի կողմից ընդունված հրամանագրի իրականացումը համարվում է որպես Ծառայության տարիներ մակարդակ 6-ի բոլոր նպատակների համար:

(b) **Ծառայությունների ձեռքբերման սահմանափակումներ:** 1709 և 1713 Բաժինների համաձայն՝ նախկին ծառայության փոխանցում թույլատրելու Խորհրդին տրված լիազորությունը հատուկ սահմանափակված է հետևյալով.

(1) **Գնումները պետք է լինեն ծախսերի մասով չեզոք:** Անդամից պահանջվում է վճարել փոխանցվելիք ծառայության ամբողջական ակտուարական արժեքը, ինչպես սահմանում է Ծրագրի ակտուարը՝ առանց հաշվի առնելու Ծրագրի կողմից կատարված պատահական վարչական ծախսերը՝ կրճատված LACERS-ից փոխանցված ծառայության հետ կապված Ծրագրին փոխանցված ցանկացած միջոցների չափով:

(2) **Ամբողջ նախկին ծառայությունը պետք է փոխանցվի:** Որպես LACERS-ից Ծրագիր տեղափոխվելու ընտրություն կատարելու պայման՝ անդամը պետք է փոխանցի ամբողջ նախկին ծառայությունը LACERS-ից դեպի Ծրագիր, ներառյալ նախկին Քաղաքապետարանի ծառայությունները, որը վաստակել է որպես LACERS-ի անդամ և LACERS-ից ձեռք բերված ցանկացած ծառայություն, և վճարի փոխանցվելիք ամբողջ ծառայության ակտուարական արժեքը, որը որոշվում է Ծրագրի ակտուարի կողմից և համաձայն սույն բաժնին համապատասխան ընդունված հրամանագրի պահանջների:

(3) **Ընտրության և ծառայությունների ձեռքբերումն անդառնալի է:** Մակարդակ 6-ի անդամակցության անդամի ընտրությունը անդառնալի է 2018թ. հունվարի 7-ից հետո: Անդամի համաձայնությունը՝ ձեռք բերելու իր նախկին ծառայությունը, ենթակա չէ վերադարձման: Ո՛չ Խորհուրդը, ո՛չ Վարչությունը իրավունք չունեն չեղյալ համարել կամ վերադարձնել անդամի ընտրությունը կամ ձեռքբերումը կամ թույլատրել փոխանցումներ 2018թ. հունվարի 7-ից հետո:

Բաժ. 6. Los Angeles քաղաքի Կանոնադրությանն ավելացել է նոր Բաժին 1709՝ հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 1709. Քաղաքային խորհրդի լիազորությունը թույլ տալու ոստիկանության, օդանավակայանի, նավահանգստի, հանգստի և զբոսայգիների խաղաղապահ սպաների անձնակազմին տեղափոխվել մակարդակ 6 և պահանջելու ամբողջ նախկին LACERS ծառայության փոխանցումն լրիվ ակտուարական արժեքով:**

(a) **Խորհրդի լիազորությունը թույլ տալու ոստիկանության, օդանավակայանի, նավահանգստի, հանգստի և զբոսայգիների խաղաղապահ սպաների անձնակազմին տեղափոխվել:** Խորհուրդը սույն բաժնի դրույթներին համապատասխան ընդունված հրամանագրով և համաձայն Կանոնադրության և Los Angeles-ի Վարչական օրենսգրքի կիրառելի դրույթների՝ կարող է թույլ տալ անձին, ով ակտիվորեն աշխատում է 2025թ. հունվարի 12-ի դրությամբ, որպես երդվյալ խաղաղապահ սպա Ոստիկանության բաժանմունքի համար, ինչպես սահմանված է 1702(b) Բաժնում, Օդանավակայանների բաժանմունքի համար, ինչպես սահմանված է 1702(d) Բաժնում, Նավահանգստի բաժանմունքի համար, ինչպես սահմանված է 1702(c) Բաժնում կամ Հանգստի և զբոսայգիների բաժանմունքի համար, ինչպես

սահմանված է 1702(e) Բաժնում, դառնալ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ՝ Los Angeles քաղաքի Աշխատակիցների կենսաթոշակային համակարգում (LACERS) անդամակցության փոխարեն, պայմանով, որ այդ անձը փոխանցում է ամբողջ նախկին Քաղաքապետարանի ծառայությունները LACERS-ից մակարդակ 6՝ մակարդակ 6-ի Ծրագրի անդամ դառնալուց հետո, և շարունակում է կատարել մինչև հարկումը անդամի վճարումներ իր LACERS անդամակցության նկատմամբ կիրառելի դրույքաչափով՝ այնքանով, որքանով պահանջվում է Ներքին եկամուտների օրենսգրքով և ինչպես նկարագրված է 1714(a)(3) Բաժնում: Անկախ 1702(r) Բաժնի դրույթներից՝ այս բաժնի համաձայն փոխանցված ծառայությունը և Խորհրդի կողմից ընդունված հրամանագրի իրականացումը համարվում է որպես ծառայության տարիներ մակարդակ 6-ի բոլոր նպատակների համար:

(b) **Քաղաքապետարանի ծառայություններ փոխանցելու պահանջներ:** Անձնակազմին և նախկին Քաղաքապետարանի ծառայությունների փոխանցում թույլատրելու Խորհրդին տրված լիազորությունը հատուկ սահմանափակված է հետևյալով.

(1) **Փոխանցման հետ կապված ծախսեր:** Քաղաքը պարտավոր է վճարել ամբողջ ակտուարական արժեքն անձնակազմի և նախկին Քաղաքապետարանի ծառայության՝ մակարդակ 6 փոխանցման համար, ինչպես որոշված է Ծրագրի ակտուարի կողմից: Ակտուարային արժեքը ներառում է այն ծախսերը, որոնք վերագրվում են նախկին Քաղաքապետարանի ծառայությունների սկզբնական փոխանցմանը, ի լրումն Ծրագրի բոլոր ապագա ծախսերի, որոնք վերագրվում են անդամակցության այս փոխանցմանը: Այս գումարը կկրճատվի LACERS-ից Ծրագիր փոխանցված՝ փոխանցված ծառայության հետ կապված ցանկացած գումարի չափով, որը պետք է ներառի և՛ աշխատակցի, և՛ գործատուի վճարումները, ինչպես նաև աշխատակցի LACERS-ի հաշվին մուտքագրված ցանկացած տոկոս՝ 1162(b) Բաժնով նախատեսված կարգով:

(2) **Ամբողջ նախկին Քաղաքապետարանի ծառայությունը պետք է փոխանցվի:** Որպես LACERS-ից մակարդակ 6 տեղափոխվելու պայման՝ անդամը պետք է տեղափոխի ամբողջ նախկին Քաղաքապետարանի ծառայությունը LACERS-ից մակարդակ 6, ներառյալ նախկին ծառայությունը, որը վաստակվել է որպես LACERS-ի վճարումներ կատարող անդամ, անկախ այդպիսի ծառայության վաստակման պահին կատարված պարտականություններից, և LACERS-ից ձեռք բերված ցանկացած ծառայությունից: Քաղաքապետարանի ծառայությունը, որը նախկինում բացառված էր փոխանցումից՝ համաձայն 1703(b)(2) բաժնի, կփոխանցվի մակարդակ 6՝ համաձայն սույն բաժնի (b)(1) ենթաբաժնում նկարագրված պայմանների:

(3) **Մակարդակ 6 տեղափոխվելու անդառնալի ընտրություն:** Մակարդակ 6 տեղափոխվելու և մակարդակ 6 Անդամի Քաղաքապետարանի ծառայությունը տեղափոխելու անդամի ընտրությունը անդառնալի են 2026թ. հունվարի 11-ից կամ հրամանագրով նախատեսված որևէ այլ ամսաթվից հետո՝ կախված նրանից, թե որ ամսաթիվն է ավելի վաղ: Ո՛չ Խորհուրդը, ո՛չ Վարչությունը իրավասու չեն չեղյալ համարել կամ թույլատրել փոխանցումներ 2026թ. հունվարի 11-ից կամ հրամանագրով նախատեսված որևէ այլ ամսաթվից հետո՝ կախված նրանից, թե որ ամսաթիվն է ավելի վաղ:

(c) **Ընդունման եղանակ:** Սույն բաժնի համաձայն ընդունված հրամանագրերն ընդունվում են նույն ձևով, ինչ նախատեսված է 1618(b) Բաժնով, սակայն գրանցված ակտուարը գրավոր տեղեկացնում է Խորհրդին առաջարկվող փոփոխության ամբողջ ակտուարական արժեքի վերաբերյալ:

Բաժ. 7. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1710-ի Ենթաբաժին (b)-ի (2) ստորաբաժինը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(2) բոլոր վճարումները և նվիրատվությունները Հրշեջ բաժանմունքին, Ոստիկանության բաժանմունքին, Նավահանգստի բաժանմունքին, ~~Օդանավակայանի~~ Օդանավակայանների բաժանմունքին

կամ Հանգստի և զբոսայգիների բաժանմունքին ծառայությունների համար՝ մակարդակ 6-ի ցանկացած Ծրագրի անդամի կողմից՝ բացի դրամական միջոցներից, որոնք նվիրաբերվել են ցանկացած մեդալի կամ մշտական մրցութային մրցանակի տրամադրման համար.

Բաժ. 8. Los Angeles քաղաքի Կանոնադրությանն ավելացել է նոր Բաժին 1711՝ հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 1711. Քաղաքային խորհրդի լիազորությունը՝ վերադարձնելու այն ծախսերը, որոնք վճարվել են Ոստիկանության բաժանմունքի անդամների կողմից, ովքեր նախկինում տեղափոխվել են մակարդակ 6՝ համաձայն Բաժին 1703-ի:**

(a) **Խորհրդի լիազորությունը լիազորել գումարի վերադարձ մակարդակ 6-ի անդամներին:** Խորհուրդը կարող է լիազորել սույն բաժնի դրույթներին համապատասխան ընդունված հրամանագրով և Կանոնադրության և Los Angeles-ի Վարչական օրենսգրքի կիրառելի դրույթների համաձայն՝ 2025թ. հունվարի 12-ին որպես Ոստիկանության բաժանմունքի անդամ ակտիվորեն աշխատող յուրաքանչյուր անդամի գումարի վերադարձ, ով նախկինում տեղափոխվել է մակարդակ 6՝ համաձայն Բաժին 1703-ի, և ձեռք բերել իր նախկին Քաղաքապետարանի ծառայության կամ մակարդակ 6-ի առողջապահական նպաստների ցանկացած մասը՝ համաձայն Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի: Սույն բաժնի նպատակների համար մակարդակ 6-ի այդ Անդամները անվանվում են «մակարդակ 6-ի Որակավորվող անդամ(ներ)»:

(b) **Վերադարձի տրամադրման լիազորության սահմանափակումներ:**

(1) **Ծախսերի չեզոքություն Ծրագրի համար**: Քաղաքից պահանջվում է Ծրագրին վճարել այն չափով, որը ծածկում է վերադարձի ամբողջական արժեքը, որը կտրամադրվի մակարդակ 6-ի Որակավորվող անդամներին՝ համաձայն սույն բաժնին համապատասխան ընդունված ցանկացած հրամանագրի: Քաղաքը կատարում է այս վճարումը՝ նախքան Ծրագրի կողմից ցանկացած գումարի վերադարձ տրամադրելը: Այս վճարումը կարող է կատարվել Ծրագրին Քաղաքի առաջին տարեկան վճարման հետ միաժամանակ, որն անմիջապես հաջորդում է սույն բաժնի համաձայն ընդունված հրամանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին:

(2) **Վճարման աղբյուր և եղանակ:** Ծրագիրը վերադարձնում է մակարդակ 6-ի Որակավորվող անդամին բոլոր այն գումարները, որոնք վճարվել են Քաղաքապետարանի ծառայության կամ մակարդակ 6-ի առողջապահական նպաստների ցանկացած մաս ձեռք բերելու համար՝ համաձայն Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի՝ անկախ նրանից՝ ձեռք են բերվել միանվագ գումարով թե վճարման ծրագրով: Սույն ենթաբաժնի համաձայն թողարկված բոլոր վճարումները կարող են կատարվել նախքան մակարդակ 6-ի Որակավորվող անդամի առանձնացումը Ներքին եկամուտների օրենսգրքին համապատասխան կարգով, կա՛մ որպես փոխարինում, կա՛մ հոգաբարձուից հոգաբարձու փոխանցում, կա՛մ հետհարկային վճարում: Անձնական հարկի ցանկացած հետևանք կրելու է մակարդակ 6-ի Որակավորվող անդամը:

(3) **Առանց տոկոս:** Անկախ 1714 Բաժնում կամ Los Angeles-ի Վարչական օրենսգրքի գոյություն ունեցող դրույթներում հակառակի մասին պնդող որևէ դրույթից՝ Ծրագիրը չպետք է տոկոսներ վճարի սույն բաժնի համաձայն թողարկված որևէ վերադարձի համար, բացի 1714(c) Բաժնի համաձայն հաշվարկված տոկոսներից, որոնք վերագրելի են սույն բաժնի կողմից լիազորված գումարի վերադարձին:

(4) **LACERS անդամի չվերադարձվող գումարներ**: Անկախ Los Angeles-ի Վարչական օրենսգրքի գոյություն ունեցող դրույթներում հակառակի մասին պնդող որևէ դրույթից՝ մակարդակ 6-ի Որակավորվող անդամը չի ստանում գումարի վերադարձ անդամի այն վճարումների համար, որոնք փոխանցվել են LACERS-ից Ծրագրին՝ ձեռք բերելու համար Քաղաքապետարանի ծառայություններ կամ մակարդակ 6-ի առողջապահական նպաստներ:

(5) **Վճարման ծրագրերի դադարեցում:** 2025թ. հունվարի 12-ից սկսած՝ Ծրագրի և մակարդակ 6-ի Որակավորվող անդամի միջև Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի համաձայն կնքված վճարման ցանկացած ծրագիր կդադարեցվի: Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի համաձայն նախկին Քաղաքապետարանի ծառայություն ձեռք բերելու համար մակարդակ 6-ի Որակավորվող անդամի պարտքի ցանկացած չմարված վճարումների մնացորդը կներվի և այլևս վճարման ենթակա չի լինի:

Բաժ. 9. Los Angeles քաղաքի Կանոնադրությանն ավելացել է նոր Բաժին 1713՝ հետևյալ խմբագրությամբ.

**Բաժ. 1713. Քաղաքային խորհրդի լիազորությունը՝ վերադարձնելու այն ծախսերը, որոնք վճարվել են Օդանավակայանի բաժանմունքի անդամների կողմից, ովքեր նախկինում տեղափոխվել են մակարդակ 6՝ համաձայն Բաժին 1704-ի:**

(a) **Խորհրդի լիազորությունը լիազորել գումարի վերադարձ մակարդակ 6-ի անդամներին:** Խորհուրդը կարող է լիազորել սույն բաժնի դրույթներին համապատասխան ընդունված հրամանագրով և Կանոնադրության և Los Angeles-ի Վարչական օրենսգրքի կիրառելի դրույթների համաձայն՝ 2025թ. հունվարի 12-ին որպես Օդանավակայանների բաժանմունքի անդամ ակտիվորեն աշխատող անձի գումարի վերադարձ, ով նախկինում տեղափոխվել է մակարդակ 6՝ համաձայն Բաժին 1704-ի, և ձեռք բերել իր նախկին Քաղաքապետարանի ծառայության կամ մակարդակ 6-ի առողջապահական նպաստների ցանկացած մասը՝ համաձայն Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի: Սույն բաժնի նպատակների համար մակարդակ 6-ի այդ Անդամները անվանվում են «մակարդակ 6-ի Որակավորվող անդամ(ներ)»:

(b) **Վերադարձի տրամադրման լիազորության սահմանափակումներ:**

(1) **Ծախսերի չեզոքություն Ծրագրի համար**: Քաղաքից պահանջվում է Ծրագրին վճարել այն չափով, որը ծածկում է վերադարձի ամբողջական արժեքը, որը կտրամադրվի մակարդակ 6-ի Որակավորվող անդամներին՝ համաձայն սույն բաժնին համապատասխան ընդունված ցանկացած հրամանագրի: Քաղաքը կատարում է այս վճարումը՝ նախքան Ծրագրի կողմից ցանկացած գումարի վերադարձ տրամադրելը, և այն կարող է կատարվել Ծրագրին Քաղաքի առաջին տարեկան վճարման հետ միաժամանակ, որն անմիջապես հաջորդում է սույն բաժնի համաձայն ընդունված հրամանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին:

(2) **Վճարման աղբյուր և եղանակ:** Անկախ 1704(b)(3) Բաժնում հակառակի մասին պնդող որևէ դրույթից՝ Ծրագիրը վերադարձնում է մակարդակ 6-ի Որակավորվող անդամին բոլոր այն գումարները, որոնք վճարվել են Քաղաքապետարանի ծառայության կամ մակարդակ 6-ի առողջապահական նպաստների ցանկացած մաս ձեռք բերելու համար՝ համաձայն Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի՝ անկախ նրանից՝ ձեռք են բերվել միանվագ գումարով թե վճարման ծրագրով: Սույն ենթաբաժնի համաձայն թողարկված բոլոր վճարումները կատարվում են նախքան մակարդակ 6-ի Որակավորվող անդամի առանձնացումը Ներքին եկամուտների օրենսգրքին համապատասխան կարգով, կա՛մ որպես փոխարինում, կա՛մ հոգաբարձուից հոգաբարձու փոխանցում, կա՛մ հետհարկային վճարում: Անձնական հարկի ցանկացած հետևանք կրելու է մակարդակ 6-ի Որակավորվող անդամը:

(3) **Առանց տոկոս:** Անկախ 1714 Բաժնում կամ Los Angeles-ի Վարչական օրենսգրքի գոյություն ունեցող դրույթներում հակառակի մասին պնդող որևէ դրույթից՝ Ծրագիրը չպետք է տոկոսներ վճարի սույն բաժնի համաձայն թողարկված որևէ վերադարձի համար, բացի 1714(c) Բաժնի համաձայն հաշվարկված տոկոսներից, որոնք վերագրելի են սույն բաժնի կողմից լիազորված գումարի վերադարձին:

(4) **Վճարման ծրագրերի դադարեցում**: 2025թ. հունվարի 12-ից սկսած՝ Ծրագրի և մակարդակ 6-ի Որակավորվող անդամի միջև Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի համաձայն կնքված վճարման ցանկացած ծրագիր կդադարեցվի: Los Angeles-ի Վարչական օրենսգրքի որևէ գործող դրույթի համաձայն նախկին Քաղաքապետարանի ծառայություն ձեռք բերելու համար մակարդակ 6-ի Որակավորվող անդամի պարտքի

ցանկացած չմարված վճարումների մնացորդը կներվի և այլևս վճարման ենթակա չի լինի:

Բաժ. 10. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1714-ի Ենթաբաժին (a)-ի (3) ստորաբաժինը փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(3) *Ներքին եկամուտների օրենսգրքի պահանջներ՝ LACERS-ից տեղափոխված անդամների կողմից կատարվող վճարումների համար՝ համաձայն Բաժիններ* 1703, 1704, կամ 1709-ի: Անկախ հակառակի մասին պնդող՝ (a) ենթաբաժնի որևէ դրույթի՝ մակարդակ 6-ի Ծրագրի այն անդամը, ով ընտրել է տեղափոխվել Ծրագիր ~~և ձեռք բերել իր LACERS-ի նախկին ծառայությունը~~՝ համաձայն Կանոնադրության բաժիններ 1703, 1704 կամ 1709-ի և հրամանագրերի, որոնք ընդունվել են դրանց համապատասխան, շարունակում է անդամի վճարումներ կատարել իր LACERS անդամակցության նկատմամբ կիրառելի դրույքաչափով՝ այնքանով, որքանով պահանջվում է Ներքին եկամուտների օրենսգրքով, սակայն, պայմանով, որ. (i) եթե այս ենթաբաժին (a)-ն այլ կերպ կպահանջի անդամի կողմից անդամի լրացուցիչ վճարումներ, անդամի կողմից այդ լրացուցիչ վճարումները պետք է կատարվեն հարկումից հետո հիմունքով՝ Ներքին եկամուտների օրենսգրքով պահանջվող չափով. և (ii) այնուհետև, եթե այս ենթաբաժին (a)-ն այլ կերպ կպահանջի անդամի վճարումներ անդամի LACERS անդամակցության նկատմամբ կիրառելի դրույքաչափից ավելի ցածր դրույքաչափով, խորհուրդը կարող է սույն բաժնի դրույթների համաձայն ընդունված հրամանագրով, և Կանոնադրության և Los Angeles-ի Վարչական օրենսգրքի կիրառելի դրույթների համաձայն՝ նախատեսել ավելի մեծ անուիտետային նպաստ կենսաթոշակի անցնելու պահին նման անդամի համար՝ արտացոլելու լրացուցիչ վճարումների գումարները, ինչպես որոշված է ակտուարի կողմից և ենթակա է Ներքին եկամուտների օրենսգրքի բոլոր սահմանափակումներին:

Բաժ. 11. Los Angeles քաղաքի Կանոնադրության Բաժին 1714-ի Ենթաբաժին (g) փոփոխվել է հետևյալ խմբագրությամբ.

(g) **Անդամների ամբողջական վճարումների ապահովում:** Վարչությունը պետք է ունենա կանոններ սահմանելու իրավասություն՝ ապահովելու, որ Հրշեջ և Ոստիկանության կենսաթոշակային ծրագիրը՝ մակարդակ 6, ստանա անդամների վճարումները հաշվանցված ծառայության բոլոր ժամանակահատվածների համար՝ բացառությամբ նրա, որ Վարչությունը լիազորություն չունի պահանջելու վճարումներ զինվորական ծառայության համար ծառայողական ստաժի հաշվանցման համար, ինչպես նաև այն ժամանակահատվածների համար, երբ մակարդակ 6-ի Ծրագրի անդամը ստանում է հաշմանդամության կենսաթոշակ կամ լրիվ վարձատրություն պարտականությունների Կատարման ժամանակ վնասվածք ստանալու համար: Մակարդակ 6-ի Ծրագրի անդամներն, այնուամենայնիվ, կարող են ընտրել վճարումներ կատարել պարտականությունների Կատարման ժամանակ վնասվածք ստանալու ժամանակահատվածների համար, որոնք փոխհատուցվում են ընդհանուր օրենքով նախատեսված դրույքաչափով՝ նման ժամանակահատվածի համար Ծառայության տարիների համար հաշվանցում ձեռք բերելու համար: Նման վճարումները սույնով նախատեսված վճարումների դրույքաչափով են և հիմնված են այն աշխատավարձի վրա, որը կստանար Ծրագրի անդամը, եթե ունենար «Վնասվածք պարտականությունների Կատարման ժամանակ» կարգավիճակ:

Բաժ. 12. Եթե սույն Կանոնադրության փոփոխության որևէ բաժին, կետ, նախադասություն, արտահայտություն կամ մաս հակասահմանադրական կամ անվավեր է ճանաչվում համապատասխան իրավասու շրջանի որևէ դատարանի կամ ատյանի կողմից, ապա սույն հոդվածի մնացած բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածներն ամբողջությամբ և լիիրավ ուժի մեջ կմնան, և այդ նպատակով սույն հոդվածի դրույթները բաժանելի են: Ի լրումն ընտրողները հայտարարում են, որ նրանք անցած կլինեին այս Կանոնադրության փոփոխության բոլոր բաժինները, կետերը, նախադասությունները, արտահայտությունները կամ հատվածները՝ առանց բաժնի, կետի, նախադասության, արտահայտության կամ հատվածի հակասահմանադրական կամ անվավեր համարվելու:

# Ընտրողների Իրավունքների Նախագիծը

## ԴՈՒՔ ՈՒՆԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. **Քվեարկելու իրավունք, եթե դուք գրանցված ընտրող եք:** Դուք քվեարկելու իրավունք ունեք, եթե՝
   - ★ Կալիֆորնիայում ապրող ԱՄՆ քաղաքացի եք
   - ★ առնվազն 18 տարեկան եք
   - ★ գրանցված եք այնտեղ, որտեղ ներկայումս ապրում եք
   - ★ Ներկայումս քրեական հանցանքի համար նահանգային կամ ֆեդերալ մակարդակով դատապարտված չեք ազատազրկման և
   - ★ ներկայումս դատարանի կողմից քվեարկման համար ճանաչված չեք անգործունակ

2. **Քվեի իրավունքը, եթե դուք գրանցված ընտրող եք, նույնիսկ եթե Ձեր անունը չկա ցուցակում:**
   Դուք քվեարկելու եք պայմանական քվեաթերթիկով: Ձեր քվեն հաշվի կառնվի, եթե ընտրական հանձնաժողովի անդամները որոշեն, որ Դուք քվեարկելու իրավունք ունեք:

3. **Քվեի իրավունքը, եթե ընտրատեղամասերը փակվելիս Դուք դեռ հերթի մեջ եք:**

4. **Գաղտնի քվեարկության իրավունք՝** առանց Ձեզ որևէ մեկի անհանգստացնելու կամ ասելու, թե ինչպես քվեարկեք:

5. **Նոր քվեաթերթիկ ստանալու իրավունքը,** եթե Դուք, դեռևս չքվեարկած, սխալ եք թույլ տվել: Դուք կարող եք՝
   **Ընտրատեղամասում ընտրական հանձնաժողովի անդամին խնդրել՝** ստանալու նոր քվեաթերթիկ
   **Փոխարինեք Ձեր հեռակա քվեարկման քվեաթերթիկը** նորով ընտրական բյուրոյում կամ Ձեր ընտրատեղամասում կամ
   **Քվեարկեք պայմանական քվեաթերթիկով:**

6. **Քվեարկության ժամանակ** ցանկացածից օգնություն ստանալու իրավունքը՝ բացառությամբ ձեր գործատուի կամ արհմիության ներկայացուցչի:

7. Կալիֆորնիայի **ցանկացած ընտրական տեղամասում հեռակա քվեարկման Ձեր լրացրած քվեաթերթիկից հրաժարվելու իրավունքը:**

8. **Այլ լեզվով ընտրական նյութեր ստանալու իրավունքը,** եթե Ձեր քվեարկության տեղամասում շատերը խոսում են այդ լեզվով:

9. **Ընտրական հանձնաժողովի անդամներին ընտրությունների ընթացակարգերի վերաբերյալ հարցեր ուղղելու** և ընտրությունների ընթացքը դիտելու իրավունքը: Եթե այն անձը, ում Դուք հարց եք ուղղել, չի կարող պատասխանել Ձեր հարցին, նա պետք է Ձեզ ուղարկի այն անձի մոտ, ով կարող է պատասխանել Ձեր հարցին: Ձեր կողմից ճնշում գործադրելու դեպքում նրանք կարող են Ձեզ չպատասխանել:

10. **Ցանկացած անօրինական կամ կեղծ ընտրական գործունեության վերաբերյալ զեկուցելու իրավունքը** ընտրական հանձնաժողովի անդամին կամ նահանգային բյուրոյի քարտուղարին:

**Եթե կարծում եք, որ նշված որևէ իրավունք ոտնահարվել է,** զանգահարեք նահանգային ընտրողների հարցերով քարտուղարի գաղտնի անվճար թեժ գիծ (800) 345-VOTE (8683) հեռախոսահամարով:

**www.sos.ca.gov** կայքում

**(800) 345-VOTE (8683)** հեռախոսահամարով

**elections@sos.ca.gov** էլ փոստով

# Տեղեկատվություն հատուկ կարիքներով քվեարկողների համար

**Հասանելիություն և այլ օժանդակ սարքեր**

**(800) 815-2666, ընտրանք 4 (LA վարչաշրջանի թեժ գիծ)**

LA վարչաշրջանի քվեարկության կենտրոններն ապահովում են հաշմանդամի սայլակների համար հասանելիություն և/կամ մայթեզրի քվեարկություն: Քվեարկության կենտրոնի ներսում դուք կարող եք գտնել սարքեր, որոնք կօգնեն ձեզ քվեարկել:

**Աուդիո ձայնագրություններ (213) 978-0444**
Ձայնային սարքավորումները հասանելի են ձեր քվեարկության կենտրոններում՝ ձեզ օգնելու համար:

Այս գրքույկում ներառված օրենսդրական նախագծերի ձայնագրությունները հասանելի են անգլերեն, հայերեն, չինարեն, ֆարսի, հինդի, ճապոներեն, քմերերեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալերեն, թայերեն և վիետնամերեն: Այս ձայնագրությունները հասանելի են մեր կայքում՝ clerk.lacity.gov/elections/multilingual-services ինչպես նաև հետևյալ վայրերում՝

Braille Institute Library
741 North Vermont Avenue
Los Angeles, CA 90029
(323) 660-3880

Central Library
630 West 5th Street
Los Angeles, CA 90071
(213) 228-7000

Քվեարկողները կարող են նաև պահանջել ձայնագրությունների պատճենը մեր գրասենյակից.

Office of the City Clerk-Election Division
Attn: Audio Recordings
555 Ramirez Street, Space 300
Los Angeles, CA 90012

**TTD հեռախոսահամար (562) 462-2259**
Լսողության խանգարումներ ունեցող քվեարկողների համար տրամադրվում է TTD հեռախոսահամար:

**Լեզվային աջակցություն (213) 978-0444**
Քաղաքապետարանը նաև տրամադրում է քվեարկության նյութեր հայերեն, չինարեն, ֆարսի, հինդի, ճապոներեն, քմերերեն, կորեերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալերեն, թայերեն և վիետնամերեն լեզուներով:

# Առաջնորդեք կամ անդամակցեք Ձեր Թաղամասային խորհրդին

Թաղամասային խորհուրդները հանդիսանում են Los Angeles-ի քաղաքապետարանի ստորին օղակը: Դուք կարող եք.

- Խորհուրդ տալ քաղաքապետարանի ղեկավար անձնակազմին տեղական կարևոր հարցերի վերաբերյալ:
- Լինել նույնքան արդյունավետ, որքան ամենահզոր լոբբիստները:
- Առաջնահերթություններ սահմանել համայնքի բարելավման ծրագրերի համար:
- Վերահսկել և բարելավել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ փողոցների և մայթերի վերանորոգումը, հանցագործության դեմ պայքարը և երթևեկության կառավարումը:
- Որոշել, թե ինչպես պետք է Ձեր Թաղամասային խորհուրդը օգտագործի տարեկան գործառնական բյուջեն:

LA-ի՝ թվով 99 Թաղամասային խորհուրդները ծառայում են բոլոր նրանց, ովքեր ապրում, աշխատում, սովորում, երկրպագում են, ունեն սեփականություն կամ բիզնես կամ աշխատում են իրենց համայնքում սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպություններում:

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ

Այցելեք www.99NCs.com՝ գտնելու Ձեր Թաղամասային խորհուրդը և պարզելու, թե ինչպես ներգրավվել 2025 թ. գալիք Թաղամասային խորհրդի ընտրություններում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել էլ. փոստի կամ հեռախոսի միջոցով՝ EmpowerLA@LAcity.org
(213) 978-1551 (9:00 - 17:00 / երկուշաբթիից ուրբաթ)

Department of Neighborhood Empowerment
200 North Spring Street, Room 2005,Los Angeles, CA 90012
www.EmpowerLA.org




**2024 թվականի հոկտեմբերի 7**

- Los Angeles վարչաշրջան Գրանցող-Արձանագրություն պահող/Վարչաշրջանի քարտուղարի գրասենյակը կսկսի ուղարկել փոստային քվեարկության քվեաթերթիկները այս ամսաթվից սկսած կամ մինչև դա:
- Փոստով քվեարկման քվեատուփերը բաց են:

**2024 թվականի հոկտեմբերի 21**

Քվեարկության համար գրանցվելու վերջնաժամկետ (նույն օրը ընտրողների գրանցումը դեռ հասանելի է պայմանական քվեարկության համար)

**Նոյեմբերի 5, 2024 թ.**

Ընտրության օր

Քվեարկության կենտրոնները բացվում են առավոտյան 7:00-ին և փակվում երեկոյան 20:00-ին:

# Ձեր քվեարկության եղանակները

## ՔՎԵԱՐԿՈՒՄ ՓՈՍՏՈՎ

- Վերադարձը՝ փոստով
  - Պետք է փակցվի փոստի կնիքով մինչև Ընտրության օրը և ստացվի 7 օրվա ընթացքում
- Թողնելը
  - Քվեատուփի վայրում
  - LA վարչաշրջանի քվեարկության կենտրոնում

**Հիշե՛ք, որ պետք է ՍՏՈՐԱԳՐԵԼ ձեր փոստով քվեարկման ծրարի հետևի մասում:**

## ՔՎԵԱՐԿՈՒՄ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

- Քվեարկեք անձամբ
- Թողեք Ձեր փոստով քվեարկելու քվեաթերթիկը

## ՍԿԱՆԱՎՈՐԵՔ՝ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԺԱՄԵՐԸ ԵՎ ՎԱՅՐԵՐԸ

ՍԿԱՆԱՎՈՐԵ՛Ք ԱՅՍՏԵՂ

կամ այցելեք՝ locator.lavote.gov/locations/vc

## Վաղ քվեարկե՛ք:
## Քվեարկության կենտրոնները բացվում են 2024 թվականի հոկտեմբերի 26-ին

# Քվեարկողի գրառումները

**Ընտրությունների օրը երեքշաբթի է, նոյեմբերի 5-ին**

# Քվեարկողի գրառումները

**Ընտրությունների օրը երեքշաբթի է, նոյեմբերի 5-ին**

# Քվեարկողի գրառումները

**Ընտրությունների օրը երեքշաբթի է, նոյեմբերի 5-ին**

# Քվեարկողի գրառումները

**Ընտրությունների օրը երեքշաբթի է, նոյեմբերի 5-ին**

**OFFICE OF THE CITY CLERK**
**ELECTION DIVISION**
**555 RAMIREZ STREET**
**SPACE 300**
**LOS ANGELES, CA 90012**

NON PROFIT ORG.
U.S. POSTAGE
**PAID**
CITY OF LOS ANGELES
ELECTION DIVISION

OFFICIAL ELECTION MAIL®
*Authorized by the U.S. Postal Service*